Ոտիս Արարատ

Թիվ 1 (17), հունիս - սեպտեմբեր, 2009թ.

Հայ-թուրքական հարաբերություններ չկան և չեն էլ կարող լինել: Եղածը 1915-1923 թթ. մարդկության դեմ կատարված հանցագործություն է...

Քարվաճառ

Մենք համոզված ենք, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացն ավարտված է: Բոլոր այն երկրներն ու ժողովուրդները, որոնք իրենց խորհրդարաններում ճանաչել ու դատապարտել են 20-րդ դարի առաջին մեծ հանցագործությունը, կարող են լինել քաղաքակիրթ աշխարհի անբաժան մասը, քանի որ նրանք իրականում ճանաչեցին ու դատապարտեցին մարդկության դեմ ուղղված հանցագործությունը, ցեղասպանության ոճիրը: Մյուս երկրները, այդ թվում, առաջին հերթին Անգլիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ճապոնիան, ինչպես նաև Իսրայել պետությունը՝ այս հարցում ուշացել են, այդպիսով հաստատելով, որ միջազգային հարաբերություններում շարունակում են դավանել պատերազմի, ագրեսիայի, ցեղասպանության՝ քարոզչության, ծրագրման և իրականացման մարտավարություն: Այդ հարցում, անհուսալիորեն և ամոթալի կերպով ուշացել են իսլամական աշխարհի այն երկրները, Լիբանանից բացի, որոնք՝ իրենք, ժամանակ առ ժամանակ հայտնվում են պատերազմի, ագրեսիայի ու ցեղասպանության ճիրաններում:


Գառնի

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Աշխարհի գլոբացման և եվրո-ինտեգրման ռազմաքաղաքական ձեռագիրը	էջ 1-3	
«Գուգլի» քարտեզները և Ռալֆ Պիտերսի «Միջին Արևելքի նոր քարտեզը»	էջ 4-7	
Երկու խոսք Րաֆֆու «Փախուստի ճանապարհը», «Քրդական միություն», «Հայդուկներ» հոդվածների մասին	էջ 8-9	
Հայկական հարցի իրական երեսը, Արևմուտքի 130-ամյա համառումի բուն իրողությունը	էջ 9-10	
Րաֆֆի. «Փախուստի ճանապարհը» (1880 թ.)	էջ 10-11	
Ինչո՞ւ, ե՞րբ և ո՞ւմ կողմից շրջանառության մեջ դրվեց «Քրդական միություն», «քրդական գավառ», «Քրդստան» հասկացությունները... Ո՞րն է դրանցում երևութականը, և որը՝ իրականը, բուն խնդիրը:	էջ 12	
Րաֆֆի. «Քրդական միություն» (1880 թ.)	էջ 12-21	
Հայ ժողովրդի ինքնապաշտպանության բնական, նաև միջազգային իրավունքի մասին	էջ 22	
Րաֆֆի. «Հայդուգներ» (1892 թ.)	էջ 23-24	
Աբդուլ Համիդ 2-րդ, Հայկական առաջին մեծ կոտորածների կազմակերպիչը	էջ 25	
Ալբանական լիգա: Արևելյան հարց	էջ 26	
Քրդերի բնակեցում Ադրբեջանում. ո՞վ է անում, ի՞նչ նպատակով...	էջ 27	Ջեմմա Բաղդադյան
Հարավկովկասյան կոնֆեդերացիան կարող է դառնալ Հարավային Կովկասի այցետոմսը Եվրոմիություն	էջ 28-29	
Հանցագործ ծրագրերի ժամանակակից դրսևորումները	էջ 30	
Քրդական հարցը և Լեռնային Ղարաբաղը	էջ 30-31	
Ազատագրական պայքարի էջերից	էջ 32	
Հայտարարություն	էջ 32	
Հայտարարություն (թիվ 7)	էջ 33	
Ամելէ Թապուրէճ միևչեւ ՆԸճՄէ- աստղ մակնիշը. Քեռիիս 74-ամեակին առթիւ	էջ34-35	Զարմինէ Պօղոսեան
Ադանա	էջ 36	Ջեմմա Բաղդադյան

Քարվաճառի լուսանկարը՝ Սամվել Կարապետյանի,
Գառնիի լուսանկարը՝ Հարություն Ստեփանյանի

Լրատվական գործունեություն իրականացնող «Ուխտ Արարատի» ՍՊԸ, հասցեն Կասյան 6/19, վկայական N-03A 069706, տրված 12.10.2005թ.

Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ

Համարի թողարկման պատասխանատու՝ Տիգրան Փաշաբեզյան

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» տպարանում, ստորագրվել է պագրության՝ 11.05.2009

Խմբագրության հասցեն՝ 375010, Երևան, Ագաթանգեղոսի 7բ
Հեռ. (37410) 52-51-90

Official periodical of "Oukht Ararati" LTD

EDITORIAL BOARD
Responsible of the issue: Tigran Pashabezyan

Address: 375010, Yerevan, Agatangeghos 7b
Tel. (37410) 52-51-90
E-mail: oukhtararadi@yahoo.com
www.oukhtararati.com

Գինը՝ 300 դրամ

«Ուխտ Արարատի» ամսագրից նյութեր արտատպելիս՝ խնդրում ենք հղում կատարել:

Հարգելով հեղինակային իրավունքը՝ ստացված հոդվածները չենք խմբագրում:

ԱՇԽԱՐՀԻ ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ԵՎ ԵՎՐՈ-ԻՆՏԵԳՐՄԱՆ ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐԸ

1. Աշխարհի գլոբալացման արևմտյան ձեռագիրը: Վերջին 21 տարիներին աշխարհի տարբեր երկրներում ու տարածքներում արևմտյան գլոբալացման և եվրո-ինտեգրման քաղաքական գործընթացները դրսևորում են ծրագրի իրագործման ձեռագրի հիմնական հետևյալ դրույթները. սահմանադրական-օրենսդրական ագրեսիաներ, ցեղասպանության քարոզչություն, նոր դիմակայությունների քաջալերում, ազգամիջյան ատելության սերմանում, ազգամիջյան հակամարտությունների ու պատերազմների հրահրում, ինչպես նաև ահաբեկչական գործողությունների և արհեստական ճգնաժամերի միջոցով՝ հումանիտար աղետների ստեղծում՝ «ազատագրման» ենթակա կամ «ժողովրդավարացման» թիրախ երկրներում ու տարածքներում: Դա արվում է հաճախ նույն այդ երկրների ղեկավարների թողտվությամբ կամ մասնակցությամբ, ընդդեմ՝ սեփական ժողովրդի ու երկրի շահերի: Համաշխարհային ֆինանսա-տնտեսական արհեստածին ճգնաժամը համընդհանուր գործընթացի իրագործման մեկ փուլն է միայն, որի միջոցով ագրեսիայի ենթարկված երկրներին ու ժողովուրդներին բուն աղետը ներկայացվում է, որպես համաշխարհային ճգնաժամի բնական հետևանք: Անշո՛ւշտ, ավելի ճիշտ կլիներ խոսել համաշխարհային պատմամշակութային և բարոյա-հոգևոր ճգնաժամի մասին, որպես հետևանք համաշխարհային իրավական ճգնաժամի, որը սկզբնավորվեց 1985-ի պերեստոյկայով, հրահրվեց 1988-ի «Ղարաբաղյան կոնֆլիկտով» և, հատկապես, բուռն ընթացքի մեջ դրվեց 2001-ի սեպտեմբերի 11-ով:

Սա է գլոբալացման գործելաոճը: Մարդկության դեմ կատարվող հանցագործության՝ ցեղասպանության կոնվենցիային լիովին համապատասխանող գործողություն, որի մասշտաբը դուրս է եկել առանձին երկրի շրջանակից և կրում է կոնվենցիայի բուն անունի իրողությունը, այն է՝ ոճրագործություն, որը կարող է ծավալվել ու ներառել համայն մարդկությունը: Եվրո-ամերիկյան գերտերությունները նույն ձեռագրով գնացին իրենց երկրների ժողովուրդների նկատմամբ, որոնք դեռևս մնում են բարոյա-հոգևոր, մշակութային հալածանքների ու ջախջախումների ոլորտում: Նույն վայրագ ձեռագիրը 1960-ականներից գործեց աֆրիկյան մայրցամաքում, 1970-ականներից՝ Մերձավոր Արևելքի ու Լատինական Ամերիկայի երկրներում: Այնպես որ, առկա է համաշխարհային մեծ աղետի թափանիվի պտույտը և ճշմարիտ է, որ այս հանցագործ գործընթացներն ունեն համաշխարհային բնույթ, ինչպես նշում են նաև առանձին արևմտյան վերլուծաբաններ, ուստի պայքարը դրա դեմ պետք է կրի համամարդկային՝ համաշխարհային բնույթ. ինքնակազմակերպվող և ուղղորդված հենց արևմտյան գերտերությունների ու համաշխարհային ստվերային իշխանությունների առաջադրած ծրագրի դեմ:

Համաշխարհային այս նոր «Սոդոմ Գոմորի» կազմակերպիչները, հույսը դնելով ամերիկյան փող տպող մեքենայի ու զինուժի վրա, ընկել են մի շատ լուրջ մոլորության մեջ. իրենց վեր են դասում բնությունից, Աստծուց և հավակնում են որոշել ինչպես համայն մարդկության, այնպես էլ առանձին ազգերի ճակատագրերը, որն, իրականում, իրենց գործը չէ բնավ... Նրանց մտածողությանը հասու չէ ճանաչել մարդու, մարդկային աշխարհի, աշխարհի բնականությունը, որ գալու ու դրսևորվելու է որպես բնության պատասխան հարված համաշխարհային քաղաքակրթական մեծ ջրհեղեղի ձևով և սրբելու է աշխարհի երեսին կուտակված հակամարդկային ողջ աղբը, աղտեղությունը: Բարին ու բարոյականը պետք է հաղթեն: Սա է Մարդկային աշխարհի բնության օրենքը: Հնից՝ հին, նորից՝ նոր, միակ ճշմարիտը՝ հիմնական իրողությունը: Բնությունը մարդուն տվել է բանականություն, մտածելու, խորհելու և, ըստ այդմ, ընտրելու իրավունք: Միջազգային և ներպետական քրեահրավական օրենքները չէ որ պատժում են հանցագործին, օրենքը ամեն մի անհատի ու կազմակերպության տալիս է ընտրություն կատարելու իրավունք, ամեն անհատ կամ ներպետական ու միջազգային կազմավորում ինքն է ընտրում, ըստ այդմ՝ կանխորոշելով պատիժը…

-Աշխարհի միակենտրոն կառավարման՝ գլոբալացման, քաղաքականության ֆինանսավորման աղբյուրները: Դրանք են՝ ԱՄՆ-ի «ֆեդերալ ռեզերվ բանկի» փող տպող մեքենան, Արևմուտքի հսկողության տակ գտնվող համաշխարհային թմրաբիզնեսը, ՄԱԿ-ի ֆինանսական կառույցները՝ Համաշխարհային բանկը, Միջազգային արժութային հիմնադրամը: Փաստորեն, սրանք ցույց են տալիս համաշխարհային այս հանցագործության ձեռագիրը: Հսկայական քանակությամբ տպված թղթադրամը՝ դոլարը, ֆինանսավորում է արևմտյան ռազմա-քաղաքական հայտնի ու անհայտ բոլոր ծրագրերը: Սակայն հարց է ծագում, ո՞ւմ հաշվին: Իհարկե, աշխարհի բոլոր երկրների հաշվին, որոնց, ի վերջո, պարտք կմնա Ամերիկայի Միացյալ Նահանգները՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներ ընդհանուր պետություն կազմի մեջ մտնելիս: Զգալի միջոցներ են գոյանում թմրաբիզնեսի հաշվին, որի ձևավորման գործընթացում ինքնաոչնչացման են տարվում եվրո-ամերիկյան ալյանսի թմրաբիզնեսի «պլանտացիա երկրները», ինչպես օրինակ՝ Աֆղանստանը: Նորություն չէ, որ վերջին 40 տարիներին Աֆղանստանի ժողովրդի ապրուստի միակ միջոցը թմրադեղ աճեցնելն է: Որն ի դեպ, տեղափոխվում է նաև Եվրոպա՝ ապուշացնելու ու հիմարացնելու եվրոպական երկրների ժողովուրդներին, որպեսզի նրանք ևս, առանց ցավի ու առանց գիտակցության գալու, գնան ինքնաստրկացման:

Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի ֆինանսական միջոցներին, որոնք կուտակվում են անդամ երկրների ներդրումով, ապա դրանք ևս օգտագործվում են հենց նույն երկրների ու աշխարհի ժողովուրդներ դեմ: Այսօրինակ այլանդակություն, ցինիզմ, երևի թե, մարդկության պատմության մեջ առաջին անգամ է գրանցվում: Խնդիր, որի դեմ մեկ առանձին երկիր չի կարող պայքարել, եթե երկրները չմիավորվեն հակազդելու այս այլանդակությանը, առավել ևս համաշխարհային տնտեսական արհեստածին ճգնաժամի պայմաններում:

-Արևմուտքի շտապողականության հիմքերը, դադար առնելու ստիպողականությունը… ԱՄՆ-ն մտցրեց իր ճշգրտումները: ԱՄՆ-ն որոշեց չշարունակել Բուշի ծրագիրը և երկիրը հանել ինքնալուծարման ճանապարհից: Կարծում ենք, պրո-ամերիկյան մտածողությունը կարողացել է համոզել, որ արագ թափով Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներ սարքելու շտապողականությունը կարող է խոչընդոտել աշխարհի միացյալ կառավարմանը շուտով իսկ անցնելու ծրագրին, քանի որ, թե՛ Մերձավոր Արևելյան, և թե՛ Աֆրիկյան ծրագրերը ժամանակացույցից բավականին հետ ընկան, իսկ ԱՄՆ-ին խաղից հանելու դեպքում հնարավոր է, որ նշված տարածքներում գործընթացը ուղղորդվի դրական հուն և դուրս գա արևմտյան հսկողությունից: Կարծում ենք, որ համոզել են նաև Ռուսաստանին՝ ինքնամեկուսանալ և չխանգարել համաշխարհային այդ գործընթացին: Ինչպես և Չինաստանին Ռուսաստանից անջատելու համար

անհրաժեշտ են տեսել ռուս-ամերիկյան բարեկամական գործընթացներ ձևացնել, որոնց միջոցով ակնկալում են մեկուսացնել Չինաստանը, ապա Հնդկաստանը, որը Պակիստանից հետո հաջորդ թիրախն է: Կորեան, ճիշտ ինչպես 1950-ական թթ., կդարձնեն իբրև թե հույժ կարևոր բանակցությունների առարկա՝ ռուս-ամերիկյան հարաբերություններում: Վտանգավորն այն է, սակայն, որ կարծես թե՝ Ռուսաստանը դեմ չէ այդ ծրագրերին:

-Համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում հանցագործություն իրականացնելու գինը: ԱՄՆ-ն արել է իր առաջարկը: Թուրքիան սակարկում է, քանի որ ռազմական գործողությունների գինը, ինչպես երևում է, համաձայնեցված չէ: Իսկ դա լուրջ հարց է, այլապես ամերիկյան բանակը ինքը կշարունակեր կռվել Իրաքում, Աֆղանստանում, Պակիստանում… Եվրոպան չի կարող վճարել, քանի որ եվրոն կվտանգվի, ԱՄՆ-ը չի կարող վճարել, քանի որ դրված է դոլարը փրկելու խնդիրը, մնում են Ռուսաստանը և ռուսական ռուբլին, ինչն էլ երևի եղել G 20-ի Լոնդոնում կայացած խորհրդակցությունների հիմնական թեմաներից մեկը: Այստեղից է ծագում նաև ռեգիոնալ տարադրամ շրջանառության մեջ դնելու հարցը: Դա սկզբում գրավիչ է թվում, բայց հաշվի առնելով ԱՄՆ-ի իրաք-աֆղանական փորձը՝ կարելի է ենթադրել, որ սկզբում ռուբլին կհայտնվի ռիսկերի գոտում, իսկ հետո կսկսվի ռուբլու և ՌԴ-ի տնտեսության փլուզումը, ինչն էլ կարող է լինել արևմտյան ծրագրի, առաժմ ոչ այնքան տեսանելի՝ երկրորդ փուլը:

Վերջինիս օգտին է խոսում. «1959թ. հուլիսի 17-ին ԱՄՆ Կոնգրեսի երկու պալատների ընդունած և ԱՄՆ նախագահ Դ. Էյզենհաուերի ստորագրած օրենքը, որ գործում է մինչև օրս: Որպես «ազատագրման» օբյեկտներ՝ «86-90 օրենքի» տեքստում թվարկված են **Լեհաստանը, Հունգարիան, Չեխոսլովակիան, Ռումինիան, Բուլղարիան, Լիտվան, Լատվիան, Էստոնիան** (այս երկրներն արդեն իսկ ընգրկված են ՆԱՏՕ-ի ընդլայնման առաջին և երկրորդ ալիքներում), **Հյուսիսային Վիետնամը, Հյուսիսային Կորեան, Ալբանիան և մյուսները, Վրաստանը, Ադրբեջանը, Հայաստանը, Ուկրաինան, Բելառուսը** (որն անվանված է «Բելայա Ռուտենիա»), **Թուրքեստանը** (այսինքն «Արևմտյան Թուրքեստանը», որ ներառում է ներկայիս Ղազախստանը, Ուզբեկստանը, Թուրքմենստանը, Ղրղզստանն ու Տաջիկստանը և «Արևելյան Թուրքեստանը»՝ Չինաստանի Սինցզյան-Ույգուրական ինքնավար մարզը), **Տիբեթը**, վերջապես, **Իդել-Ուրալն ու Կազակիան**: Վերջին անվանումով նշված են Հյուսիսային Կովկասն ու Կովկասի նախալեռները, իսկ Իդել-Ուրալը (Իդելը Վոլգայի թաթարական անվանումն է) ՌԴ-ի Վոլգա-ուրալյան տարածաշրջանն է» **(PanARMENIAN.net, 18.07.2008):** Մնում է հարցնել, իսկ օրենքը, այսինքն՝ ծրագիրը, իսկապե՞ս գործում է մինչ օրս:

Հաագայի միջազգային դատարան

2. Բարաք Օբաման և ԱՄՆ նոր վարչակարգի ծրագրերը: Ամիսներ առաջ, «Իրավունքը դե-ֆակտո» (19.12.2008թ.) թերթին տված հարցազրույցում՝ նշել էինք, որ առաջիկայում կպարզվի ԱՄՆ նոր վարչակարգի արտաքին քաղաքականության առաջնությունները: Այդպես էլ կա: ԱՄՆ-ն փորձելու են փրկել, վերականգնել: Այդ մասին արդեն խոսեցինք: Իսկ Միջին Արևելյան, Կովկասյան, Հեռավոր Արևելյան տարածաշրջանային ծրագրերի մասին կխոսենք ստորև:

-Օբամայի այցը Եվրոպա: Օբաման պաշտպանեց Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին, սակայն, պարզ է, որ դա արվեց թուրքերի վստահությունը չկորցնելու համար: Իրականում Եվրոպան հասկացրեց, որ Թուրքիան ԱՄՆ-ից հետո ՆԱՏՕ-ի ամենամեծ բանակ ունեցող երկիրն է և Եվրոպայում նախընտրում են այդ բանակը տեսնել, ոչ թե իրենց մոտ, այլ Մերձավոր Արևելքում: Հասկանալի է, որ Թուրքիայի առջև ԵՄ-ի դրած խնդիրներն այնքան մեծ բացասական երանգ ունեն, որ եվրոպական ժողովուրդները ոչ մի դեպքում չպետք է իմանան, որ դա եվրո-պատվեր: Իսկ թե Թուրքիան կընդունի՞ ստանձնել այդպիսի դերակատարություն, կերևա առաջիկայում: Ըստ եվրոպացիների հայտարարությունների, կարելի է եզրակացնել, որ Թուրքիան ԵՄ-ին կանդամակցի Ռալֆ Պիտերսի քարտեզի իր մասով վերջնական ձևավորումից հետո միայն:

-Օբամայի այցը Թուրքիա: Օբամայի այցը Թուրքիա հետապնդում էր առանցքային մեկ նպատակ, Թուրքիային հրավիրել մասնակցելու արևմուտքի ձեռնարկած Միջին Արևելյան ռազմա-քաղաքական ծրագրերին՝ մասնավորապես Աֆղանստան - Պակիստան գծում:

-Հայ-թուրքական հարաբերությունների հարցը: Վերջին տարիներին եվրո-ամերիկյան քաղաքականությունը հատկապես աշխուժացել է, այսպես կոչված, հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու, հաշտության եզրեր գտնելու, Հայաստան-Թուրքիա «սահմանը» բացելու, երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցերում: Բազմիցս ենք անդրադարձել (տես՝ «Ուխտ Արարատի», թիվ 1/15, 2008թ., էջ 1-6 և թիվ 2/16, 2008թ., էջ 1-6), բայց կրկնենք, որ իրականում եվրո-ամերիկյան կոմիսարներն ու էմիսարները, ինչպես նաև առանձին երկրների ղեկավարներ հորդորում են ՀՀ իշխանություններին գնալ ոչ միայն երկրի ու ժողովրդի կամքին հակառակ, գնալ պետության օրենքները շրջանցելու ուղիով, այլև հենց միայն մարդկության դեմ նոր հանցագործություն քաջալերելու, հօգուտ ցեղասպանության քարոզչություն կատարելու ճանապարհով: Կրկնենք. հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարց չկա, կա եվրո-գերտերությունների պատվերով և օժանդակությամբ 1915-1923 թթ. թուրքերի իրականացրած հայ ժողովրդի ցեղասպանությունը՝ Օսմանյան կայսրության մեջ, հայաթափելու ու բռնազավթելու համար Հայոց հայրենիքը:

Եվ կա խնդրի լուծման երկու տարբերակ: Կամ Թուրքիայի ներկայիս իշխանությունները հրաժարվում են իրենց ժողովրդին և իրենց երկիրը զանգվածային ոչնչացման հանցագործ գործիքի դերում պահելուց, և այլոց ու իրենց անձնական շահերին ծառայելուց, կամովին ապաշխարում են, վերադարձնում են տարածքները, երաշխիքներ են ստեղծում հայության վերադարձի համար, հատուցում են բոլոր վնասները, այդ թվում՝ 1920-ից առ այսօր իրականացված 89-ամյա օկուպացիայի համար, որից հետո Թուրքիան կարող է ճանաչվել որպես ապաշխարած և, ըստ այդմ, դիվանագիտական ու քաղաքական հարաբերություններում վստահելի երկիր:

Կամ նրանք շարունակում են մնալ հանցագործի դերում, պատրաստվելով իրականացնելու նոր հանցագործություններ: Հիշեցնենք, սակայն, որ ամեն մի հանցագործ գործիք, ի վերջո, ոչնչացվում է հանցագործության դրդողի, պատվիրատուի կողմից: Ասել, թե Թուրքիայի վարիչները չգիտեն այս ճշմարտությունը, սխալ կլինի: Սակայն 1914-1918 թթ. փորձով իրական է, որ ստանձնելով նոր հանցագործության պատվեր, ըստ էության, նրանք կործանման կտանեն իրենց իսկ ժողովուրդն ու երկիրը:

Խնդրի ենթատեքստում, եթե շատերին հուսադրող էր թվում (իրականում այդպես ներկայացվում էր միայն) վերջին շրջանում հայ-թուրքական հարաբերություններում թուրքերի մուտեցումը, ապա էրդողանի այս հայտարարությունը

հույսի ոչ մի նշույլ չի թողնում. **«Շատ դժվար է հաղթահարել Թուրքիայի և Հայաստանի հարաբերություններում առկա խնդիրներն առանց լուծելու Հայաստանի և Ադրբեջանի խնդիրները»: Այդ մասին հայտարարել է Թուրքիայի վարչապետ Էրդողանը: Թուրք վարչապետը հույս է հայտնել, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, որի ժամանակավոր անդամն է այժմ Թուրքիան, Հայաստանին կհամարի օկուպանտ երկիր: «ՄԱԿ-ը պետք է նման որոշում կայացնի և կոչ անի Հայաստանին զորքերը դուրս բերել Լեռնային Ղարաբաղից: Թուրքիան արդեն քայլեր է ձեռնարկել և առաջարկել է ձևավորել Կովկասի կայունության պլատֆորմը Ռուսաստանի, Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի մասնակցությամբ: Վեճը Հայաստանի ու Ադրբեջանի միջև պետք է առաջնահերթ լուծում ստանա, որից հետո կլուծվեն նաև հայ-թուրքական հարաբերությունները»,- ընդգծել է Էրդողանը: (PanARMENIAN.net, Azg.am, 10.04.2009)**

Ի դեպ, ապրիլի 10-14-ը Հայաստանի Ձլմ-ները լռությամբ շրջանցեցին այս անչափ կարևոր լուրը: Ո՞րն է պատճառը, ՀՀ լրատվությունը վերահսկվո՞ւմ է, ո՞ւմ կողմից: Ի՞նչ է, ՀՀ նախագահը չպետ՞ք է իմանար, որ իր քաղաքական նախաձեռնությունը ձախողվում է այնտեղ, որտեղ, թվում է հաջողության հույսեր կային…

Անսպասելի և շշմեցնող անկեղծություն թուրքերից, որն ավա՜ղ, վրա է հասնում 1994-ի զինադադարից 15 տարի անց միայն: 15 զուր կորսված տարիներ, երբ այդպիսի նախաձեռնությամբ վաղուց մենք պետք է հանդես գայինք ՄԱԿ-ում:

Իհարկե, կարող ենք էլի մի քիչ համբերել ու հետո միայն դիմել միջազգային դատարան, երբ միջազգային հանրությունը ինքը կպահանջի դատապարտել Թուրքիային՝ նոր ժամանակներում իրականացված նոր հանցագործությունների համար, ինչպես դա արեց 1919-21թթ.:

-Բարաք Օբամայի Ապրիլ 24-ի ուղերձը, ճանապարհային քարտեզը: Մենք համոզված ենք, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացն ավարտված է: Բոլոր այն երկրներն ու ժողովուրդները, որոնք իրենց խորհրդարաններում ճանաչել ու դատապարտել են 20-րդ դարի առաջին մեծ հանցագործությունը, կարող են լինել քաղաքակիրթ աշխարհի անբաժան մասը, քանի որ նրանք իրականում ճանաչեցին ու դատապարտեցին մարդկության դեմ ուղղված հանցագործությունը, ցեղասպանության ոճիրը: Մյուս երկրները, այդ թվում, առաջին հերթին Անգլիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ճապոնիան, ինչպես նաև Իսրայել պետությունը՝ այս հարցում ուշացել են, այդպիսով հաստատելով, որ միջազգային հարաբերություններում շարունակում են դավանել պատերազմի, ագրեսիայի, ցեղասպանության՝ քարոզչության, ծրագրման և իրականացման մարտավարություն: Այդ հարցում, անհուսալիորեն և ամոթալի կերպով ուշացել են իսլամական աշխարհի այն երկրները, Լիբանանից բացի, որոնք՝ իրենք, ժամանակ առ ժամանակ հայտնվում են պատերազմի, ագրեսիայի ու ցեղասպանության ճիրաններում:

Պետք է տարանջատել **«Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման»** և **«Հայոց ցեղասպանության դատապարտման»** հասկացությունները, որոնցից առաջինը ենթադրում է բարոյական, քաղաքական գնահատական, երկրորդը՝ իրավական: Մենք համոզված ենք, որ եկել է Հայոց ցեղասպանության դատապարտման ժամը: Խնդիրն այն է միայն, որ ՄԱԿ-ի միջազգային դատարան այդ հայցով կարող է դիմել Հայաստանի Հանրապետությունը՝ պետությունը: Իսկ պետությունը, արտաքին ճնշումների ու թելադրանքների ենթարկվելով, կարող է անվերջ հետաձգել հարցը և այն տեղափոխել «ճանապարհային քարտեզների» և այլ տեսակ համաձայնագրերի ոլորտ: Վերջին թելադրանքը հնչել է 2008-ի հունիսի 20-ին՝ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում լսումների ժամանակ, երբ ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի օգնական Դենիել Ֆրիդը հայտարարեց. **«Հայաստանը պետք է պատրաստ լինի ճանաչել առկա սահմանը և կառուցողական արձագանք տալ Թուրքիայի հնարավոր ջանքերին: Հայաստանը պետք է հայտարարի, որ ժամանակակից Թուրքիայի նկատմամբ հողային որևէ պահանջ չունի: «Հայաստանը պետք է պատրաստ լինի ճանաչել առկա սահմանը Միաժամանակ անհրաժեշտ է Թուրքիայի առերեսումը սեփական պատմության մութ էջերի հետ, որքան էլ դա դժվար լինի» («Ազգ», Հ. Չ., 20-ը հունիսի, 2008թ.):**

Հետաքրքիր է, որ Հայաստանը և Թուրքիան վարվեցին ճիշտ այնպես, ինչպես թելադրել էր Ֆրիդը: Հայաստանը ձեռնարկեց հարաբերությունների բարելավմանն ուղղված քայլեր և «ճանապարհային քարտեզում» պետք է որ ընդգրկված լինի Ֆրիդի մի պահանջը. **«Հայաստանը պետք է պատրաստ լինի ճանաչել առկա սահմանը...»**, իսկ Ֆրիդի մյուս պահանջը՝ **«Միաժամանակ անհրաժեշտ է Թուրքիայի առերեսումը սեփական պատմության մութ էջերի հետ, որքան էլ դա դժվար լինի»,** իրականացման փուլում է, վկա՝ թուրք մտավորականների «Հայերից ներողություն ենք խնդրում» էլեկտրոնային ստորագրահավաքը:

Այնուհանդերձ, հիշեցնենք, որ արտաքին ճնշումների տակ, այդ թվում և շրջափակման պայմաններում ստորագրված փաստաթղթերը միջազգային իրավունքում օրինական չեն համարվում: Եվս մեկ նկատառում. ծավալվող իրադարձությունների նկատմամբ իր վերաբերմունքը, այսպես ասած, **համաժողովրդական լուռ հանրաքվեն** հայ ժողովուրդը կատարեց 2009-ի Ապրիլի 24-ին: Հիրավի, ամբողջ օրը չէր դադարում մարդկանց երթը՝ դեպի հայության ողբերգությունը, վերածնունդն ու պայքարը խորհրդանշող Ծիծեռնակաբերդի բարձունք և հուշարձան: Այդպիսի մասնակցություն չէր եղել անգամ ցեղասպանության 90-րդ տարելիցին…

-Թուրքիան՝ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ժամանակավոր անդամ: Դա ապացուցում է, որ Թուրքիայի վրա հանցագործություններ կատարելու լուրջ խնդիրներ է դրված: Դրանով հեշտացրել են եվրո-ամերիկյան ռազմական ագրեսիաները պաշտպանելու խնդիրը, նաև դժվարացրել են ագրեսիայի ենթարկված երկրների բողոքները տեղ հասցնելու և ՄԱԿ-ը իր գործառույթների մեջ պահելու հարցը: Կարելի է ենթադրել, որ նույնիսկ համաձայնություն կա Ռուսաստանի հետ, քանի որ առ այսօր Ռուսաստանը միջազգային դատարան չներկայացրեց Վրաստանի ագրեսիան պատասխանատվության ենթարկելու բողոքը: Չինաստանի հարցում հույս ունեն, որ վերջինս կարող է ինքնամեկուսանալ՝ «Ինձ չմոտենաք, ի՜նչ ուզում եք արեք» տարբերակով: Դա նաև հնարավորություն է տալու վախեցնել եվրոպական այն երկրներին, որոնք վերջին մի քանի տասնամյակում պատրաստում էին քրդական շարժումը: Դա ազդակ է՝ ասելու, որ մի քանի տարի Եվրոպան պետք է մոռանա այս խնդիրը, քանի որ Կովկասում եվրո ուժերը Ալ Ղաիդայի դեմ չեն կարող պայքարել՝ այնտեղ Ալ Ղաիդա չլինելու պատճառով պարզապես:

-Աշխարհը ուզում են դուրս բերել իր առանցքից, կհաջողվի՞… Չի՛ հաջողվի, եթե միջազգային հանրությունը լինի միահամուռ, միջազգային կյանքը իրավական ճանապարհով բերի նորմալ կենսառիթմի, ինքնակազմակերպվի… ՄԱԿ-ի հովանու ներքո, միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի շուրջ համախմբվելով՝ թույլ չտա, որ գործընթացները շեղեն երկրները իրենց բնականոն ընթացքից: ՄԱԿ-ից բացի, մնացած բոլոր կառույցները ստեղծվել են հետապնդելու խմբակային և ժամանակավոր շահեր: Իսկ ՄԱԿ-ը պետք է փրկել արևմուտքի թելադրանքից, թեկուզ նրա նստավայրը տեղափոխելու գնով: Ի տարբերություն Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների՝ սա այն տարբերակն է, երբ ինքնամեկուսացող երկրները չեն կարող խուսափել համաշխարհային ծավալներ ընդգրկող աղետի հարվածներից ու հետևանքներից: Վտանգը բոլորի համար նույնն է, անգամ Ավստրալիայի բնակիչների:

«Գուգլի» քարտեզները և Ռալֆ Պիտերսի «Միջին Արևելքի նոր քարտեզը»



1



2

3

ՆԱՏՕ-ի «ժողովրդավարություն» տարածելու ծավալապաշտական ծրագրերի առաջիկա քայլերը Կովկասում, Կենտրոնական Ասիայում, Եվրոպայում և Լատինական Ամերիկայում

(ըստ Պենտագոնի գաղտնազերծած տվյալների և G 20-ի ձևավորման տրամաբանության)

Օգոստոսի 8-ի առավոտյան, երբ ողջ ուժով ընթացքի մեջ էր վրացական ագրեսիան, Մ. Սահակաշվիլին հեռուստատեսությամբ ոգևորում էր ժողովրդին ու զինվորներին՝ հայտարարելով. «Մենք շատ ենք, մենք կհաղթենք» **(«Եվրոնյուզ», 08.08.2008թ., ժամը 15:00)**, փորձեցինք օգտվել «Գուգլ» ինտերնետ կայքից՝ քարտեզի վրա պատկերացնելու «ռազմական գործողություններ» անվանվող մարդկային ողբերգության ծավալը: Հիշեցնենք, որ «Գուգլի» էլեկտրոնային քարտեզում ամենայն մանրամասնությամբ առկա են ոչ միայն ամբողջ աշխարհն ու առանձին երկրներ, այլև քաղաքներ ու գյուղեր՝ իրենց փողոցներով ու տներով: Էջը բացելուց հետո պարզվեց, որ քարտեզի վրա բացակայում են Անդրկովկասի հանրապետությունների բնակավայրերը, ավելի ստույգ՝ առկա էին միայն երեք երկրների սահմանները և Վրաստան, Հայաստան, Ադրբեջան գրությունները: Մնացածը մաքուր դաշտեր էին (տես՝ քարտեզ 1):

Փաստը զարմանալի էր և տհաճ: Հետո, երբ իմացանք, որ Վրաստանի Գլխավոր շտաբը Ցխինվալի և հարակից գյուղերի խաղաղ բնակչությանը բնաջնջող վրացական ռազմական գործողությունը անվանել է «մաքուր դաշտ», և երբ կրկին անդրադարձանք «Գուգլին», պարզվեց, որ այնտեղ «մաքուր դաշտ» էին Կովկասում՝ Վրաստանը, Ադրբեջանը, Հայաստանը, Եվրոպայում՝ Բուլղարիան, Ռումինիան: Նույն տրամաբանությամբ՝ Կենտրոնական Ասիայում՝ Պակիստանի և Հնդկաստանի հյուսիսային մասերը, Չինաստանի արևմտյան մասում ընդհատվող գծերով «մաքուր դաշտի» է վերածված Չինաստանից անջատվող նոր սահմանազատության ինչ-որ տարածք (տես՝ քարտեզ 2):

Հասկանալու համար «Գուգլի» մյուս սահմանագծումների՝ օրինակ, Կոսովոյի, Տաջիկստանի արևելյան, Պակիստանի և Հնդկաստանի հյուսիսային մասերում սահմանների կետագծերով նշումների իմաստը, պետք է նայել Իսրայելի սահմանները, որտեղ պաղեստինյան տարածքը նշված է որպես «անորոշ կարգավիճակ», որից հետևում է, որ նոր սահմանագծումներով բոլոր տարածքները արևմուտքի համար «անորոշ կարգավիճակ» են: Պարզվեց, որ «Գուգլի» առջև դրված խնդիրը շատ ավելի խորքային է, քան կարծում էինք: Հիշեցինք Ռալֆ Պիտերսի «Միջին Արևելքի նոր քարտեզը» (տես՝ քարտեզ 4): Հասկանալի դարձավ, որ հիմա էլ «Գուգլի» միջոցով Պենտագոնը գաղտնազերծել է Ռալֆ Պիտերսի քարտեզում 2006-ին հասկանալի պատճառներով դեռևս բացակայող օղակները:

Ակնհայտ է, որ աշխարհը զավթելու արևմտյան մոլագարությունը 2008-ի օգոստոսի 8-ով փորձեց գործի գցել իր հերթական արկածախնդրությունը: Ուստի, «Գուգլի» քարտեզով հստակեցվել է ՆԱՏՕ-ի կողմից Միջին Արևելքի երկրների նոր սահմանազատումներին զուգահեռ առաջիկայում կատարվելիք նոր՝ ոչ մաքուր քայլերի ռազմադաշտը (տես՝ քարտեզ 2): Ինչպես երևում է հարավով արևելքից մինչև արևմուտք ձգվող չինական ամբողջ սահմանով մեկ, նպատակ է դրված ստեղծել 500-1000 կմ լայնությամբ «զսպող գոտի»՝ Չինաստանի հարավային և արևմտյան ամբողջ սահմանագծով:

Ծրագրվում է փոփոխել Հնդկաստանի հյուսիսարևելյան Բութանիայից Մյանմա ձգվող Հնդկաստան-Չինաստան սահմանը: Պետք է ենթադրել, որ այն անջատելու են Հնդկաստանից՝ Բութանիայի հարավարևմտյան գծով մինչև Մյանմա: Իսկ Քաշմիրի ու Ջամմուլի տարածքները (տես՝ քարտեզ 4) բաժանվում են՝ որպես երկու նոր պետական միավորներ: Ի դեպ, նրանց բաժանող սահմանագիծը արևելյան մասով հստակեցված չէ: Ուշագրավ է, որ այստեղ Քաշմիրից և Ջամմուլից դեպի արևելք ձևավորում են ևս մի քանի փոքր տարածքներ. հյուսիսից հարավ չինական տարածք, որին հաջորդում է մոտ 20.000 քառ. կմ շրջագծային տարածք, դրանից հարավ երկու առանձին երկարաձգված չինական տարածքներ: Այդ գոտին հյուսիս-արևմուտքից եզրափակում է Տաջիկստանից անջատվող Լեռնաբադախմանյան ինքնավար մարզը: Իսկ Հնդկաստանի արևմտյան սահմանը՝ Պակիստանից մինչև Նեպալ, իջեցվելու է առնվազն Նեպալի հարավարևմտյան եզրագծով մինչև Պակիստան, Պակիստանի հյուսիսարևելյան մի մեծ հատված…

Համեմատելով՝ տեսնում ենք, որ Պակիստանի հյուսիսային մասի վերին հատվածը լիովին համընկնում է Ռալֆ Պիտերսի «Միջին Արևելքի նոր քարտեզին», ըստ որի՝ Աֆղանստանին է անցնում երեք մասի բաժանվող Պակիստանի արևմտյան տարածքների մի մասը՝ հյուսիսային և կենտրոնական հատվածները: Հարավայինը մաս է կազմելու ապագա Բելուջիստան կոչվող նորաստեղծ պետության: Սակայն չի համընկնում հյուսիսարևելյան մասով: Եթե ըստ 2006-ի քարտեզի, այն ամբողջությամբ սահմանակից էր Հնդկաստանին, ապա, ըստ «Գուգլի» 2008-ի քարտեզի՝ Հնդկաստանի հյուսիսը՝ Ջամմուն և Քաշմիրը, ընդհատվող սահմանագծերով ամբողջությամբ վերագծված է:



Միջին Արևելքի 2006-ին վերագծված քարտեզը՝ ըստ Ռալֆ Պիտերսի

Հետևությունը մեկն է. «Գուգլի» քարտեզում ընդհատվող գծերով նշված հին ու նոր տարածքները Պենտագոնի համար է, որ դարձել են «անորոշ»: Դրանց որոշակի դարձնելուն է ուղղված լինելու Արևմուտքի առաջիկայում «ազատագրման» և «ժողովրդավարացման» տարածման «մարդասիրական» գործընթացները, ինչպիսին էր օրինակ, գործողությունը Հարավային Օսիայում: Հարավ-օսական գործընթացը չհաջողվեց ավարտին հասցնել: Դա լրջորեն հետ գցեց ընդ-

հանուր ծրագրերի իրականացումը, ստիպեց վերանայել գործողությունների հաջորդականությունը, որը, բնականաբար, ժամանակ էր պահանջում:

Կորցրած ժամանակն իր գործն արեց: Դա երևում է զավեշտի նմանվող Արևմուտքի շտապողական քայլերից, երբ մի կառույցը մյուսի ծրագրից ետ ընկնելու փաստը հաշվի չառնելով՝ իր քայլերն է անում: Օրինակ, ՀՀ-ում 2008-ի սկզբներից իր գործունեությունը սկսեց ապագայում Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներ նոր պետության նոր դրամանիշի անունը կրող «Ամերիա» բանկը: Դրամանիշը պետք է ներդրվի դոլարը շրջանառությունից հանելուց հետո, իհարկե, առանց դոլարի պարտքերը ստանձնելու: Երևանում բանկը գործում է շատերի համար անհասկանալի անվանումով: Ինչպես երևաց Օբամայի նախագահության առաջին իսկ օրերից, ԱՄՆ-ի քաղաքականությունը որոշող ստվերային կաբինետը բաժանվել է երկու հակադիր բանակների՝ ԱՄՆ-ն եղած ձևով պահպանելու և ԱՄՆ-ն մեկ ընդհանուր պետության նահանգ դարձնելու կողմնակիցների միջև: Հունվարից առ այսօր հաղթում է ԱՄՆ-ն պահպանելու կողմնակիցների բանակը, որի քաղաքականությունն է իրականացնում Օբամայի վարչակարգը:

Ինչպես երևում է քարտեզ 3-ից, արևմուտքը առաջիկայում պատրաստվում էր շտապ կարգով (ինչո՞ւ՝ շտապ, կանդրադառնանք վերջում) մկրատել աշխարհի քարտեզը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով՝ նա անցավ նոր մարտավարության՝ որպես առաջնային քայլեր ընտրելով Կովկասը, Հայկական լեռնաշխարհը, Աֆղանստանն ու Պակիստանը: Հնդկաստանում դեռևս ընթանալու է նախորդ տարիների ընդհանուր լարվածության ծրագիրը:

Քարտեզ 3-ից հետևում է, որ՝

ՏԱՋԻԿՍՏԱՆԻՑ ծրագրում են անջատել արևելյան՝ Չինաստանի հետ սահմանակից տարածքի մի մասը՝ Լեռնաբդախմանյան ինքնավար մարզը:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻՑ անջատելու են Պակիստանին և Չինաստանին (փոքր հատվածով նաև Աֆղանստանին) սահմանակից Ջամմուն և Քաշմիրը՝ որպես առանձին «անկախացող» երկրներ: Հարցական է թողնված Ջամմու-Քաշմիր սահմանի արևելյան հատվածը. պատճառը պետք է փնտրել նոր ձևավորվող երեք (երկու փոքր և մեկ մեծ) տարածքների հետ առնչվող ինչ-որ տրամաբանության մեջ: Մեզ համար անընդունելի Պենտագոն-նատոական՝ մտածողությամբ է, որ կարելի է հասկանալ Քաշմիրից Նեպալ ձգվող Հնդկաստան-Չինաստան սահմանի «անորոշությունը», ըստ որի՝ Հնդկաստանից բռնանջատվելու է նաև Հիմչալու-Պրադեա նահանգն ամբողջությամբ: Նույն տրամաբանությունը հարվածի տակ է առել Բութան-Չինաստան-Մյանմա (Բիրմա) սահմանագծում ներառված Հնդկաստանի Արնաչալ-Պրադես նահանգն ամբողջությամբ: Չենք բացառում, որ բռնանջատեն և դրան միացնեն նաև Նագալենտ նահանգը:

ՉԻՆԱՍՏԱՆԻՑ պատրաստվում են անջատել Տիբեթի և Սինցզյան-Ույգուրական շրջաններին պատկանող և արևմտյան՝ Քաշմիրին սահմանակից մոտ 20 000 քառ. կմ տարածք՝ որպես Չինաստանից «անկախացող» առանձին երկիր: Նաև երկու փոքր՝ մեկը Ջամմուին, մյուսը Քաշմիրին սահմանակից (մի քանի քառ. կմ) տարածքներ:

ՈՒԿՐԱԻՆԱՅԻՑ նախատեսել են առայժմ անջատել Ղրիմի թերակղու հարավարևմտյան տարածքի՝ Սևաստոպոլն ու նրա շրջակայքը ընդգրկող հատվածը, հնարավոր է՝ «Ղրիմի թաթարներին» ազատագրելու պատրվակով: Ճիշտ կլիներ ասել, որ Ղրիմը կորզում են Ռուսաստանից, քանի որ Ուկրաինան վաղուց պատրաստ է հօգուտ արևմուտքի իրենից օտարել ամբողջ Ղրիմը (ծրագիր, որը գործի է դրվել դեռ 1989-1990 թթ. Գորբաչովի կողմից, տես՝ քարտեզ 3):

«Մաքուր դաշտեր» տարածքներից են.

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ՝ Բուլղարիան, Ռումինիան: Կոսովոն ներկայացված է ընդհատվող սահմանագծով՝ որպես նախկին «մաքուր դաշտ»:

ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ՝ Արգենտինան: Հիշենք, որ համաշխարհային այս գործընթացի սկիզբը դրեց Մեծ Բրիտանիան Ֆոլկլենդյան կղզիների շուրջ պատերազմով, այնպես որ, այս հսկա երկիրը բաժանվելու է բավականին մեծ թվով մասերի ու ամենևին պատահական չէ, որ հակաճգնաժամային ֆինանսական G 20-ի խմբի մեջ Լատինական Ամերիկա մայրցամաքի համար ընտրված է Արգենտինան: Նույն խնդրին են ծառայեցնում Վենեսուելան իր, այսպես կոչված, նեո-տրոցկիստական կեցվածքով և Կոլումբիան: Ինչ վերաբերում է Հյուսիսային և Հարավային Ամերիկաները կապող Կարիբյան ավազանի կղզիների երկրներին, ապա նրանց մեծ մասը եվրոպական երկրների դոմինիոններ են, և հիմա հասկանալի է վերջին տարիներին եվրոպական երկրների ակտիվությունը այստեղ: Հիմնականում անհասկանալին մնում էր Իսլանդիան, որը երբ մերժվեց Բրիտանիայից, ճգնաժամից փրկվելու համար, օգնություն խնդրեց Ռուսաստանից:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ, ի տարբերություն 2006-ի քարտեզի, սահմանները, ըստ «Գուգլի», մնացել են անփոփոխ, սակայն «մաքուր դաշտ»-ի տրամաբանությամբ քարտեզից բացակայում են Աբխազիան, Հարավային Օսիան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, Նախիջևանը: Սահմանների փոփոխությունը տրված է 2006-ի քարտեզով, որտեղ Վրաստանի տարածքային ամբողջականությունը պահպանված է, բայց ըստ Ռալֆ Պիտերսի ձևակերպման և քարտեզի տրամաբանության՝ նվիրատվություն է արված Ադրբեջանին: Դա նշանակում է, որ ՀՀ-ի և ԼՂՀ-ի նկատմամբ ռազմական գործողություններ կարող էին սկսվել դեռևս 2006-ին: 2005-ը բացառվում էր, քանի որ դեռ չէին ընդունվել Եվրոմիության և ՀՀ Սահմանադրությունները: ՀՀ-ինը մերժվել էր 2003-ին, ԵԱՀԿ-ի ջանքերով արևմուտքն այն ընդունված համարեց 2005-ի նոյեմբերի վերջին: Եվրոմիության Սահմանադրությունը չի ընդունվել առ այսօր:

Համաշխարհային ճգնաժամի G 20-ի խմբի ձևավորման տրամաբանությունը

Համեմատելով աշխարհի քարտեզի գլոբալացման և վերածնման տրամաբանությունը՝ իբրև համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամը միացյալ ուժերով հաղթահարելու նպատակով 2008-ի նոյեմբերի 15-ին Վաշինգտոնում հրավիրված գագաթաժողովում ձևավորված G 20-ի խումբը՝ (Արգենտինա, Ավստրալիա, Բրազիլիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Հնդկաստան, Ինդոնեզիա, Իտալիա, Կանադա, Չինաստան, Մեքսիկա, Հարավային Կորեա, Ռուսաստան, Սաուդյան Արաբիա, ԱՄՆ, Թուրքիա, Հարավաֆրիկյան Հանրապետություն, Ճապոնիա, Եվրոմիություն՝ որպես մեկ ինքնուրույն պետություն), հասկանալի է դառնում, որ ամենևին էլ նպատակաուղղված չէ ճգնաժամը հաղթահարելուն, այլ առաջին լուրջ միջազգային կազմավորումն է, որի ֆինանսա-բանկային ծրագրերով իրագործվելու է գլոբալացման առաջին լուրջ քայլը: Ըստ այդ տրամաբանության էլ կազմել ենք ստորև ներկայացվող աղյուսակը՝ մեր բացատրություններով:

Եթե հետևենք 2009-ի ապրիլի 20-ին Լոնդոնում կայացած G 20-ի գագաթնաժողովում հնչած մտքերին, ապա առանձնակի ուշադրություն պետք է դարձնել այն մտքին, թե իբրև Ռուսաստանը կողմ է տարածաշրջանային տարադրամի ընդունմանը, այսինքն՝ բազմաբևեռ տնտեսական համակարգին: Թվում է՝ մերժվում է համաշխարհային տարադրամի գաղափարը: Իրականում մտահոգիչն այն է, որ միջազգային տարադրամի անցումը ոչ թե սկզբնառու, այլ ավարտական փուլի խնդիրն է, ուստի, Ռուսաստանի անունից է հնչեցվում այն, ինչ նախատեսված է ստեղծել՝ հինգ-յոթ տարածաշրջանային փոխարկելի տարադրամներ: Ինչպես երևում է աղյուսակի 1-ին սյունակից, Եվրոմիությունը, այն է՝ Եվրոպայի Միացյալ Նահանգներ ընդհանուր պետու-

թյունը, ներկայացնում են Եվրոպայի չորս գերտերություններ. Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան՝ ղեկավար դերով, Գերմանիան՝ ենթակա ուղղորդվող դերով, Իտալիան՝ խաղից դուրս վիճակում՝ հաշվի առնելով Իտալիայում վերջին տարիներին ընթացող ներպետական գործընթացները:

Մյուս երկրները խմբավորված են ըստ մայրցամաքներում ստեղծվող «Միացյալ նահանգներ» կոչվող պետությունների տրամաբանության, որպիսին, օրինակ, 2-րդ սյունակում ԱՄՆ-Կանադա-Մեքսիկա եռյակն է: 3-րդում՝ Արգենտինա, Բրազիլիա: Այստեղ է, որ հասկանալի է դառնում Արգենտինան՝ որպես «մաքուր դաշտ» ներկայացնելը ըստ «Գուգլի»: Դեռևս վերջնական ձևավորում չունի Ասիա-Հին Արևելք սյունակը, որտեղ ներառված են միայն Չինաստանն ու Հնդկաստանը, որոնք նույնպես «մաքուր դաշտեր»-ում են: 5-րդում՝ Հեռավոր Արևելքի միացյալ նահանգները, կարծում ենք հստակ է ի դեմս Ճապոնիայի, որը 1985-ի «պերեստրոյկայից» առ այսօր Ռուսաստանի հետ փորձում է լուծել Կուրիլյան կղզիների խնդիրը, նաև որպես արևմտյան քաղաքականության կցորդի՝ ճնշումներ գործադրելով Հյուսիսային Կորեայի և Չինաստանի վրա: Հարցեր չեն առաջանում Աֆրիկայում՝ Հարավաֆրիկյան Հանրապետության շուրջ ստեղծվելիք Աֆրիկայի Միացյալ Նահանգներ նոր պետության հարցում: Հասկանալի է, որ իրենց համար միակ վստահելի երկիրը ՀԱՀ-ն է, որտեղ էլ և 2007-ին Աֆրիկյան ընդհանուր կոնգրեսը հավանություն տվեց այս նոր կազմավորմանը: Նոր Արևելքի Միացյալ Նահանգները, 7-րդ սյունակը՝ ըստ էության, Ռալֆ Պիտերսի քարտեզով գծված ընդհանուր պետության տարածքն է, որի ձևավորման գործընթացը իրականացվելու է Սաուդյան Արաբիայի մասնատման միջոցով (տես՝ քարտեզ 4-ը և «Ուխտ Արարատի», 4/10, 2006թ., էջ 4):

Ինչ վերաբերում է 8-րդ սյունակին՝ Եվրասիական խաչմերուկին, որն, ըստ էության, Կովկասն է և նրանում ներառված Հայկական լեռնաշխարհն ամբողջությամբ, այն Արևմտյան և Արևելյան Հայաստաններն են՝ ներառյալ Հայկական Կիլիկիան, որը, չգիտես՝ ինչո՞ւ, արևմուտքը փորձում է անջատել Արևմտյան Հայաստանից: Այստեղ ոչ թե տարօրինակը, այլ մտահոգիչն այն է, որ ներգրավված միակ երկիրը Թուրքիան է, այդ իրողությունը անմիջապես հիշեցնում է 1921-ի ծրագիրը, ըստ որի ամբողջ Հայկական լեռնաշխարհը Կովկասի հետ միասին, համաձայն եվրոբոլշևիկյան դավադիր նախագծի, պետք է դրվեր Թուրքիայի հսկողության տակ՝ որպես Թուրքիա, Ադրբեջան, Վրաստան, Հայաստան ընդհանուր պետություն՝ ֆեդերացիա կամ կոնֆեդերացիա: Հարկ չհամարելով մանրամասնել եվրասիական այս խաչմերուկի հազարամյա անցյալով պայմանավորված ներկայի կարևորությունը՝ նկատենք միայն, որ G 20-ի ցուցակում Թուրքիան միակ երկիրն է, որն աշխարհին և առաջին հերթին արևմտյան երկրներին իր ունեցած հսկայական պարտքերից զատ, ոչ մի ֆինանսա-տնտեսական նմանություն չունի մյուսների հետ:

Հասկանալի է, որ Թուրքիայի անվան տակ նրա ձեռքով իրագործվելիք ծրագրերն ամբողջությամբ ֆինանսավորելու է Արևմուտքը՝ համաշխարհային բանկերի կամ այլ կառույցների միջոցով: Այսինքն՝ եթե հետևենք «պիտերսգուգլյան» քարտեզների և այս աղյուսակի տրամաբանությանը, ապա ապացուցելու կարիք չի լինի, որ Արևմուտքը վերստին որպես հանցագործ գործիք է վերցնում Թուրքիան, այս անգամ շատ ավելի ընդարձակ ծրագրերով, որի իրագործումից հետո միայն կընթանա Թուրքիայի մասնատումը և ապա դատապարտումը միջազգային ատյաններում՝ որպես հանցագործության միակ մեղավորի, այն հույսով, որ համաշխարհային այդ ընդհանրության մեջ չեն բացահայտվի ու չեն դատապարտվի եվրո-ամերիկյան մասնակիցներն ու մեղսակիցները:

Ուշագրա՞վ է, թե՞ մտահոգիչ, որ սյունակներում ընդհանուր առմամբ տեղ չի գտնվում այսօրվա Ռուսաստանի համար: Կարծում ենք, որ ծրագրվող համաշխարհային այս մեծ աղետի հետևանքում Ռուսաստանը՝ իր իսկ վարած գլոբալացման քաղաքականության պատճառով մասնատվելու է՝ ինչպես տրված է աղյուսակի վերջին տողում, որի վերաբերյալ հայտնի հրապարակումներ եղել են վերջին ավելի քան հարյուր տարիների ընթացքում:

Լուրջ մտահոգության խնդիր է 4-րդ սյունակը՝ Չինաստան-Հնդկաստան, քանի որ եթե «պերեստրոյկայի» առաջին երկու տասնամյակում նրանց լրջորեն չանդրադարձան՝ հնարավորություն տալով այդ երկու հնագույն քաղաքակրթություններին շարունակելու պահպանել իրենց քաղաքակրթական բնական ինքնամեկուսացման մարտավարությունը, ապա կարծում ենք, այսուհետ, առավել ևս «Գուգլի» հրապարակումից հետո, մեծ դիմակայության են դրդելու նրանց, իսկ դա, եթե արևմուտքի համար անկանխատեսելի է իր հետևանքներով, ապա արևելքի համար ավելի քան կանխատեսելի է, քանի որ, ինչպես ցույց է տվել վերջին 300-400 տարվա միջազգային քաղաքական փորձը, անգլո-եվրոպական քաղաքական մտածողությունը՝ իր գործնական-վերլուծական «թվաբանությամբ», այդպես էլ հասու չեղավ Հին Արևելքի մտածողությանը, համապատասխան հակաքայլերին: Հին Արևելքը հենց այն բնական գործոնն է, որը թույլ չի տալու իր իսկ առանցքում շեղել՝ Երկրի առանցքը, մարդկային աշխարհի հիմնասյունը:

G 20-ում ներգրավված երկրների խմբավորման մեր կազմած աղյուսակը

1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	6-րդ	7-րդ	8-րդ
Եվրոպայի Միացյալ Նահանգներ	Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներ	Հարավային Ամերիկայի Միացյալ Նահանգներ	Ասիա Հին Արևելք	Հեռավոր Արևելքի Միացյալ Նահանգներ	Աֆրիկայի Միացյալ Նահանգներ	Նոր Արևելքի Միացյալ Նահանգներ	Հայկական Լեռնաշխարհ (Հարավային Կովկաս + Հայաստան)
Եվրասիական խաչմերուկ	ԱՄՆ	Արգենտինա	Չինաստան	Ճապոնիա	Հարավաֆրիկյան հանր.	Սաուդյան Արաբիա	Թուրքիա
Մեծ Բրիտանիա	Կանադա	Բրազիլիա	Հնդկաստան	Հարավային Կորեա			
Ֆրանսիա	Մեքսիկա			Ինդոնեզիա			
Գերմանիա				Ավստրալիա			
Իտալիա							
եվրոպական Ռուսաստան	ամերիկյան Ռուսաստան		ուրալյան Ռուսաստան	հեռավոր արևելյան Ռուսաստան			կենտրոնական Ռուսաստան

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԲԱՓՓՈՒ «ՓԱԽՈՒՍՏԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ», «ՔՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՅԴՈՒԳՆԵՐ» ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1988-ից ծգծգվող «Ղարաբաղյան կոնֆլիկտ» անվանված և դրա «խաղաղ» կարգավորմանն ուղղված արևմտյան գերտերությունների ու Եվրոմիության 20-ամյա քաղաքականությունը ուղղակի պատմական արտացոլումն է Րաֆֆու հոդվածներում նկարագրված իրադարձությունների: Այն տարբերությամբ, որ հիմա առաջին դիրքերում Ադրբեջան է, հետո՝ Թուրքիան, իսկ ուղղորդողի դերում Անգլիային փոխարինել են Եվրոմիությունը, ԱՄՆ-ը, ՆԱՏՕ-ն, Եվրոպայի անվտանգության համագործակցությունը, արևմտյան էմիսարներն ու եվրոմիության կոմիսարները, հրահանգիչներն ու փորձագետները…

Արևմտյան գործիչներից բազմիցս լսել ենք պատմությունը չհիշելու, ետ չնայելու, առաջ ընթանալու մասին «հորդորներ» ու քարոզներ: Եվ հակառակ Սումգայիթի ոճրագործության՝ դա կրկնվեց Արցախի պաշտպանության և Հայաստանի անկախության համար սկիզբ առած շարժման սկզբում, որպես թե ցեղասպանության հիշողությամբ անհարկի չծանրաբեռնվելու, իբր ապագայով ապրելու գործնական մոտեցում, այն մեկնաբանությամբ, թե թուրքական հանցագործ պետությունը այլևս չկա, իսկ ներկայի թուրքն էլ, նախկին արյունարբու թուրքը չէ: Սակայն հնարավոր չեղավ թյուրիմացության մեջ գցել հայ ժողովրդին: Բոլոր փորձերն ապարդյուն անցան հատկապես այն ժամանակ, երբ սկսվեց Ադրբեջանի լայնածավալ ագրեսիան ԼՂՀ-ի, ՀՀ-ի նկատմամբ: Թուրքամետ քարոզարշավն առժամանակ դադարեց և կրկին սկիզբ առավ 1999-2000 թթ., այս անգամ արդեն, միայն արևմտյան գործիչների ելույթներում: Նրանք փորձում էին ձևավորել այն մտայնությունը թե, իբր անհնար է Արևմտյան Հայաստանի վերադարձի խնդիրը լուծել իրավական, խաղաղ ճանապարհով, ուստի հայությունը պետք է հաշտվի առկա իրողության հետ:

Հետ չնայելու հետևանքն էր, որ 1988-ին ձևավորված հայ քաղաքական ընդհանուր դաշտում, ի շարս հայտնի մարտահրավերների, շուրջ 20 տարի չբացահայտվեց հիմնական վտանգներից մեկը՝ քրդական գործոնը, որն արևմուտքը ամեն գնով ձգտում էր քողարկել: Կբացահայտվի, երբ կգա պահը՝ սպառնալիքը, քրդական պետություն ստեղծելու միջոցով վերացնել Հայկական հարցը և իրագործել վաղեմի ծրագիրը: Այս մոտեցումը ձևավորվել էր դեռևս 19-րդ դարի վերջերին, երբ Արևելյան հարցին զուգընթաց միջազգային քաղաքական գործընթացներում հնչում էր «Հայկական հարց» քաղաքական հասկացությունը: «Թուրքական բռնատիրություն», «քրդական գործոն» արտահայտությունները սկզբնական նշանակությամբ պետք էր հասկանալ «զանգվածային ոչնչացման զենք» արևմուտքի ձեռքին: Այդ ամենը, հակառակ դիվանագիտական քողարկումների, փաստացի դրսևորումներով ծավալուն մաս են կազմում Արևելքի ու Հայաստանի՝ 19-20-րդ դարերի պատմության: Անգլիական քաղաքականությունը, որն աշխատում էր Օսմանյան կայսրությունը լուծարելու և «ազատագրվելիք» տարածքների երկրները բրիտանական կայսրության վասալների վերածելու գերխնդրի վրա, մինչև կայսրության փլուզումը, առաջնահերթ հարցերի շարքին էր դասել հայերին բնաջնջելու ու տարագրելու միջոցով պատմական Հայաստանը ամայացնելու ծրագիրը: Ծրագիրը, ի դեպ, չէր սահմանափակվում միայն հայերով ու Հայաստանով, այլև ներառում էր բոլոր հնագույն քաղաքակրթությունները, որոնք խանգարում էին Բրիտանիային համաշխարհային տիրապետության հասնելու, ներկայիս տերմինաբանությամբ՝ աշխարհը գլոբալացնելու խնդրին:

Գործընթացը սկսվել էր 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ Հայկական հարցի «լուծման» հիմնական «դերակատար» էր նշանակվել Աբդուլ Համիդը՝ արյունոտ սուլթանը: Եվրոպական մտածողության հաշվարկը պարզունակ էր. թուրքական իշխանությունները զանգվածային հանցագործությունները կատարելու էին հիմնականում քրդերի միջոցով, որից հետո դրվելու էր Օսմանյան կայսրության փլուզման հարցը: Այդ ժամանակ միայն, քրիստոնեական բարեպաշտության ու ժողովրդավարության քարոզներով, եվրոպական գերտերությունները անարգանքի սյունին պիտի գամեին Թուրքիան:

Ճիշտ չի լինի ասել, թե հայ քաղաքական մտքին այդ ծրագիրն այդպես էլ գաղտնի մնաց, քանի որ այդ տարիներին Րաֆֆու գրած մի քանի հոդվածներն անգամ բավարար էին դա ամբողջությամբ հասկանալու համար: Պարզ է, որ Րաֆֆուց բացի հայ և օտար մամուլը նույնպես, կամա թե ակամա, հսկայական լրատվություն էր տարածել, որի համապարփակ վերլուծության դեպքում կարելի կլիներ, թե՛ այն ժամանակ, թե՛ հետագայում, այդ ամենը իր բոլոր մանրամասներով բացահայտել, որը չի արվել: Այո՛, պատահական չէ, որ մինչև 1950-ականների կեսերը ԽՍՀՄ-ում Րաֆֆի կարդալն արգելված էր, և թերացում կամ վրիպում չէր նաև, որ անգամ արգելքը հանելուց հետո էլ նրա կարևորագույն ասելիքները՝ աշխարհակալական հանցագործ ծրագրերը մերկացնող հոդվածները, այդպես էլ մնացին «հույժ գաղտնի» կնիքի տակ: Միայն 1991-ին՝ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, Րաֆֆու երկերի լիակատար ժողովածուի հրատարակությամբ հայ մարդը հնարավորություն ստացավ ծանոթանալու 130-ամյա հայ քաղաքական մտքի ժառանգությանը:

Հատկանշական է, որ գրողի մահից հետո, կինը՝ Աննա Րաֆֆին, ասես կանխազգալով վերահաս աղետները, Րաֆֆու «Փախուստի ճանապարհին» և «Քրդական միություն» հոդվածներն, առաջին անգամ հրատարակեց 1895-ին՝ Համիդյան կոտորածների ժամանակ, երկրորդ անգամ՝ 1913-ին, Մեծ աղետից առաջ: Ասել է թե, հայ քաղաքական կուսակցությունները իրենց տրամադրության տակ ունեին քաղաքական անցուդարձի այդ վերլուծությունն ու կանխագուշակումը, որպեսզի, ըստ այդմ, փորձեին կանխարգելել 1915-ի ցեղասպանությունը:

Նոր ժամանակներում այդ ամենը, իրոք, հայտնագործություն է, առավել ևս, երբ 2006-ին Ռալֆ Պիտերսը ներկայացրեց Պենտագոնի աշխարհաքաղաքական նկրտումները, ըստ որի, Արևմտյան Հայաստանը, ինչպես նաև Արևելյան Հայաստանի տարածքի մեկ կարևոր մասը՝ Կարսն ու Արդահանը, ենթակա է «անէացման», այդ տարածքներում պետք է ստեղծվի, այսպես կոչված, արհեստածին «Ազատագրված Քուրդիստան»-ը, որը կդառնա միջազգային նոր հանցագործություն՝ ուղղված հայ ժողովրդի դեմ: Անցյալում դա հայտնի էր որպես 1902-ի՝ Պաուլ Ռորբախի[1], 1919-ի՝ Լոուրենս Արաբացու[2], 1921-ի՝ Լև Տրոցկու[3] կողմից արված բացահայտումներ, որոնք պետք է զգոնացնեին 1988-ից ձևավորվող հայ քաղաքական մտածողությունը: Սակայն, այսօր էլ ուշ չէ: Րաֆֆին իր ասելիքով ու նոր սերնդի ձեռքով դեռ անելիք ունի: Այդ է պատճառը, որ հարկ համարեցինք Րաֆֆու «Փախուստի ճանապարհը», «Քրդական միություն», «Հայդուգներ» հոդվածները ներկայացնել ամբողջությամբ՝ ժողովածուն կազմողների և մեր ծանոթագրություններով: Այնպես որ, չտեսնել ցանկացողներն անգամ կարող են նկատել, որ, ինչպես ցույց է տալիս Րաֆֆին, Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականություն ասվածը, 1880-ականներից առ այսօր, արևմուտքի քաղաքականությունն է, նրա՝ պատվերը, ուղղորդումը, ակնկալիքը: **(Խմբ.)**

Ծանոթագրություն

1. «Գերմանական իմպերիալիզմի ապոլոգետիկական անհամեմատ անսքող դրսևորում է **Պ. Ռորբախի** (П. Рорбах, Война и германская политика, перевод с немецкого, М., 1915, а также многочисленные статьи), Մ. Էրցբերգերի (М. Эрцбергер, Германия и Антанта, перевод с немецкого, М.,1923), Լիման Ֆոն Սանդերսի (Liman V. Sanders, Funf Jahere Turkei, Berlin, 1920), է. Լյուտենդորֆի (Э.

Людендорф, Мои воспоминания о войне 1914-1918гг., т. 1 и 2, 1923-1924) և այլոց գործերում, որտեղ ամեն կերպ սքողվում է Կայզերական Գերմանիայի մեղսակցությունը Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի բնաջնջման գործում: Դեռ ավելին, գերմանացի գեոպոլիտիկ, դիվանագետ **Պ. Ռորբախը** իր գրվածքներում հանդես է գալիս երիտթուրքական շովինիզմը հայերի դեմ ուղղելու, նրանց իրենց հայրենի հողերից Միջագետք՝ Բաղդադի երկաթուղու անմարդաբնակ վայրերը աքսորելու կանխիբանալական ծրագրի հեղինակ և ոգեշնչող»: **(Զոն Կիրակոսյան, «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ.», «Հայաստան» հրտ., Երևան, 1967, էջ 25)**

2. **Լոուրենս Արաբացի.** «...հայերը պետք է ամբողջությամբ ոչնչացվեն»: «...Դա է հայկական հարցի միակ լուծումը...», «...թուրքերը չպետք է անեն այդ գործը. նրանք չափազանց պրիմիտիվ են...»: **(Տես՝ «Լոուրենս Արաբացի, «Այդ անտանելի հայերը», 1919թ., «Ուխտ Արարատի», թիվ 3 / 14, 2007, էջ 8-13)**

3. **Լև Տրոցկի.** «...Վանի և Բիթլիսի իսկական տերերը (ըստ ռեալ ուժի) ոչ թե թուրքերն են, այլ քրդերը, որոնք ոչ մի կերպ չեն համաձայնի Հայաստանին հանձնելու իրենց հողերը»: «Հայերը պետք է պատրաստ լինեն զոհաբերել ոչ միայն իրենց տերիտորիաները, այլև իրենց ցեղակիցների խմբերին»... **(Տես՝ Լ. Տրոցկի, «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» հոդվածը, հրապարակվել է Ա. Սկաչկո կեղծանվամբ, որը Տրոցկու ղեկավարած Ռազմական նախարարության կադրերից էր, «Ուխտ Արարատի», թիվ 3 / 14, 2007, էջ 18-22):** Մի՞թե թերահասության հասնող պարզամտություն չէ այսքանից հետո թմբկահարել «թուրքական ճկուն դիվանագիտության» կամ «ադրբեջանական նավթի» մասին առասպելները...

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԻՐԱԿԱՆ ԵՐԵՍԸ, ԱՐԵՎՄՈՒՏՔԻ 130-ԱՄՅԱ ՀԱՄԱՌՈՒՄԻ ԲՈՒՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1822-ից միջազգային քաղաքական հարաբերությունների տերմինաբանության մեջ առաջացան **Արևելյան հարց, 1878-ից՝ Հայկական հարց** բառեզրերը: Սակայն, Հայկական հարցը մոռացության տալու, քաղաքական ասպարեզից աննկատ հանելու համար **1880-ից** Եվրոպայի գերտերությունները գործածության մեջ դրեցին Քրդստան հասկացությունը: Կնքահայրը, ինչպես կարող ենք համոզվել և՛ Րաֆֆու հոդվածներից, և՛ կից տրվող նյութերից, Մեծ Բրիտանիան էր:

Վաստակաշատ պատմաբան Զոն Կիրակոսյանի ուշադրությունից չէր վրիպել այն փաստը, որ 1894-96 թթ. համիդյան կոտորածներից հետո Անգլիան անցնում է գործնական քայլերի. «1897 թ. հունիսի 25-ին Կ. Պոլսի Ազգային ժողովը քննեց Ներսես Պատրիարքի առաջարկությունը՝ Անգլիայի դեմ բողոքի բանաձև ընդունելու մասին, քանի որ անգլիական իշխանությունները էրզրումի (որը թուրքերն անվանում էին «էրմենիստան») ընդհանուր հյուպատոսությունը «Քուրդիստանի գավառական հյուպատոսություն» էին անվանել: Ժողովի նախագահ Օտյան էֆենդին բարձրաձայն հայտնեց իր զարմանքը «այն սխալի» մասին, որ արել էր Անգլիան՝ անվանելով Հայաստանը Քուրդիստան»: **(Զոն Կիրակոսյան, «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» (XIX դարի 80-ական թթ.), Հայաստան հրտ., Երևան, 1980, էջ 56)**

«Մշակի» հուլիսի 4-ի (թիվ 16/107) առաջնորդողում Գրիգոր Արծրունին գրում էր. «Ուրեմն՝ Անգլիայի կարծիքով էլ չկա Հայաստան, այլ Հայաստանը Քուրդիստան էր դարձել...»: Անգլիայի դիրքը նա բացատրում էր հայերի նկատմամբ ունեցած թշնամությամբ: «Այժմ գուցե բթամիտ անգլիասերները կհամոզվեն՝ որքան անկեղծ էր Անգլիայի սերը դեպի հայոց ազգը»,- եզրակացնում էր Արծրունին: **(Նույն տեղում, էջ 57)**

«Անգլո-թուրքական դիվանագիտությունը ելնում էր այն բանից, որ, պահանջելով անկախություն տալ սլավոններին, Ռուսաստանը նույն պահանջը չի ներկայացնելու նաև հայերի համար, քանի որ այդ կնշանակեր Ռուսաստանի հրաժարումը «Ռուսական Հայաստանից»՝ «Թուրքահայաստանի» հետ անկախ, միասնական Հայաստան ստեղծելու համար,- գրում է պատմաբան Ա. Եսայանը,- և իսկապես, ցարական Ռուսաստանը (Բեռլինի կոնգրեսում - խմբ.) հայերի համար անկախության պահանջ չներկայացրեց Թուրքիային, բավարարվեց հայերի օգտին որոշ ռեֆորմներ անցկացնելու պահանջով»: **(Աղասի Եսայան, «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը», «Միտք» հրտ., Երևան, 1965, էջ 10-11)**

Այս պահից սկսած՝ Հայկական հարցը լուծվելու էր անգլիական ձևով՝ բրիտանական կայսերական ծրագրերի ու նկրտումների համաձայն, որն առավել խոսուն ներկայացված էր **Քեմալ փաշայի՝ 1879 թվականին առաջ քաշած քաղաքական ծրագրում**, եթե, իհարկե, դրանում արտահայտված հանցագործ գաղափարները կարելի է քաղաքական ծրագիր կոչել. «Եթե եվրոպական Թուրքիայում մենք տաքացրեցինք օձերին, ապա ասիական Թուրքիայում մենք չպետք է կրկնենք նույն հիմարությունը: Ողջամտությունը պահանջում ոչնչացնել ու ջնջել մեր հողի երեսից բոլոր այն տարրերին, որոնք կարող են մեզ վտանգ սպառնալ և միջամտության օբյեկտ ու զենք ծառայել եվրոպական տերությունների ձեռքում: Այժմ, համենայնդեպս այսօր, մեր շահերը և Անգլիայի շահերը պահանջում են, որպեսզի Փոքր Ասիայում (մենք և Անգլիան չենք ճանաչում «Հայաստան» բառը, և անգամ այն ծնոտները, որոնք արտասանում են այդ բառը պետք է ջնջխվեն) մեր տերիտորիաները ազատ լինեն ուրիշների միջամտության աղբյուրից, հետևաբար, այդ սրբազան նպատակին հասնելու համար անհրաժեշտ է, և պետական իրավունքն այդ է պահանջում, վերացնել մազաչափ անգամ կասկածելի երևույթներն ու տարրերը և անվտանգ դարձնել մեր ապագան, հետևաբար այդ հայկական ազգը մենք պետք է ջնջենք մեր հողի երեսից անհետ (այսինքն՝ անողոքաբար կոտորել): Այդ ծրագրի իրականացման համար մենք ունենք այնպիսի միջոցներ, ինչպիսիք են քրդերը, չերքեզները, մարզերի պետերը, դատավորները, հարկահավաքները, ոստիկանությունը, վերջապես, բոլոր նրանք, ովքեր սրբազան պատերազմ են հայտարարում այդ ազգին, որը չունի զենք և պաշտպանություն, իսկ մենք ընդհակառակը, ունենք զենք ու բանակ և աշխարհի ամենահարուստ տերությունը՝ (Անգլիան) որպես դաշնակից և մեր տիրույթների խնամակալ Փոքր Ասիայում»: **(Աղասի Եսայան, «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը», «Միտք» հրտ., Երևան, 1965, էջ 18-19, «Փորձ», 1879, թիվ 7 / 8, էջ 204-205)**

Թուրքական **«տիրույթների անգլիական այդ խնամակալությունը»՝** իր ողբերգական հետևանքներով հայության և Հայաստանի համար, շարունակվում է մինչև այսօր: Այսուհետև պե՞տք է արդյոք զարմանալ **անգլիական քաղաքական շրջանակների ներկայացուցիչ, ԵԽԽՎ-ի Գլխավոր քարտուղար Թերի Դևիսի՝** ՀՀ-ում մամլո ասուլիսի ընթացքում հնչեցրած պատասխանների վրա[1]. «Ըստ ամենայնի, ԵԽԽՎ-ի Գլխավոր քարտուղար Թերի Դևիսը ամենից շատ կարևորում էր հենց Ղարաբաղի հարցը և հստակ հաշտության պատգամով էր եկել Հայաստան: Այդ մասին նա խոսեց նաև ասուլիսում՝ չմոռանալով հիշատակել, որ մինչև գլխավոր քարտուղարի պաշտոնը ստանձնելը, ինքը զեկույց է պատրաստել ԼՂ հակամարտության կարգավորման վերաբերյալ: Սակայն, պատասխանելով այն հարցին, թե ինչո՞ւ այս անգամ, ինչպես սովորաբար, Թերի Դևիսը չդատապարտեց ԼՂՀ-ում անցկացված (ՏԻՄ) ընտրությունները,

Թերի Դևիսը պատասխանեց անհարկի համեմատությամբ. «Ղարաբաղի ռեժիմն աշխարհում ճանաչված չէ, և եթե ես չեմ դատապարտում ՏԻՄ ընտրությունը, ապա դա դեռ չի նշանակում, թե ճանաչում եմ այն: Պարզապես, ես չեմ ուզում ամեն առիթով դատապարտել մարդկանց: Եթե ես արձագանքեմ աշխարհում տեղի ունեցող համանման բաներին, ապա դրա համար գուցե ժամանակը չբավականացնի: Օրինակ, եթե որևէ տեղ արվամոլների շքերթի արգելման հետ կապված հանրահավաք է, այդ դեպքերում պարտադիր չէ, որ ես ամեն անգամ հանդես գամ այդ արգելքը դատապարտող հայտարարությամբ: Լռությունը երբեմն անհամաձայնության լավագույն ձևն է»: Ստիպված էինք նկատել, որ Թերի Դևիսն իր ելույթներում Ղարաբաղի՝ թեկուզ չճանաչված ղեկավարությանը կոչում է «ռեժիմ», մինչդեռ այդ բառը երբեք չի օգտագործում Կոսովոյի վերաբերմամբ: Մի՞թե գործ ունենք երկակի ստանդարտների հետ. ինչո՞վ է տարբերվում Կոսովոյի ալբանացիների ինքնորոշման իրավունքը Ղարաբաղի հայերի իրավունքից: «ՀՀ» թղթակցի այս հարցին ի պատասխան՝ եվրոպացի պաշտոնյան ներկայացրեց իր մոտեցման հիմքերը, որոնք ամրապնդեցին երկակի ստանդարտների մասին մեր պատկերացումները. «Կոսովոյի ու ԼՂ-ի միջև կա մեծ տարբերություն: Կոսովոյում ՄԱԿ-ի առաքելությունն է և KFOR-ը, որում Եվրամիության զինվորներն են: Կոսովոյում չկա անջատողական ռեժիմ: Իհարկե, ես իրատես եմ, հասկանում եմ, որ Կոսովոյում ոմանք ցանկանում են անջատվել Սերբիայից, բայց դա կառավարությունը չէ: Այնտեղ ռեժիմ չէ, այլ ավանդական կառավարություն, որը հիմնված է ՄԱԿ-ի բանաձևի վրա», - ասաց ԵԽԽՎ գլխավոր քարտուղարը՝ նորից ինչպես Ղարաբաղի, այնպես էլ Աբխազիայի, Մերձդնեստրի իշխանություններին կոչելով անջատողականներ»:

Դեռևս 120 տարի առաջ Րաֆֆին նկատել էր և սթափեցման էր կոչել հայ քաղաքական միտքը. **«Թուրքիայի հայերը մինչև այսօր իրենց բոլոր հույսը դրել էին դիվանագիտական բանակցությունների վրա, ամեն ինչ սպասում էին Եվրոպայից և իրենց փրկությունը միայն Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի մեջ էին որոնում: Բայց Անգլիայի պետական մարդիկներից մեկը՝ միստր Բրայսը, այս օրերում (1880 թվին) խիստ ճիշտ կերպով նկատեց Կ. Պոլսի հայերին. «Աշխատեցեք չճանճրացնել Եվրոպային»**: Նկատենք, որ այն սթափեցնող է և այսօր…

Ճիշտ կլինի Րաֆֆու միտքը ավարտենք Ֆ. Նանսենի խոսքերով. «**Եվրոպական ժողովուրդներն ու պետական գործիչները հոգնել են մշտնջենական Հայկական հարցից: Դա ինքնըստինքյան հասկանալի է: Չէ՞ որ այդ հարցը նրանք ձախողեցին:** Հայաստան անունը նրանց նիրհած խղճերում արթնացնում է սոսկ ուրացած կամ չկատարած խոստումների տհաճ հիշողություններ: Նրանք մատը մատին չխփեցին իրենց խոստումները կատարելու համար, քանի որ դրանք տրվել էին թեև փոքր, արնաքամ, սակայն շնորհալի մի ժողովրդի, որը չուներ նավթի ու ոսկու հանքավայրեր: **Կարեկցում եմ հայ ժողովրդին, որ խճճվեց եվրոպական քաղաքականության մեջ: Նրա համար ավելի լավ կլիներ, եթե իր անունը երբևէ հնչած չլիներ եվրոպացի որևէ քաղաքագետի բերանից»: (Ֆրիտյոֆ Նանսեն, «Խաբված ժողովուրդ», ԵՊՀ հրտ., Երևան, 2000, էջ 272-273)**

Րաֆֆու հոդվածը, զարմանալի չէ, որ գրվել է հենց այդ թվերին, և այն պետք է որպես ահազանգ հնչեր հայերիս համար… ցավոք, այդպես չեղավ: **(Խմբ.)**

ՐԱՖՖԻ «ՓԱԽՈՒՍՏԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ» (1880 թ.)

Հեռագիրը մեզ լուր բերեց, թե Բ. Դուռը յուր պատասխանի մեջ, որ հաղորդած է Կ. Պոլսի եվրոպական դեսպաններին, խոստացավ համոզել ալբանացիներին՝ զիջանել Դուլցինիոն Չեռնոգորիային, և պարտավորվում է վճռել հունաց հարցը երեք ամսվա մեջ, իսկ հայոց հարցը՝ չորս ամսվա մեջ[2]:

Այդ դարձյալ նույն մթին, երկդիմի և նենգավոր պատասխաններից մեկն է, որով Բ. Դուռը սովորություն ունի միշտ խույս տալ Եվրոպայի պահանջումների ուղղակի կատարելուց, փախուստի ճանապարհ գտնել և նոր դժվարություններ, նոր արգելքներ սարքելու համար ժամանակ վաստակել:

Բ. Դուռը պարտավորվում է հայոց խնդիրը չորս ամսվա մեջ վճռել, բայց ի՞նչ կերպով, ի՞նչ ռեֆորմներ պիտի մտցնե Հայաստանում, այդ մասին լռում է:

Ի նկատի ունենալով թուրքաց Հայաստանում կատարվող այժմյան անցքերը՝ շատ հեշտ է նախագուշակել, թե Բ. Դուռը այս չորս ամսվա ընթացքում ինչ կերպով կվճռե հայկական խնդիրը:

Նա կուղարկե Հայաստան, ինչպես առաջ, կոմիսերներ, կուղարկե Հոբարդ փաշայի նման բարեկարգիչներ **(1)**, ցույց կտա, թե աշխատում է վերանորոգություններ մտցնել, բայց միևնույն ժամանակ քրդերին, թուրքերին և ամբողջ մահմեդական ամբոխը գաղտնի կերպով կգրգռե հայերի դեմ և, փոխանակ բարեկարգությունների, արյուն, կոտորած, ավերմունք կտարածե Հայաստանում: Չորս ամիսը ժամանակ է այդ բոլորը կատարելու համար:

Եվ երբ Հայաստանը կծխի արյան և կրակի մեջ, նա կպատասխանե Եվրոպային. «Իմ ժողովուրդը դեռ պատրաստ չէ: Ես ամեն միջոցներ գործ դրեցի, Հայաստանում վերանորոգություններ մտցնելը առայժմ անհնարին է, որովհետև մահմեդական ամբոխի կրոնական զգացմունքը, թուրքերի ազգային հպարտությունը վիրավորվում է հայերին առանձնաշնորհումներ տալու պատճառով»:

Խոստանալ և չկատարել. այդ Թուրքիայի վաղեմի սովորությունն է: Իսկ բարիք խոստանալ և չարը գործադրել, այդ պահանջում է նրա այժմյան ամենախարդախ քաղաքականությունը:

Հասկանալի է, որ Բ. Դուռը ամեն տեսակ հնարներ գործ պիտի դնե, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը գործադրություն չգտնե Հայաստանում[3]: Նա շատ լավ հասկանում է, թև այդ հոդվածը ինչ ապագա է պատրաստում հայերի համար:

Հայաստան բառը խիստ անախորժ տպավորություն է գործում Թուրքիայի ջղերի վրա[4]: Բ. Դուռը բացարձակ կերպով հայտնեց հայոց պատրիարքին, թե յուր պետության մեջ Հայաստան անունով երկիր չէ ճանաչում. նա հայտնեց Կ. Պոլսի եվրոպական դեսպաններին, թե Հայաստանում **բացառապես** վերանորոգություններ մտցնելու դիտավորություն չունի, այլ պիտի մտցնե ընդհանուր վերանորոգություններ ամբողջ Փոքր Ասիայի մեջ: Ի՞նչ են նշանակում այդ խոսքերը: Շատ պարզ է, որ Բ. Դուռը չէ ցանկանում Հայաստանը դարձնել մի արտոնական երկիր, որպեսզի այդ երկիրը, իբրև մի որոշ մարմին չառանձնանա և չանջատվի յուր պետությունից: Բալկանյան թերակղզու իշխանությունների կազմվելու պատմությունը, իհարկե, Թուրքիան շուտով մոռանալ չէր կարող:

Չնայելով, որ հայերի նպատակը խիստ համեստ է, չնայելով, որ հայերը ցանկանում են ունենալ մի բարվոք կառավարություն միայն և ազատվել մահմեդականների՝ մինչև այսօր գործ դրած դարավոր բարբարոսություններից, այսուամենայնիվ, Բ. Դուռը չէ կամենում կատարել նրանց իրավացի պահանջումները, որ ամեն մի փոքրիշատե բարեկարգ պետության քաղաքացին իրավունք ունի վայելելու:

Այդ բավական չէ. այժմ Թուրքիան աշխատում է հայկական խնդիրը խեղդելու նպատակով ոչնչացնել հայ տարրը: Աշխատում է լցնել Հայաստանը քրդերով[5], չերքեզներով, լազերով, աջարացիներով և այդ բոլոր ցեղերի բարբարոսությունը գրգռել հայերի դեմ: Ռուսաց նոր նվաճած երկրներից գաղթող բազմաթիվ մահմեդականներին նա զետեղեց Հայաստանի մեջ: Իսկ եվրոպական Թուրքիայից դուրս եկող գաղթականների խումբերը նույնպես ուղարկում է դեպի Հայաստան:

Նպատակը հայտնի է, և չորս ամիսը բավական ձիգ ժամանակ է նրան իրագործելու համար...

Նշանները արդեն երևում են Վասպուրականի մեջ, որ Հայաստանի սիրտն է, նկատվում է քրդերի կատաղի հուզմունք, այրվում են գյուղեր, սպանվում են մարդիկ, և ասպատակությունը օրըստօրե ավելի ընդարձակվում է, ավելի սպառնական ձև է ստանում: Տարոնի նահանգում նույնպես արյուն է հոսում: Սովուղ-Բուլախի գավառում Շեյխ Իբադուլլահը, յուր գլխին հավաքած ավելի քան տասն հազար ավազակներ, վտանգ է սպառնում Ատրպատականի հայերին: Հեքարիի կողմերում Բահրի բեգը, յուր ցեղի գլուխ անցած, ավերմունքներ է գործում: Հին-Բայազետի կողմերում Հեյդարանլի քրդերը կողոպտում են հայերին: Ամեն տեղ նկատվում են միևնույն չարագործությունները, որոնց կեղևի տակ թաքնված է թուրք կառավարության պաշտոնատարների նենգավոր ձեռքը[6]: Իսկ Կ. Պոլսի մահմեդական մամուլը[7] այդ բոլոր բարբարոսությունները բացատրում է քրդական միության անունով...



Ինչպե՞ս պիտի վարվեն Թուրքիայի հայերը վերոհիշյալ բոլոր չարագործությունների դեմ:

Թուրքիայի հայերը մինչև այսօր իրենց բոլոր հույսը դրել էին դիվանագիտական բանակցությունների վրա[8], ամեն ինչ սպասում էին Եվրոպայից և իրենց փրկությունը միայն Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի մեջ էին որոնում: Բայց Անգլիայի պետական մարդիկներից մեկը՝ միստր Բրայսը[9], այս օրերում (1880 թվին) խիստ ճիշտ կերպով նկատեց Կ. Պոլսի հայերին. «Աշխատեցե՛ք չձանձրացնել Եվրոպային» (2):

Մենք կավելացնենք հայասեր անգլիացու խոսքերին, ոչ թե Եվրոպան, այլ Աստված ինքը չի օգնի Թուրքիայի հայերին, եթե նրանք ինքները իրենց օգնելու մեջ ծույլ կլինին...

Թուրքիան խոստանում է վճռել հայոց հարցը չորս ամսվա մեջ: Գուցե վճիռը նրանով կվերջանա, որ չորս ամսից հետո էլ Հայաստանում հայ չի մնա...[10]:

(Րաֆֆի, երկերի ժողովածու, հ. 11, Հրապարակախոսական և գրական-քննադատական հոդվածներ, Նաիրի հրտ., Երևան, 1991, էջ 334)

<u>Ծանոթագրությունը՝ Րաֆֆու հատորը կազմողների</u>

Հոդվածը Րաֆֆու կենդանության ժամանակ չի հրատարակվել: Ճիշտ է, տեքստում հանդիպում ենք հոդվածի գրության թվականին՝ 1880, բայց ամենայն հավանականությամբ, փակագծերի մեջ առնված այդ թվականը հետագայում ավելացվել է Աննա Րաֆֆու կողմից, գուցե «Մշակի» անունը հիշատակող բառակապակցության փոխարեն:

Առաջին անգամ լույս է տեսել 1895 թ., «Տաճկահայք» ժողովածուում, հետագայում տպագրվել է նույն ժողովածուի 1913 թ. Վիեննայի հրատարակության մեջ:

Արտատպվում է «Տաճկահայք» ժողովածուից, Թիֆլիս, 1895:

1. Բ. Դուռը... կուղարկե Հայաստան, ինչպես առաջ, կոմիսերներ, կուղարկե Հոբարդ փաշայի նման բարեկարգիչներ... - Ավգուստ Չարլզ Հոբարդ (1822-1886), թուրքական ծովակալ, ազգությամբ անգլիացի, մոլի թուրքամոլ էր, կոպիտ ուժի քաղաքականության կողմնակից, անցյալ դարի կեսերից սկսած՝ բազմիցս ցուցաբերել է անհանդուրժողականություն Թուրքիայի հակառակորդների նկատմամբ (էջ 334):

2. Բայց Անգլիայի պետական մարդիկներից մեկը՝ միստր Բրայսը, այս օրերում (1880 թվին) խիստ ճիշտ կերպով նկատեց... - Ջեյմս Բրայս (1838-1922), անգլիական պետական գործիչ, իրավաբան, պատմաբան. 1866-1892 թթ. եղել է Անգլիայի արտաքին գործերի մինիստրի տեղակալ: Ունեցել է հայապաշտպան գործունեություն, 1876-ին հիմնել է Անգլո-հայկական ընկերությունը, եղել է Հայաստանում, գրել է «Անդրկովկասն ու Արարատը» գիրքը (1877), կոտորածների ժամանակ հանդես է եկել հայերի պաշտպանությամբ (էջ 336):

<u>Ծանոթագրությունը՝ «Ուխտ Արարատի»</u>

1. Հարցի կարևորությունը նկատի ունենալով՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի մեկնաբան Ծովինար Նազարյանի թղթակցությունը մեջբերում ենք ամբողջությամբ:

2. Նույն չորս ամսվա մասին են ժամանակ առ ժամանակ խոսում եվրո-կոմիսարները Ղարաբաղյան հարցում: Վերջին չորս ամսվա մասին խոսակցությունը մտորելու տեղիք է տալիս ոչ միայն մեզ:

3. Այդպես էլ եղավ, սակայն, ոչ այնքան Թուրքիայի, որքան հենց միայն եվրո-գերտերությունների ջանքերով:

4. Ոչ միայն Թուրքիայի, այլև Անգլիայի, օրինակ, 1919-ին՝ Լոուրենս Արաբացու. **«Հայերը պետություն չպետք է ունենան»**, 1921-ին՝ Լև Տրոցկու. **«Հայերը պետք է զիջեն»**, հիմա էլ արևմուտքի կոմիսարների ջղերի վրա: Այդպիսի բազմաթիվ օրինակներ կարող եք գտնել մամլո հաղորդագրություններում...

5. Հիմա էլ քրդերով են բնակեցնում ինչպես Ադրբեջանը, այնպես էլ Արցախի հարակից տարածքները: Այս գործում մեծ ակտիվություն է նկատվում հատկապես վերջին տարիներին:

6. Նաև Անգլիայի պաշտոնյաների...

7. Նաև եվրո-գերտերությունների մամուլը...

8. Նույնը կատարվում է հիմա, այն տարբերությամբ միայն, որ 1994-ից առ այսօր ոչ թե հայ ժողովուրդը, այլ ՀՀ իշխանություններն իրենց հույսը դրել են բանակցությունների վրա, իսկ դա չարյաց փոքրագույնը կլիներ, եթե ՀՀ եվրոբարեհորոգումները այսչափ չվնասեին ու չվտանգեին ՀՀ-ի ու ԼՂՀ-ի ժողովրդին:

9. Բրայսի գործունեությանը հետևեցին 1894-96 թթ. համիդյան ջարդերը: Դրա զուգահեռները տես՝ Պաուլ Ռորբախի գործունեության մեջ, Գերմանիա, 1902թ., որին, ըստ էության, հետևեց երիտ-թուրքերի իրականացրած 1915-18 թթ. ցեղասպանությունը:

10. Րաֆֆու կանխատեսումը իրականացավ, դա եվրո-գերտերությունները կարողացան իրականացնել 1915-23 թթ. Արևմտյան Հայաստանում, Հայկական Կիլիկիայում, Օսմանյան կայսրության ողջ տարածքում՝ երիտթուրքերի ձեռքով, որոնց հետագայում նախ ազատ արձակեցին, ապա հանգիստ խղճով հայ վրիժառուների դատին հանձնեցին: Սակայն, Քեմալին և նրան ոգեշնչող բոլշևիկներին նույնը չհաջողվեց անել Արևելյան Հայաստանի նկատմամբ, հակառակ այն փաստի, որ հայկական մեծածավալ կոտորածներ իրականացվեցին նաև Արևելյան Հայաստանում:

Ինչո՞ւ, ե՞րբ և ո՞ւմ կողմից շրջանառության մեջ դրվեց «Քրդական միություն», «քրդական գավառ», «Քրդստան» հասկացությունները… Ո՞րն է դրանցում երևութականը, և որը՝ իրականը, բուն խնդիրը:

Հարցեր, որոնց հստակ պատասխանը, վերլուծական հենքը, իր ժամանակին տվել է Րաֆֆին: Սակայն, նրանք, ովքեր հայոց մեջ պարտավոր էին սերտել և հասկանալ իրերի իսկությունը, ովքեր պետք է վտանգները դիմագրավելու հակաքայլեր մշակեին, նախահարձակ լինելու ծրագրային գործընթաց խթանեին, չհավատացին Րաֆֆուն, անգամ իրենց տեսածին ու լսածին չհավատացին և գնացին ինքնախաբեության ճանապարհով՝ պատճառ դառնալով հայոց շուրջ 120-ամյա մեծ կորուստների, շարունակ առերեսվելով մեր հանդեպ իրականացված մեծածավալ հանցագործություններին ու դրա հետագա ծավալումներին:

Ամեն ոք կարող է կարդալ Րաֆֆու այս գործը, որը խորհրդային տարիներին չի հրատարակվել, համաձայն՝ 1921թ. մարտի 16-ի «Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության պայմանագրի» 8-րդ հոդվածի, որտեղ, մասնավորապես, ասված է. «Պայմանավորվող երկու կողմերը պարտավորվում են իրենց տերիտորիաներում արգելել այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք ունեն մյուս երկրի, կամ նրա տերիտորիայի մի մասի կառավարության դերն ստանձնելու հավակնություն, ինչպես նաև պարտավորվում է իրեն տերիտորիայում արգելել այնպիսի խմբերի գոյությունը, որոնց նպատակն է պայքարը մյուս երկրի դեմ: Ռուսաստանն ու Թուրքիան փոխադարձության պայմանով ստանձնում են նույնպիսի պարտավորություն նաև Կովկասի Սովետական Հանրապետությունների վերաբերմամբ»: **(Ջոն Կիրակոսյան, Ռուբեն Սահակյան, «Հայաստանը միջազգային դիվանագիտության և արտաքին քաղաքականության փաստաթղթերում՝ 1828-1923 թթ.», «Հայաստան» հրտ., Երևան, 1972, էջ 499):**

Եվ որպեսզի ԽՍՀՄ-ում արգելեին **«այնպիսի խմբերի և կազմակերպությունների առաջացումն ու գոյությունը սեփական տերիտորիաներում, որոնց նպատակն էր պայքարը մյուս երկրի դեմ»,** որոշեցին արգելել նախ և առաջ Րաֆֆուն… նրա հստակ ու խորաթափանց վերլուծությունների վերահրատարակությունը:

Մինչդեռ Րաֆֆին դեռ այն ժամանակ գրում էր. **«Հայկական խնդիրը յուր խանձարուրի մեջ խեղդելու համար նա** (Բ. Դուռը - խմբ.) **աշխատում է այժմ կազմել մի քրդական միություն»**: Ինչպես կտեսնենք հետագայում, խոսքը միայն թուրքական իշխանությունների մասին չէ, այլև այդ գործում գլխավոր դերակատարություն ստանձնած և ունեցած անգլիական կայսերական կառավարության: Հայկական հարցի լուծումը խոչընդոտելու նպատակով առաջ քաշվեց քրդական գործոնը: Առավել քան պարզ թվացող այս քաղաքական խաղի ենթատեքստը մեր օրերում բացահայտում է այն ժամանակների խորքային նպատակները: Առաջին խնդիրը Հայկական հարցը հայերի բնաջնջման միջոցով լուծելն էր: Երկրորդը՝ հայ-թուրքական տևական թշնամանք ստեղծելը: Երրորդը՝ հայ-քրդական թշնամանքի սաղմնավորումը: Նշյալ երրորդ ուղղությամբ, ոչ միայն 19-րդ դարի վերջին, այլև 20-րդ դարի սկզբին բավական մեծ աշխատանք է կատարվել, և հակառակ նրան, որ քրդական շատ աշիրաթներ մասնակցեցին նաև Հայոց ցեղասպանությանը, չհաջողվեց հայ-քրդական թշնամանք հրահրել, թեև գոյացավ որոշակի սառնություն ու անվստահություն քրդերի հանդեպ: Սակայն, այն, ինչ տեղի է ունենում մեր օրերում, անհանգստացնում է իր ահռելի մասշտաբներով:

Այսօր, երբ Հայաստանի անկախության ձեռքբերմամբ Հայկական հարցը միջազգային իրավական ոլորտում արծարծելու և լուծելու իրական պատուհան է բացվել, արևմուտքում կրկին աշխուժացնում են քրդական գործոնը, այն էլ այնպիսի սադրիչ ձևերով ու արտահայտություններով, որ կարող է վնասել հայ և քուրդ ժողովուրդների բարեկամական հարաբերություններին ու ներքաշել նրանց այնպիսի մի դիմակայության ոլորտ, որից շահած դուրս չեն գալու երկու կողմերն էլ: Գուցե կարող ենք հանգստանալ ու հանգստացնել ինքներս մեզ, թե այդ ամենը արդեն տեսել ենք: Իսկ դասեր քաղե՞լ ենք:

2006-ի օգոստոսին ԱՄՆ Ձինված ուժերի պաշտոնաթող սպա **Ռալֆ Պիտերսը** մի հոդված հրապարակեց, որտեղ բավական մեծ բաժին է հատկացված քրդական պետություն ստեղծելու հարցերին և հոդվածին կից քարտեզով տրված է ապագայի այդ պետության սահմանները: Քրդական պետության Իրաքի հյուսիսային տարածքների հետ միասին հեղինակը ներառել է նաև 1920 թ. Սևրի դաշնագրով Հայաստանին տրված Արևմտյան Հայաստանի և Արևելյան Հայաստանի տարածքները: Հիշեցնենք, որ Միջին Արևելքի երկրների սահմանները գծվել են հենց այդ դաշնագրով, հայտնի պատճառներով մինչև հիմա չեն իրականացվել միայն Հայաստանին վերաբերող դրույթներն ու որոշումները: Հիշեցնենք նաև, որ Սևրի դաշնագրի Հայաստանին վերաբերող դրույթները չեղյալ չեն հայտարարվել և ուժի մեջ են մինչև այսօր: Բայց այնուամենայնիվ, խայծը նետված է: Իսկ դրան պատասխաններ պետք է գտնել:

Ամերիկացի մեկ այլ հեղինակ՝ ԱՄՆ բանակի ռազմական քոլեջի դասախոս **Ստեֆան Բլանկը**, ձգտում է հատուկ լարվածություն ձևավորել, որպես փաստարկ օգտագործելով ադրբեջանական ու թուրքական իշխանություններին ենթակա մամուլի հրապարակումները Քրդական բանվորական կուսակցության (ՔԲԿ) ռազմական ճամբարների մասին ԼՂՀ-ում և ՀՀ-ում: Ազգամիջյան ատելություն ու թշնամանք սերմանելու, դրանց միջոցով սեփական կայսերական շահերը հետապնդելու եվրո-գերտերությունների հայտնի ձեռագիրը նկատել ու բացահայտել է Րաֆֆին դեռևս 1880-ականներին, որի հետևանքներին, թե՛ մենք, թե՛ քրդերը ծանոթ ենք պատմությունից: Արդ, մեզնից է կախված մեր ժողովուրդների օրինական, իրատեսական, իրական շահերը հետապնդելու, մեր ժողովուրդներին սադրանքների ու վտանգների չենթարկելու և ինքնուրույն ներքին ու արտաքին քաղաքականություն վարելու, խոհեմ դիվանագիտություն իրականացնելու կարողությունը:

Դրա մասին է Րաֆֆու այս հոդվածը: **(Խմբ.)**

ՐԱՖՖԻ
«ՔՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
(1880 թ.)

Բեռլինի վերջին կոնգրեսի[1] վճիռները Հունաստանի և Չեռնոգորիայի վերաբերությամբ կողմնակի կերպով մերժելու և եվրոպական պետությունների պահանջումների առջև դժվարություններ հարուցանելու համար Բ. Դուռը[2] ստեղծեց ալբանական միությունը[3]: Իսկ Հայկական խնդիրը յուր խանձարուրի մեջ խեղդելու համար նա աշխատում է այժմ կազմել մի **քրդական միություն**:

Դեռ մի քանի ամիս առաջ Կ. Պոլսի թուրք մամուլը անամոթաբար սկսեց հռչակել քուրդ տարրի քաղաքակրթական հրաշալիքները, որոնցով հայկական լեռների այդ վայրենի գազաններին աշխատում էր ներկայացնել Եվրոպայի աչքում ոչ միայն իբրև արևելքի, այլև իբրև արևմուտքի լուսավորիչներ[4]: Մի այդպիսի երեխայական աչքակապությունը թուրք մամուլի կողմից, ստոր է ամեն կրիտիկայից, այն մա-

մուլի, որ մի ժամանակ պահանջում էր քրդերի իսպառ բնաջինջ անելը, նրանց ոչնչացնելը, որպես անպետք և վնասակար մի տարր, որպեսզի Թուրքիայի արևելյան սահմանագլուխներն ազատվեին այդ ավազակների անընդհատ ասպատակություններից:

Սուլթան Աբդուլ Մեջիդը[5] **(1)** հայտնվեցավ որպես մի սպառնալի գործիք քրդերին ոչնչացնելու համար, և նրանց անշուշտ վիճակված կլիներ ենիչէրների կոտորածը, եթե այն ժամանակվա երևելի դիպլոմատ և առաջին վեզիր Ալի փաշան չմեղմեր սուլթանի բարկությունը: Խորամանկ վեզիրը կարողացավ համոզել խալիֆների դյուրահավատ գահակալին՝ հայտնելով այն միտքը, թե քուրդերը, թեև ավազակ, բայց միևնույն ժամանակ պատրաստի զինվորներ են Թուրքիայի համար, և կառավարությունը պետք է փոքրիշատե զիջանի նրանց անկարգություններին, որպեսզի նրանք միջոցներ ունենային ապրելու և հարկավորած ժամանակ ծառայեին որպես քաջ պատերազմողներ:

Իսկ այդ զիջողությունը խիստ թանկ էր նստում կառավարությանը: Ամայացնելով սահմանագլխի ամբողջ գավառները, վերջին չքավորության մեջ ձգելով ժողովրդին, խանգարելով երկրագործությունը և վաճառականությունը՝ քրդերը ոչ միայն իրանք հարկ չէին վճարում, բայց միևնույն ժամանակ զրկում էին տերության գանձարանը որևիցե եկամուտ ստանալու այն երկրներից, որ այդ վայրենիները դարձրել էին իրանց հափշտակությունների ասպարեզ:

Սուլթան Աբդուլ Ազիզի[6] **(2)** կառավարությունը քրդերին զսպելու համար այն եզրակացության հասավ, թե պետք է նրանց զինաթափ անել, թե պետք է նրանց հեռացնել վրանաբնակ հովվի թափառաշրջիկ կյանքից և ընտելացնել երկրագործի հաստատաբնակ կյանքին[7]: Ամեն աշխատություններ ապարդյուն անցան, և քրդերը մնացին միշտ աստանդական հովիվներ և իրանց անասունների հոտերով ամառը թափառում են Հայաստանի հովասուն լեռների վրա, իսկ ձմեռը իջնում Տիգրիսի հովտի ջերմ տափարակների վրա: Իսկ ինչ վերաբերում է նրանց զինաթափ անելուն, այդ նույնպես մնաց անկատար, չնայելով, որ Վանի փաշաներից մեկը հնարեց մի ծիծաղելի տուրք, որով քրդերը պարտավորվում էին վճարել մի նշանակյալ հարկ, եթե կշարունակեին զենք կրել:

Այդ միջոցներում սկսվեցան կառավարության ճնշումները քուրդ ցեղապետների վրա: Բագրխան բեկին աքսորելը և նրա ազգատոհմի մեծ մասը սրից անցկացնելը պետք է համարել այն սաստիկ հարվածներից մեկը, որ թուրք կառավարությունը որևիցե ժամանակ հասցրել է քրդերին: Դրանից հետո քուրդ ցեղապետները դարձան կառավարության ներկայացուցիչների ձեռքում մի տեսակ արդյունքի աղբյուր: Նրանց բանտարկում էին, տանջում, աքսորում, և այդ բոլորը կատարվում էր ոչ այնքան երկիրը խաղաղեցնելու նպատակով, որքան օգուտ էր բերում փաշաներին, որոնք, կաշառքներ ընդունելով, կրկին բաց էին թողնում կալանավորին[8]: Կարգ և կանոն պահպանելու այդ ձևը առիթ էր տալիս քուրդ ավազակներին ավելի ևս եռանդով հարատևել իրանց հափշտակությունների մեջ՝ կապիտալ ձեռք բերելու համար, որպեսզի նրանով կարողանային ազատվել, եթե մյուս անգամ պատահեր նրանց կալանավորված լինել:

Քրդերի հասկացողությամբ այդ անիրավացի ճնշումները, այդ անդադար հալածանքները սնուցին քրդերի մեջ մի սաստիկ թշնամություն դեպի թուրք կառավարությունը մասնավորապես և դեպի առհասարակ թուրքերն ընդհանրապես: Խանգարում էին նրանց սովորական կյանքի եղանակը, զրկում էին նրանց ապրուստի միջոցներից՝ ավազակությունից, որ քրդերի ցեղային և ավանդական սովորությամբ համարվում է ոչ բոլորովին անբարոյական մի պարապմունք:

Այդ ատելությունը դեպի թուրքերը առիթ տվեց քրդերին ավելի մոտենալ հայերին և ավելի մտերմանալ նրանց հետ:

Քրդերի ամբողջ ժողովուրդը, բաժանված լինելով բազմաթիվ տարբեր և միմյանց հետ թշնամի ցեղերի, անկարելի էր, որ նրանց մեջ կազմվեր միություն, որով կարողանային ընդդիմանալ կառավարության ճնշումներին: Պատսպարված լինելով հայկական լեռների մեջ, նրանք իրանց վրեժխնդրությունը լրացնում էին նրանով, որ, կողոպտելով երկրի մի մասը, հեղեղի նման անցնում էին մի ուրիշ երկիր, և տեղային վարչությունները իրանց անզոր ուժերով երբեք չէին կարողանում վերջ դնել քրդերի անընդհատ արշավանքներին:

Իսկ այդ ցեղերի մեջ կային և այնպիսիները, որոնք համեմատաբար ավելի հանգիստ էին բնավորությամբ, որոնք, որպես միամիտ հովիվներ, ապրում էին նահապետական պարզ կյանքով: Այդ վերջինների ցեղապետները ոչ սակավ անգամ դիմում էին հայ էֆենդիների և հայոց հոգևոր առաջնորդների օգնությանը թուրք կառավարիչների կամայականությունից պաշտպանություն գտնելու համար: Հայ էֆենդիները և հայոց հոգևոր առաջնորդները, որոնք ավելի նշանակություն ունեին կառավարության առջև, որպես երկրի գլխավոր և մեծամասնություն կազմող ազգաբնակության ներկայացուցիչներ, չէին խնայում իրանց պաշտպանությունը, թեև այդ պաշտպանությունը շատ հաճելի չէր կարող լինել հայ ժողովրդին, որ պատմական ատելություն ուներ դեպի քրդերի առհասարակ բոլոր ցեղերը: Այդ էր պատճառը, որ Վանի առաջնորդ Պողոս վարդապետը հարուց յուր դեմ մի ահագին կուսակցություն այն պատճառով միայն, որ նա պաշտպանում էր քուրդ ցեղապետներին, նրանց հետ բարեկամություն էր պահպանում և պատահած ժամանակ յուր սեպհական ծախքերով ազատում էր նրանց բանտերից: Շարունակ տասն տարի Վանի հայերը բաժանված էին երկու կուսակցության, որոնցից մեկն աշխատում էր պաշտոնից հեռացնել քրդասեր առաջնորդին, իսկ մյուսն աշխատում էր պահպանել նրան: Այդ կռիվները երկար զբաղեցրին Կ. Պոլսի հայոց մամուլին և ոչ սակավ հոգսեր պատճառեցին պատրիարքարանին:

Հայ առաջնորդների և հայ էֆենդիների՝ քրդերի խաղաղասեր ցեղերին պաշտպանելը մի ուրիշ նպատակ չուներ, բացի նրանից, որ վաճառականները այդ ցեղերի հետ առևտրական հարաբերություններ ունեին, մատակարարում էին նրանց կենսական անհրաժեշտ պիտույքներ և փոխարենն ստանում էին նրանց հովվական արդյունաբերությունը, որպես էին՝ յուղ, պանիր, բուրդ և անասուններ: Շատ պարզ է, որ քրդերի կողոպտվելը թուրք կառավարության պաշտոնատարներից վնասում էր հայ վաճառականների, հայ կապիտալիստների շահերին, որովհետև քրդերը միշտ նրանց փողի պարտականություն ունեին:

Այդ հարաբերություններն ստեղծեցին հայերի և քրդերի մի քանի ցեղերի մեջ սերտ հավատարմություն, որ ավելի բարեկամական կերպարանք էր ստանում, որքան թուրքերը նեղացնում էին նրանց: Բայց կային հայերին և թշնամի ցեղեր: Այս վերջինները նույնքան թշնամի էին հայերի հետ, որքան իրանց հարազատ ազգակիցների հետ: Սակավ չէր պատահում, որ քրդի մի ցեղ հարձակվում էր մյուսի վրա և կողոպտում էր նրան, և այսպիսով կռիվը, կոտորածը, անհաշտությունը նրանց մեջ մնում էր որպես ժառանգություն և անցնում էր սերունդից սերունդ:

Այդ կռիվների մեջ խառնվում էին և հայերը: Աղբակա, Շատախի, Բուլանըխի, Մոկաց երկրի և Սասունի հայերը ունեին իրանց դաշնակից քուրդ ցեղեր, որոնց հետ միացած շատ անգամ կռվում էին ընդհանուր թշնամու դեմ: Ոչ մահմեդական, այլ «եզըդի» աղանդին պատկանող քրդերը[9], միշտ հալածված լինելով իրենց մահմեդական ցեղակիցներից, հայերի հետ պահպանում էին բարեկամական հարաբերություններ: Հայերն այն աստիճան հավատարմություն ունեին դեպի այդ ցեղը, որ իրանց անասունները հանձնում էին դրանց հովիվներին պահելու, հայերի տան սպասավորները, աղախինները, երկրագործական մշակները մեծ մասամբ եզըդիներ էին: Դրանք կատարում էին հայերի մի քանի կրոնական արարողությունները, պահում էին Ս. Սարգսի, Ս. Գևորգի պասերը, զոհ էին մատուցանում հայոց նշանա-

վոր ուխտատեղիներում, և Ս. Գրիգոր Լուսավորչին և Դավիթ մարգարեին համարում էին Աստուծո ընտրյալների ամենագլխավորը: Եզըդիները, համարյա բոլորը, գիտեին հայերեն խոսել, և մեր վարդապետներից մեկը միայն (որ հայ կղերից ծաղրական մտքով ստացավ «հրաշագործ» տիտղոսը) մտածեց եզըդիների մեջ տարածել Լուսավորչական կրոնը և գրագիտություն հայոց այբբենարանով:

Քրդերի և հայերի հարաբերությունները այդ դրության մեջ էին մինչև վերջին ռուս-թուրքական պատերազմի[10] ծագելը:

Պատերազմի ժամանակ թուրքաց կառավարությունը, նրան բոլորովին կրոնական բնավորություն տալով[11], շեյխերի, մուֆթիների և ղազիների ձեռքով կարողացավ վառել քրդերի ֆանատիկոսությունը: Եվ այն բոլոր քուրդ հրոսակները, որ հազարներով դիմում էին Տեր-Ղուկասովի գունդերի դեմ, բոլորը կռվում էին նրանց հոգևորականների առաջնորդությամբ, որպիսիներն էին՝ Շեյխ Ջելալեդդինը և Շեյխ Իբադուլլահը:

Թեև պատերազմի ժամանակ քուրդ հրոսակները մի նշանավոր օգուտ չկարողացան տալ, թեև նրանք կողոպտում էին և ավերակ էին դարձնում բուն թուրքաց երկրները, որոնք դեռ գրավված չէին ռուսներից, այնուամենայնիվ, այդ բարբարոսությունները դարձրին քրդերի վրա անգլիական ագենտների ուշադրությունը[12], որոնք Հայաստանում տարածված էին թուրքաց բանակների մեջ: Անգլիացիք գտան Հայաստանում երկու գլխավոր ցեղեր, որոնցից մեկը՝ քրդերը, ատում էին «գյավուրներին» և խառնվեցան թուրքաց զորքերի հետ, իսկ մյուսը՝ հայերը, համակրում էին «գյավուրներին» և ամեն հնարքներ գործ էին դնում հեշտացնելու ռուսաց հաղթությունները: Քրդերի հակակրությունը դեպի ռուսները և հայերի համակրությունը, այդ երկու հակառակ արտահայտությունները բավական էին մի սխալ գաղափար[13] տալու անգլիացիներին, հորինելու այն պլանը, որ նրանք նպատակ ունեին կազմել Հայաստանի վերաբերությամբ:

Բայց անգլիացիք չուզեցին մտածել, որ եթե թուրքաց հայերը համակրությամբ էին վերաբերվում դեպի ռուսները[14], այդ ուներ յուր բնական պատճառները: Նրանք տեսնում էին իրանց ազգակիցներին ռուսական Հայաստանում ավելի բարեբախտ վիճակի մեջ, մինչդեռ իրանք օրըստօրե մաշվում և ոչնչանում էին մի անկարգ և նենգամիտ կառավարության բարբարոսությունից: Եթե այդ կառավարությունը փոխվեր[15] դեպի լավը, անտարակույս, հայերը կհաշտվեին նրա հետ:

Բայց հայերի վիճակը շատ չէր հետաքրքրում անգլիացիներին[16], նրանց մի ուրիշ բան էր հարկավոր: Նրանց հարկավոր էր մի զորավոր պատճառ, որ կանգնեցնեին ռուսների առջև, փակեին նրանց ապագա աշխարհակալությունների ճանապարհը դեպի Հայաստան՝ թույլ չտալով նրանց մոտենալ Եփրատի հովտին, որով իրանց Հնդկաստանի շահերը պահպանած էին համարում: Եվ այդ պատճառը, անգլիացիների կարծիքով, կարելի էր կառուցանել միմիայն քրդերից, որովհետև հայերին հավատալ և հայերի վրա հույս դնել նրանք չէին կարող, մանավանդ, որ քրդերին ավելի ընդունակ էին գտնում իրանց նպատակների համար. քրդերը իրանց ձեռքում զենք ունեին, իսկ հայերը՝ ոչ:

Այդ էր պատճառը, որ երբ պատերազմի ժամանակ զանազան հայկական քաղաքներում նշանակվեցան անգլիական կոնսուլներ, Բիկոնսֆիլդի (3) մինիստրության[17] և նրա Կ. Պոլսի ներկայացուցչի՝ Լեարդի առաջին հոգսը եղավ Հայաստանը Քրդստան անունով մկրտել[18] և **քրդական միության** սկիզբը դնել:

Պատերազմից հետո անգլիական կոնսուլներն սկսեցին առանձին ուշադրություն դարձնել քուրդ տարրերի վրա, երևակայական միությանը նրանց մեջ կազմելու մտքով[19]: Սկսեցին նրանց առաջ քաշել, հայերին հետ մղել, սկսեցին նրանց ցեղապետների և շեյխերի հետ բարեկամություն հաստատել և ամեն միջոցներ գործ դնել, որ քրդերի անջատված և միմյանց հետ թշնամական հարաբերություն ունեցող ցեղերի ընդհանուր ուժերը միացնեն մի ամբողջության մեջ: Դա ոչ միայն դժվարին, այլև անհնարին էր: Դարերով կազմված ժառանգական անհաշտությունը քրդերի հարյուրավոր ցեղերի մեջ չէր կարելի անգլիական քաղաքագիտության հրաշքով միանգամից անհետացնել, մանավանդ, որ վայրենի քուրդը քաղաքացիական նրբության հետ շուտով ընտելանալ չէր կարող: Այդ բոլոր ջանքերի հետևանքն այն եղավ, որ քրդերը, տեսնելով, որ իրանց վրա ուշադրություն են դարձնում, ավելի երես առան, ավելի հանդուգն դարձան և հենց այն ժամանակ, երբ ռուսաց բանակը կանգնած էր Սան-Ստեֆանոյի մեջ, Խնուսի կողմերում, քրդերն սկսեցին կոտորել հայերին, իսկ Աղբակա Բաշկալեհի կողմերում Շեյխ Իբադուլլահը ոչնչացրեց ավելի քան հիսուն հայոց գյուղեր և արժանացավ Վանի անգլիական կոնսուլի սիրալիր այցելությանը:

Բիկոնսֆիլդի մինիստրության ընկնելուց հետո հիշյալ երևակայական պատնեշը, այդ արհեստական խարխուլ շենքն ինքն իրան քայքայվեցավ[20]: Քրդական միության գաղափարը օդի մեջ ցնդվեցավ, բայց Քրդստան անունը մնաց, անգլիացիք չկարողացան իրանց թքածը հետ լիզել:

Երբ Բեռլինի վերջին կոնգրեսի սեղանի վրա դրվեցան Հունաստանի և Չեռնոգորիայի խնդիրները, և երբ Կ. Պոլսի եվրոպական դեսպանները ներկայացրին Բ. Դռանը իրանց միաբան գրությունը Հայաստանի վերանորոգությունների մասին[21], այն ժամանակ թուրքաց կառավարությունը ակամայից հիշեց քրդական միությունը, որ Բիկոնսֆիլդի մինիստրության ծնունդն էր: Ասում ենք ակամայից, որովհետև թուրքաց կառավարությանը շատ հաճելի չէր կարող լինել այդ միությունը, որի բաժանման մասին ինքը շատ տարիներով աշխատած էր, արհեստական կերպով անհաշտություն սերմ ցանելով քուրդ ցեղերի մեջ, որպեսզի նրանց միաբանությունը խանգարի, նրանց ուժերը թուլացնի և այդպիսով հպատակ և հարկատու ժողովուրդ դարձնի:

Բայց պետք էր հաշտվել հանգամանքների հետ, քաղաքականությունն այդ պահանջում էր. պետք էր Եվրոպային մի խրտվիլակ (пугало) ցույց տալ[22]:

Այդ ժամանակ՝ որպես սկզբում հիշեցինք, թուրք մամուլը մի կողմից սկսեց վառել քրդերի խավար ֆանատիկոսությունը, մյուս կողմից հռչակել նրանց քաղաքակրթական արժանավորությունները, նրանց գրականությունը, դպրոցները, արհեստը և այլն, որոնք բոլորը միայն «Հակիկաթի» և «Վակիթի» երևակայության մեջ գոյություն ունեին: Թուրք մամուլն սկսեց նաև դատապարտել «վայրենի» հայերին, որոնք «բարբարոսաբար» հարստահարում էին «խեղճ» քրդերին, այլ խոսքով, սկսեց բողոքել գառների դեմ, որ գիշատում էին գայլերին...[23]:

Դեռ Բ. Դուռը չէր տված դեսպանների միաբան գրության պատասխանը Հայաստանի վերանորոգությունների մասին, հանկարծ Կ. Պոլսում հայտնվեցան քուրդ պատվիրակներ, իբր Շեյխ Իբադուլլահի (4) կողմից ուղարկված (բայց իսկապես թուրքաց մայրաքաղաքի մեջ սարքված), որոնք, ներկայացնելով Արեգին փաշային, պահանջում էին քրդերի և Քրդստանի (անունը փոխած Հայաստանի) համար **ինքնավարություն**[24]:

Ի՞նչ էր նշանակում այդ աչքակապությունը:

Հարցը շատ պարզ է: Խոսքը Հայաստանի (թուրքերի հայացքով՝ Քրդստանի) ինքնավարության և նրա վերանորոգությունների վրա էր: Եթե պետք էր տալ այդ երկրին ինքնավարություն, ինչո՞ւ չտալ քրդերի անունով, որոնք այդ երկրի տերն էին, որոնք այդ երկրի նախկին բնիկներն էին և որոնք իրենց կուլտուրայով բարձր էին մյուս բոլոր ազգաբնակություններից, առավելապես՝ հայերից,,.

Եվրոպական դեսպանները, իհարկե, ուշադրություն չդարձրին Արեգին փաշայի այդ ֆոկուսների վրա, և քուրդ պատգամավորությունը ոչինչ հետևանքի չհասավ[25]:

Դրանից հետո ալբանական միության հեղինակը՝ Արեգին փաշան, սկսեց քրդական միության վրա երազել: Այդ միջոցին թուրք մամուլը, հետևաբար, յուր խոսքը փոխել սկսեց: Այժմ քրդերին մի կուլտուրական, զարգացած, խաղաղասեր և բարոյական ժողովուրդ ներկայացնելը շատ ծեռնտու չէր կարող լինել: Նույնպես ծեռնտու չէր ասել, թե քրդերն այն աստիճան բարի, առաքինի և խեղճ են, որ հարստահարվում են «վայրենի» հայերից: Պետք էր ներկայացնել նրանց որպես անգութ գազաններ, որպես բարբարոս ֆանատիկոսներ, որոնք պատրաստ են մի րոպեում ոչնչացնել բոլոր հայերին, եթե նրանց ինքնավարության վրա խոսք կլիներ[26]:

Այդ բոլորի մեջ այն միտքը կար, որ Եվրոպային ցույց տային, թե Բ. Դուռը հակառակ չէ Հայաստանում վերանորոգություններ մտցնելու առաջարկությանը, և նա, ինքը, շատ է ցանկանում կատարել այդ, բայց նա ունի յուր առջև մի մեծ դժվարություն, և այդ դժվարությունը կայանում է քրդերի և առհասարակ մահմեդական ամբոխի մոլեռանդության մեջ, որոնց կրոնին և սովորություններին հակառակ է ամեն մի վերանորոգություն: Կամենում էին ցույց տալ, որ եթե կառավարությունը մահմեդական ժողովրդի կամքին հակառակ գնար, կարող էր պատճառ տալ մի մեծ կոտորածի[27] քրիստոնեից դեմ, որի համար Բ. Դուռը դժվարանում էր իրան պատասխանատու համարել:

Թե որքան խաբեական էին այդ ենթադրությունները, կարող է հասկանալ ամեն մի մարդ, որ փոքրիշատե տեղեկություն ունի ասիական Թուրքիայի դրության վրա: Մահմեդականներն այդտեղ նույնքան ճնշված են, նույնքան հարստահարված են անկարգ կառավարությունից, որքան քրիստոնյաները: Մահմեդականներն ավելի ևս ցանկանում են մի բարվոք կառավարություն, և դրան ապացույց կարող է լինել դեռ չզսպված Մունթեֆիկ արաբների ապստամբությունը, Ղոզան-դազլիների ապստամբությունը և այն վերանորոգությունները, որ պահանջում էր Միհրդատ փաշան Սիրիայի համար, և որ համառությամբ մերժվեցավ Բ. Դռնից:

Մահմեդական մոլեռանդությունը մի խրտվիլակ է, որով Բ. Դուռն աշխատում է միշտ վախեցնել Եվրոպային: Այնքան խոսվում է Հայաստանի վերանորոգությունների, Հայաստանի ինքնավարության մասին, այնքան բացատրություններ են տրվում Բ. Դռան կողմից, բայց որքան հայկական լեռների գայլերը տեղեկություն ունին այդ բոլոր բանակցությունների մասին, նույնքան տեղեկություն ունի քուրդ ժողովուրդը: Այդ բոլորը խոսվում, շինվում, սարքվում են Կ. Պոլսում: Քուրդին ինչո՞վ կարող են հետաքրքրել Հայաստանի ինքնավարությունը կամ այնտեղ մտցնելիք վերանորոգությունները: Նա ո՛չ լրագիր է կարդում և ո՛չ գիտե, թե ինչ է կատարվում յուր բնակած լեռների մյուս կողմում:

Այսուամենայնիվ, Բ. Դռանը նպաստավոր էր ցույց տալ մի քրդական միության, եթե նա գոյություն չուներ, պետք էր հայտնել, թե կարող է կազմվել, որպես այդ ենթադրում է «Օսմանլի» լրագիրը:

Արդյոք կարո՞ղ է կազմվել, ահա այդ հարցը պարզելու համար մենք հարկավոր ենք համարում մի փոքրիկ գաղափար տալ, թե ինչ տեսակ ժողովուրդ է քուրդը:

Նախնական ժողովուրդներից, որոնք մնացել են արևելքում, չկա մեկը, որ քրդերի նման պահպանած լինի կենցաղավարության այն ձևերը, որով ապրում էին հովիվներն իրանց նահապետական դարերում: Եվ արևելքում չկա մի ժողովուրդ, որ քրդերի նման բաժանված լինի բազմաթիվ ցեղերի: Միայն Վասպուրականի մեջ կարելի է հաշվել մինչև 120 միմյանցից տարբեր ցեղեր, որոնք զանազանվում են բարբառներով, սովորություններով և մինչև անգամ կրոնով: Այդ ցեղերը ընդհանուր ոչինչ չունեն, նրանց չէ միացնում որևիցե հասարակական կապ, ամեն մի ցեղ առանձնացած է իր մեջ, ապրում է իր նեղ, սահմանափակ կյանքով: Մի ցեղի շահերը շոշափելով մյուսին, պատճառ է տալիս նրանց մեջ անհաշտ թշնամության. ոխակալությունը, արյան վրեժխնդրությունն անցնում է նրանց մեջ սերնդից սերունդ:

Որպես խաշնարած և հովիվ ժողովուրդ, քրդերը մինչև այսօր չսովորեցին հաստատաբնակ կյանքին: Նրանց հայրենիքն այնտեղ է, որտեղ նրանց անասունների համար արոտ կա: Այդ պատճառով ամբողջ տարի գաղթում են մի երկրից դեպի մյուսը: Գարունը, ամառը և աշունը անց են կացնում հայկական լեռների վրա, իսկ ձմեռը գաղթում են դեպի ավելի տաք երկրներ, որպիսին են Գարմեանի, Հեքիաբիի գավառները, Տիգրիսի արևելյան ափունքի դաշտավայրերը, կամ Միջագետքի անապատի տափարակները: Կան այնպիսի ցեղեր, որոնք ձմեռը մնում են Հայաստանում, տարածվում են հայոց գյուղերում և հայոց տների մեջ հյուրասիրություն են գտնում: Բուն քրդական գյուղերը, որոնք խիստ սակավաթիվ են Հայաստանում, ներկայացնում են մի կարգ գետնափոր խրճիթներ և տարվա երեք եղանակներում դարտակ են լինում: Միայն ձմեռը կարելի է նրանց մեջ բնակիչներ գտնել, որոնք իրանց անասունների հետ խլուրդների նման պատսպարվում են մթին, գետնափոր խորշերում և անհամբերությամբ սպասում են գարնանը, որ դուրս գան իրանց որջերից:

Ամբողջ Հայաստանում չէ կարելի ցույց տալ մի քաղաք, որ գոնե մի հատ քուրդ բնակիչ ունենա: Ի՞նչ պետք է անե քուրդը քաղաքում, նա արհեստ չգիտե, վաճառականությամբ չէ պարապում, խանութ չունի, ծառայության մեջ չէ մտնում: Քուրդը հովիվ է, նրա բնակության տեղը՝ լեռները, ձորերը և անապատներն են:

Թուրք կառավարության[28] բոլոր ջանքերը քրդերին հաստատաբնակ անելու մասին անցան ապարդյուն: Թուրք կառավարությունը ամեն հնար գործ էր գնում, որ քրդերը կալվածատեր լինեին, պարապվեին երկրագործությամբ: Բայց քուրդը հող չէ սիրում, հողը կարող է կապել նրան երկրի հետ, մինչդեռ նա ցանկանում է ազատ լինել, գաղթել և անդադար գաղթել: Ավազակը մեկ տեղում երկար կանգնել չէ կարող:

Քրդերի գյուղերը, ինչպես ասացինք, Հայաստանում շատ փոքրաթիվ են, այն ևս ձմեռվա բնակության համար: Այդ գյուղերը, ինչպես որ շուտով հիմնում են նրանք, այնպես էլ շուտով քանդում են և թողնում են ավերակ: Քրդերի գյուղերը և նրանց շարժական «օբաները» (табор) ոչնչով չեն զանազանվում միմյանցից: Տեսնում ես քրդերի մի խումբ յուր «աչալուղները» (տաղավարները) կազմում է մի ձորի մեջ, մնում է այնտեղ, որքան ժամանակ անասունների համար ճարակ կա, հենց որ վերջացավ, հավաքում է «աչալուղները» և տեղափոխվում է մի ուրիշ ձոր: Այսպես էլ նա հիմնում է իր «ղշլաղները» (ձմեռանոց), փորում է գետինը, ծածկում է թուփով և մացառներով, և ահա նրա խրճիթը պատրաստ է. մյուս ձմեռ քուրդը թողնում է նրան և մի այլ տեղ է շինում նրա նման մի բան:

Քրդերը Հայաստանում (մասնավոր բացառությամբ) կալվածքներ, անշարժ սեպհականություն չունեն: Եթե նրանք ունեն մի կտոր հող, տալիս են հայերին մշակելու համար: Հանգամանքները երբեմն ստիպում են նրանց թողնել բնակած երկիրը, այնուհետև նրանք այնքան հեշտությամբ մոռանում են իրանց հողերը, որքան հեշտությամբ ձեռք էին բերել նրանց:

Այս բոլորից պարզ երևում է, որ քրդերը հայրենիք չունեն, նրանք ոչնչով կապված չեն Հայաստանի հետ: Դրանով պետք է բացատրել քրդերի անդադար գաղթականությունը Պարսկաստանից դեպի Թուրքիա և Թուրքիայից դեպի Պարսկաստան:

Քրդերը երբեք չեն եղել բարեկամ թուրքին և լինել ևս չեն կարող[29]: Վերջին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ թեև ավարառության նպատակով քրդերից մի քանի խմբեր խառնվեցան թուրքաց բաշիբոզուկների հետ, բայց հենց որ թուրքերը հաղթվում էին, քրդերը առաջինն էին լինում, որ սկսում էին կողոպտել նրանց բանակը: Թուրք զինվորների ամենաընտիր զենքերը, որ ստացել էին անգլիացոց շնորհիվ, մեծ քանակությամբ անցել էին քրդերի ձեռքը և վաճառվում էին Պարսկաստանում ամենաչնչին գներով:

Սխալ է այն կարծիքը, որ առհասարակ տարածված է քրդերի մասին, իբր թե նրանք մի քաջ ժողովուրդ են: Քրդերը, ինչպես մյուս վայրենի ցեղերը, այն քաջությունը չունեն, ինչ որ հասկացվում է այդ բառի բուն նշանակությամբ: Իսկապես քաջ լինելու համար պետք է գիտակցաբար ոգևորված լինել որևիցե գաղափարով: Բայց քուրդը իդեալ չունի: Ի՞նչը կարող է դրդել նրան արյուն թափելու, բացի հափշտակասիրության ըղձից: Իսկ մի այդպիսի քաջություն՝ գազանի քաջություն է, երբ որսի ետևից է ընկնում: Մի անգամ հաղթվեցավ քուրդը, մի անգամ ջարդ կերավ, այնուհետև նա կորցնում է իր բոլոր արիությունը:

Այնքան դարերի ընթացքում քրդերը չկարողացան Հայաստանում մի հասարակություն ստեղծել, հաստատ հիմք դնել և իրանց շահերով կապված լինել այդ երկրի հետ[30]: Քրդերը Հայաստանի քաղաքացի չեն: Նրանք նույնպիսի թափառական խմբեր են, որպիսին են այդ երկրի բոշաները, զազաները, թուրքմենները, չերքեզները և այլ վայրենի ցեղերը, որոնք այսօր այստեղ են, իսկ մյուս օրը նրանց հետքն անգամ չէ երևում: Այս բոլորից պարզ է, թե որքան իրագործելի է այն գաղափարը, որ կոչվում է քրդական միություն:

Քրդական միություն Հայաստանում կազմել անկարելի է, բայց մի բան կարող է պատահել: Թուրք կառավարության ներկայացուցիչները կարող են գրգռել քրդերի զանազան ցեղապետներին, այս և այն շեյխին, որ կողոպտեն հայոց գյուղերը: Քրդերն այդ հանձն կառնեն, երբ նրանց թույլ է տրվում անպատիժ ավազակություն գործել: Նրանք կսկսեն Հայաստանում կողոպտել, այրել, սպանել, և այդ բոլոր բարբարոսություններին Կ. Պոլսում[31] կտան քաղաքական կերպարանք: Դեռ անցյալ տարվա աշնան ժամանակը Շեյխ Իբադուլլահն անցնելով Պարսկաստանի սահմանից թուրքաց հողի վրա, Աղբակա և Բաշ-Կալեի գավառում կրկին ոչնչացրեց մինչև քսան հայոց գյուղեր: Այդ մի պարզ ապատակություն էր, որ համարյա ամեն տարի պատահում է Հայաստանում, բայց Կ. Պոլսում նրան տվեցին քաղաքական բնավորություն:

Նույնը կարող է պատահել և այսուհետև[32]: Թուրքաց կառավարության ներկայացուցիչները գաղտնի կերպով կգրգռեն քրդերին հայերի դեմ, կոտորած կսկսվի, իսկ Կ. Պոլսում թե Բ. Դուռը և թե թուրք մամուլը կսկսեն գոչել՝ ահա քրդական միությունը, տեսա՞ք, այդ բոլոր կոտորածը Հայաստանին ինքնավարություն և հայերի համար արտոնություններ պահանջելու համար է: Մինչդեռ քրդերն ինքնավարության և Հայաստանի վերաևորոգությունների մասին ոչինչ գաղափար չունեն և հասկանալ անգամ չեն կարող, թե ինչ բան է վերաևորոգությունը: Նրանք կկատարեն իրանց բարբարոսությունները, ինչպես միշտ լոկ հափշտակասիրության նպատակով, բայց թուրքաց կառավարությունը կտա նրանց քաղաքական նպատակ:

Թե այսպես և թե այնպես, զանազանությունը մեծ չէ, քուրդն արդյոք գիտակցաբա՞ր կգործե, թե՞ մեքենաբար, բոլորը միևնույն հետևանքին կհասնեն, որ Հայաստանում կոտորած տեղի կունենա: Փաստեր արդեն կան: Դեռ երեկ կարդացինք մի հեռագիր, որով Վանի անգլիական կոնսուլը իմացում է տալիս Կ. Պոլիս, թե քրդերը ոչնչացրին հայոց 13 գյուղեր:

Հարցնում ենք, ի՞նչ պետք է անեն այդ դեպքում հայերը[33]: Մինչև հիմա, երբ քրդերը կողոպտում էին, այրում էին, սպանում էին, հայերը դիմում էին թուրքաց կառավարությանը և դատաստան էին պահանջում: Բայց հիմա, երբ կառավարության ներկայացուցիչներն իրանք են դրդում քրդերին բարբարոսություններ գործել, էլ ո՞ւմ կարող են դիմել հայերը: Մեզ կպատասխանեն, թե Եվրոպային, որ հանձն է առել հսկել Հայաստանի բարեկարգությունների վրա[34]: Բայց մինչև Եվրոպան կքննե, կտեղեկանա Հայաստանում գործվածները, մինչև օգնության ձեռք կհասցնե (կհասցնե՞ արդյոք), ինչպես ասում են՝ ջուրը կգա, ջրաղացը կտանի…

Հայերն այժմ լավ հասկացել են այդ: Հասկացել են, որ հասել է մի վճռական րոպե, երբ կամ պետք է հանձն առնել ստրկաբար ոչնչանալ, կամ եթե ցանկանում են իրանց գոյությունը պահպանել, հարկավոր է միացած ուժերով ընդդիմադրել[35] քրդերի վայրենի հարձակումներին: Ուրիշ ճար չկա: Այդ իսկ պատճառով կազմվեցան հայերից զինյալ խմբեր, որոնց նպատակն է ոչ թե ապստամբություն, ոչ թե պատերազմել թուրքաց կառավարության դեմ, այլ պատժել քրդերին, եթե նրանք կհանդգնեին խռովել Երկրի խաղաղությունը և կողոպտել անզեն հայ գյուղացիներին: Այդ խմբերը, որոնց թիվը փոքր չէ, շրջում են հայկական լեռների վրա, դիտում են շարժումը և ամեն տեղ վրեժխնդիր են լինում, երբ նկատում են քրդերի կողմից որևիցե անգթություն[36]:

Հայոց զինյալ խմբերը մինչև անգամ պաշտպանում են քրդերի խաղաղասեր ցեղերին, երբ պատահում է այս վերջինները ենթարկվել են իրանց ցեղակիցների բարբարոսությանը: Այդ իսկ պատճառով քրդերից շատերը միացած են հայերի հետ և ավելի բարվոք են համարում կռվել ընդհանուր թշնամու դեմ, քան թե վնասել հայերին, որոնցից միշտ օգնություն և հավատարմություն են վայելած:

Հայոց զինյալ խմբերի հետ միացել են երևելի Մար Շիմոնի քաջ ասորիները[37]: Մար Շիմոնը՝ Ջոլամերիկի լեռների այդ հզոր իշխանը և պատրիարքը, չէր կարող մոռանալ այն հին և սոսկալի հարվածքը, որ նախորդ Մար Շիմոնի (5) ժամանակ Բոտանի բռնակալ Բադիրխան բեկ անունով քուրդ ասպատակը հասցրեց պատրիարքի տանը՝ իսպառ կողոպտելով նրան և կոտորելով մինչև տասն հազար ասորիներ: Այն օրից քրդերի և Մար Շիմոնի ցեղի մեջ շարունակվում է մի անընդհատ թշնամություն, որ շատ անգամ պատճառ էր տալիս արյունահեղ կռիվների: Դեռ երկու տարի առաջ, երբ քրդերը ասպատակեցին Ջոլամերիկի մի քանի գյուղերը և արոտից ավարի առան պատրիարքի ջորիների երամակը, ասորիները այդ ժամանակ, սաստիկ ջարդ տալով քրդերին, հետ խլեցին կողոպուտը: Ունենալով անդադար ընդհարումներ քրդերի հետ՝ Մար Շիմոնը հենց խաղաղության ժամանակներում միշտ պատրաստ ուներ մինչև 30-40 հագար զինյալ մարդիկ, իսկ այժմ ամբողջ Ջոլամերիկի թե՛ հայերը և թե՛ ասորիները զինված են:

Անցյալ ձմեռվա սովը յուր սարսափելի հետևանքների հետ միևնույն ժամանակ սաստիկ նպաստեց հայերի այժմյան շարժմանը: Սովի ժամանակ հայերը պարզապես տեսան թուրք պաշտոնատարների չարամտությունը, որոնք ամեն նենգավոր միջոց գործ էին դնում, որքան կարելի է բազմացնել հայ սովամահների թիվը[38]: Այդ ժամանակից հայերը ավելի խորին կերպով համոզվեցան, որ Թուրքիան նպատակ ունի իսպառ բնաջինջ անել հայկական տարրը: Այդ ժամանակից ծագեց հայերի մեջ անձնապաշտպանության զգացմունքը:

Սովը ունեցավ իր և ուրիշ օգուտները. նա կապեց բարոյապես ամբողջ հայ ազգի սրտերը, որոնք աշխարհի ամենահեռավոր անկյուններից սկսեցին թափել այնտեղ իրանց առատ նվերները[39]: Սովը հաշտեցրեց հայերի հետ մի քանի քուրդ ցեղեր, որոնք հավասար օժանդակություն էին ստանում հայոց մասնաժողովներից, որոնք Հայաստանի բոլոր քաղաքներում կազմված էին սովատանջներին օգնելու նպատակով: Վերջապես, սովի պատճառով ներկա տարվա գարնանը մշակների ահագին բազմություն՝ Վանի, Մուշի, Բաղեշի և Հին Բայազետի կողմերից անցան դեպի Ռուսաստան և տարածվեցան Անդրկովկասի բոլոր գավառներում[40]: Այդ մշակները, այժմ լսելով Հայաստանի վտանգը, խմբերով վերադառնում են դեպի իրանց հայրենիքը:

Թուրքաց հայերի այժմյան շարժումն իրական փաստ է, նա դարավոր տխուր հալածանքների մի ազդու հետևանք է, նա պատմական անհրաժեշտությունների մի սոսկալի արտահայտություն է: Թուրքիան կարող է զսպել այդ շարժումը նրանով միայն, երբ կատարի հայերի իրավացի պահանջը[41]: Բայց քանի որ հայկական խնդիրը մեռցնելու նպատակով Թուրքիան կաշխատի քրդական միություն հնարել,

դրանով ավելի ևս կբորբոքի հայերի արդար կատաղությունը...[42]

(Րաֆֆի, երկերի ժողովածու, հ. 11, Հրապարակախոսական և գրական - քննադատական հոդվածներ, Նաիրի հրտ., Երևան, 1991, էջ 336)

Ծանոթագրությունը՝ Րաֆֆու հատորը կազմողների

Հոդվածի գրության անմիջական շարժառիթը եղել է Թուրքիայի և Անգլիայի խարդախ քաղաքականությունը Հայկական հարցում:

Առաջին անգամ տպագրվել է «Մշակում» Մելիքզադե ստորագրությամբ (Թիֆլիս, 1880), այնուհետև տեղ է գտել Աննա Րաֆֆու կազմած «Տաճկահայքում» (Թիֆլիս, 1895 և Վիեննա, 1913): Դուրս է մնացել երկերի ժողովածուի հետագա հրատարակություններից:

Արտատպվում է «Մշակից», 1880, N- 167, 168:

1. Աբդուլ Մեջիդ - Թուրքիայի 31-րդ սուլթանը (1839-1861): (էջ 337)

2. Աբդուլ Ազիզ - Թուրքիայի 32-րդ սուլթանը (1861-1876): (էջ 337)

3. Բիկոնսֆիլդ - անգլիացի նշանավոր քաղաքական գործիչ, 1874-1880 թթ. Անգլիայի վարչապետ Բենջամին Դիզրայելին է (1804-1881): (էջ 341)

4. Շեյխ Իբադուլլահը՝ Թուրքիայի քրդերի այդ կեղծ ներկայացուցիչը, իսկապես պարսից հպատակ մի քուրդ ցեղի շեյխն է, այսինքն՝ մոլլան կամ հոգևորականը: Նա ինքը և յուր ցեղը թափառում են պարսից՝ երբեմն Ուլնիի, երբեմն Թար-գավառի և երբեմն Մար-գավառի կողմերում: Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Բայազետի վրա հարձակվող քուրդ հրոսակներից մեկի առաջնորդն էր նա: Այստեղ նշանակություն ստացավ և թուրքաց կառավարության ուշադրությունը դարձրեց իր վրա: Այն ժամանակ, երբ Կ. Պոլսում հայտնվեցան իբր նրա կողմից պատվիրակներ, նա Պարսկաստանում էր և գուցե ամենևին տեղեկություն չուներ, որ յուր անունով բանակցություններ են լինում Բ. Դռան հետ: «Մշակի» N-167-ում տեսնում ենք, որ Շեյխ Իբադուլլահը Պարսկաստանի Սովուզ-Բուլաղ գավառումն է սկսել իր անկարգությունները:

5. Նեստորական ասորիների պատրիարքական աթոռը ժառանգական է. բոլոր պատրիարքները հաջորդաբար ընտրվում են միևնույն տնից և կոչվում են Մար Շիմոն, որ նշանակում է Տեր Սիմոն:

Ծանոթագրությունը՝ «Ուխտ Արարատի»

1. **Բեռլինի կոնգրեսը** (1878, հունիսի 13 - հուլիս 13) հրավիրվել էր Ավստրո-Հունգարիայի և Անգլիայի նախաձեռնությամբ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի (տես՝ Սան Ստեֆանոյի պայմանագիր 1878) վերանայման նպատակով... (այս և հետագա կրճատումները «Ուխտ Արարատի» պարբ. -խմբ.): Բ. կ-ին նախորդեցին 1878-ի մայիսի 30-ի անգլո-ռուս., հունիսի 4-ի անգլո-թուրք., հունիսի 6-ի անգլո-ավստր. գաղտնի համաձայնագրերն ու պայմանագրերը, որոնք հիմնականում կանխորոշեցին նրա անբարենպաստ ելքը Ռուսաստանի համար... Կարևոր հարցերը լուծվում էին ոչ թե ընդհանուր նիստերում, այլ Գերմանիայի, Անգլիայի, Ավստրո-Հունգարիայի և Ռուսաստանի ներկայացուցիչների մասնակի խորհրդակցություններում... Չլուծելով հանգուցային հարցերը (սերբերի ազգային միավորում, մակեդոնական, հունա-կրետական, հայկ. հարցեր) և էլ ավելի սրելով ռուս-ավստր. ու սերբա-բուլղ. մրցակցությունը՝ Բեռլինի դաշնագիրը հող նախապատրաստեց 1914-18-ի համաշխարհային պատերազմի համար... Արդեն մայիսի 30-ին կնքված անգլո-ռուս. համաձայնագրի 10-րդ հոդվածը Ռուսաստանին պարտավորեցնում էր Թուրքիային վերադարձնել Ալաշկերտի հովիտն ու Բայազետը, միաժամանակ հավաստելով, որ «Ռուսաստանի սահմանը հետագայում չպետք է ընդարձակվի ասիական Թուրքիայի ուղղությամբ» (այսինքն՝ դեպի Արևմտյան Հայաստան): Թուրքիային մատուցած ծառայությունների համար Անգլիան Կիպրոսի կոնվենցիայով տիրանում էր Կիպրոս կղզուն և պարտավորվում ռազմական միջոցներով դիմագրավել Ռուսաստանին հայկական վիլայեթներում: Անգլիան, միաժամանակ Ռուսաստանին զրկում էր հայկական բարեռորոգումների վրա հսկելու իրավունքից և ինքն էր ստանձնում այդ դերը: Այսպիսով, դեռևս Բ. կ., հայաբնակ վայրերի բարեռորոգումների հարցը զոհ գնաց անգլո-ռուս. մրցակցությանը, և լորդ Շերբրուկի պատկերավոր արտահայտությամբ, անգլիական քաղաքականությունը Թուրքիայի քրիստոնյաների համար «փակում էր դժոխքից դուրս գալու ելքը»: **(Հայկական սովետական հանրագիտարան, Երևան, 1976, հ. 2, էջ 401-402)**

Բեռլինի կոնգրեսի ձեռագիրն ու բովանդակությունը, ըստ էության, չի տարբերվում, ավելի շուտ սկիզբն է Լոզանի կոնֆերանսի ձեռագրի, որն իր հերթին եկավ ի չիք դարձնելու Սևրի պայմանագիրը: Նույնը կրկնվում է այսօր՝ Բալկաններում, Կովկասում, Միջին Արևելքում:

2. **Բ. Դուռը:** Բարձր Դուռը, ասպես էր կոչվում Օսմանյան կայսրության իշխանությունը: Արևմտյան քաղաքական բառապաշարում այն փոխարինում էր օսմանյան Թուրքիա, թուրքական իշխանություն, թուրքական քաղաքական ղեկավար մարմին և սուլթան բառերին:

3. Տես՝ **«Ալբանական լիգա»** հոդվածը պարբերականի այս համարում, էջ 26, ինչպես նաև՝ **ВСЭ, том 1, Москва, 1969, стр. 385**:

4. Անգլիական քաղաքական պատվեր էր. մասամբ իրագործվում էր թուրքական, մասամբ եվրոպական լրատվամիջոցների և, այսպես կոչված, **եվրոպական «գիտական հոսանքների»** կողմից: Ըստ էության, հենց այս ժամանակներում սկիզբնավորվեց, ավելի ճշգրիտ, ահագնացավ եվրոպական երկրներում հեղափոխությունների նախապատրաստական շրջանի հայոց և այլոց պատմության ու քաղաքակրթական արժեքների եվրոպական-համաշխարհային կեղծարարությունն ու նենգափոխումը: Սա հիմք հանդիսացավ և որպես այդպիսին՝ առանձին ուղղորդող ուղղություն դարձավ **արևմտյան «պատմագիտության» մեջ**, որպես հնագույն քաղաքակրթությունների պատմությունը արևմուտքի քաղաքական նկրտումներին չհամապատասխանելու պատրվակով կեղծելու, ինչպես և չեղած տեղից ինչ որ ցեղերի միջոցով նոր ազգեր սարքելու քաղաքական գործընթացի: Որպես ապացույց վերջին օրինակներից է Անգլիայի կնքահայրությամբ 1918-ին սարքված Ադրբեջանն ու ադրբեջանցիները՝ իբրև հին քաղաքակրթություն ունեցող ազգ և պետություն:

Պատմաբան Արմեն Այվազյանը գրում է. «Արդարև, Հայաստանի հզորացումը չցանկացող հայտնի ու անհայտ ուժերն առայժմ, մեզնից առաջ անցնելով, ավելին են անում. խորապես գնահատելով հայոց պատմության ռազմավարական նշանակությունն ու ներուժը, վաղուց ի վեր իրականացնում են այն մաս-մաս կողոպտելու և ոչնչացնելու ծրագրված քաղաքականություն: Խոսքս վերաբերում է միջազգային գիտական շրջանակներում արդեն տասնամյակներ ի վեր շարունակվող՝ հայոց պատմության հիմնահարցերի խեղաթյուրմանն ուղղված կազմակերպված գործողություններին: Հայ հասարակությունը ծանոթ է թուրքական և ադրբեջանական «հայագետների» հակագիտական գործունեությանը, որին, խորհրդային իրականության ընձեռած հնարավորությունների շրջանակում, խորհրդահայ գիտնականները 1960-80-ականներին հուժկու հակահարված հասցրին: Սակայն, տարբեր պատճառներով, որոնք քննության կառնվեն ստորև, դեռևս լուրջ գնահատական չի տրվել Արևմուտքի, հատկապես՝ ԱՄՆ-ի հայագիտական կենտրոններում ծավալվող նույնօրինակ գործունեությանը: Հայաստանի ազգային (ներքին՝ քաղաքացիական ու արտաքին՝ միջազգային) անվտանգության տեսանկյունից դիտելով, արևմտյան կեղծ-հայագիտությունն իր հետևանքներով առավել վնասաբեր է և վտանգավոր, քան՝ թուրք-ադրբեջա-

նական պատմագիտական կեղծարարությունը, քանզի այն Հայաստանի շահերի դեմ ուղղված միջազգային մասշտաբով տարվող քարոզի բուն հիմքն է և նույն այդ քարոզի մասը»: **(Արմեն Այվազյան, «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ» (քննական տեսություն), «Արտագերս» հրտ, Երևան, 1998, էջ 9-10)**

Քաղաքական պատվեր է, որը հետագայում նպատակ ունի արդարացնելու 1980-ականներից վերստին սկիզբ առած նույն հակահայկական քաղաքականությունը:

5. Աբդուլ Մեջիդ (1823-1861), Թուրքիայի սուլթանը 1839-ից: Իշխանության գլուխ անցավ, երբ Եգիպտոսի փոխարքա Մուհամմեդ Ալիի ապստամբ զորքերը ծանր պարտության էին մատնել թուրք. բանակին: Լիբերալ շրջանների և եվրոպական դիվանագիտության դրդմամբ 1839-ի նոյեմբերի 3-ին Ա. Մ. վավերացրեց Մուստաֆա Ռեշիդ փաշայի բարեփոխումների ծրագիրը՝ Հաթթը Շերիֆը, որով սկսվեց այսպես կոչված **Թանզիմաթի** շրջանը, ապա 1856-ի փետրվարի 18-ին՝ Հաթթը Հումայունը: Այդ «բարեփոխումները», սակայն, չշոշափեցին ֆեոդալ. Թուրքիայի բռնակալական վարչակարգի բուն էությունը: Ոչ մահմեդական բնակչության իրավազրկությունը պահպանվեց, հպատակ ժողովուրդների, մասնավորապես՝ արևմտահայության վիճակը չբարելավվեց: Արտաքին քաղաքականության մեջ Ա. Մ. հակված էր դեպի Անգլիան ու Ֆրանսիան, որոնք պաշտպանում էին Թուրքիային ընդդեմ Ռուսաստանի: Հետևանքը եղավ երեք երկրների դաշինքը և պատերազմը Ռուսաստանի դեմ (տես՝ Ղրիմի պատերազմ 1853-56): Փարիզի հաշտության պայմանագիրը (1856) ամրապնդեց եվրոպական տերությունների դիրքերը Թուրքիայում: Ա. Մ-ի արտաքին փոխառությունները, պալատական ծախսերը, անձնական շվայտությունը, առևտրական ստրկական պայմանագրերը և օտարերկրյա կապիտալի գերիշխանությունը երկիրը հասցրին քայքայման: **(Հայկական սովետական հանրագիտարան, Երևան, 1974, հ. 1, էջ 20)**

6. Աբդուլ Ազիզ (1830-1876), Թուրքիայի սուլթան 1861-ից: Սկզբում հարկադրված էր շարունակել **Թանզիմաթի** քաղաքականությունը: Հաստատեց հայերի, հույների, հրեաների, բուլղարների ներքին կյանքը կարգավորող կանոնադրություններ (տես՝ Ազգային սահմանադրություն): Սակայն, հետագայում անցավ բացահայտ հետադիմական քաղաքականության, ի պատասխան որի ճնշված ժողովուրդները ազգային-ազատագրական պայքար ծավալեցին թուրք. բռնապետության դեմ: Ապստամբություններ բռնկվեցին Բոսնիայում, Հերցեգովինայում, Բուլղարիայում, Ռումինիայում, Ալբանիայում, Կրետեում, 1862-ին՝ Զեյթունում (տես՝ Զեյթունի ապստամբություններ): Ա. Ա-ի օրոք Թուրքիայի արտաքին փոխառությունները խիստ մեծացան, երկիրը կորցրեց ֆինանսական անկախությունը: «Նոր օսմանների» կազմակերպած պալատական հեղաշրջումով Ա. Ա. 1876-ի մայիսի 30-ին գահազրկվեց և հունիսի 4-ին ինքնասպան եղավ: **(Հայկական սովետական հանրագիտարան, Երևան, 1974, հ. 1, էջ 19)**

7. Քոչվոր մարդուն չեն ընտելացնում, նա բնականոն զարգացման ճանապարհով է դառնում կամ չի դառնում՝ հաստատաբնակ: Իրականում անգլիական քաղաքական այս ձեռագիրը հետապնդում է կայուն ձևավորված համայնքները կազմաքանդելու նպատակ:

8. Նույն ձեռագիրը գործում էր նաև «պերեստրոյկայի» և դրանից հետո ընկած շրջանում, որպես իշխանություններին կախվածության մեջ պահելու, ղեկավարելի դարձնելու ծրագիր: Դրա ակտիվացումը տեսնում ենք ոչ միայն հետխորհրդային, այլև եվրոպական, աֆրիկյան և լատինամերիկյան երկրներում:

9. Խորհրդային տարիներին քրդերի հարցում ԽՍՀՄ-ը նույնպես իրականացնում էր նույն արևմտյան քաղաքականությունը, դրա վկայությունն է, որ 70 տարի շարունակ, պարտադրաբար անցկացվող մարդահամարներում եզդիներին քուրդ են գրանցել: Միայն ԽՍՀՄ փլուզման տարիներին ՀՀ-ում հանդգնեցին իրերն իրենց անուններով կոչել և պարզվեց, որ ՀՀ-ի քրդերի ճնշող մեծամասնությունը եզդիներ են և ոչ թե քրդեր: Պետք է նշել, որ եզդիները մշտապես եղել են հայերի կողքին բոլոր լավ, թե վատ օրերին, տարածաշրջանին պատուհասած բոլոր փորձությունների ժամանակ, թե՛ Աբդուլ Համիդի, թե՛ երիտ-թուրքերի կազմակեպած կոտորածների և թե՛ Արցախյան ազատամարտի օրերին:

10. Ռուս-թուրքական պատերազմ՝ 1877-78 թթ.: Ծագել է բալկանյան ժողովուրդների ազգային ազատագրական շարժումների վերելքի և Մերձավոր Արևելքում Արևելյան հարցի միջազգային հարաբերությունների սրման պայմաններում: Արևելյան հարց տերմինը առաջին անգամ գործածվել է Սրբազան դաշինքի (Ռուսաստան, Ավստրիա, Պրուսիա, Ֆրանսիա) երկրների Վերոնայի կոնգրեսում, 1822 թ.: Սան Ստեֆանոյի և Բեռլինի (1878) կոնգրեսի փաստաթղթերում միջազգային դիվանագիտության մեջ առաջին անգամ շոշափվել է Հայկական հարցը, որը Արևելյան հարցի բաղկացուցիչ մասն է դարձել: Լոզանի կոնֆերանսում ստորագրված հաշտության պայմանագրով Արևելյան հարցը, իբրև միջազգային խնդիր վերացել է, հակառակ աղաղակող այն փաստին, որ դրա բաղկացուցիչը՝ Հայկական հարցը, լուծում չի ստացել: **(Հայկական հարց հանրագիտարան, ՀՀԳ, Երևան, 1996, էջ 57)**

11. Սա նույնպես ապակողմնորոշող արևմտյան քաղաքական ձեռագիր է, որ առ այսօր կիրառության մեջ է: Նույն մոտեցումը գործարկվեց Առաջին աշխարհամարտի ժամանակ, երբ հայերի նկատմամբ իրագործված հանցագործությունները արևմտյան վերլուծաբանների կողմից որակվեցին որպես կրոնական անհանդուրժողականության դրսևորում: Անգամ փորձ արվեց դա կրկնել 1988-94 թթ., երբ պետության կողմից կազմակերպված ու ղեկավարվող ադրբեջանցի հանցագործ տարրերի վայրագությունները և դրանք դիմակայելու հայոց ինքնապաշտպանությունը լրատվամիջոցներով պաշտոնապես ներկայացվում էին որպես կրոնական պատերազմ. դա, սակայն, հավատ չներշնչեց և օրակարգից շուտով դուրս մղվեց: Պետք է արձանագրել, որ նմանօրինակ սադրանքները բավական պարարտ հող են գտնում թուրքական շրջանակներում, սակայն բնավ չեն գտնում հայկականում…

12. Փաստորեն, պատերազմի ժամանակ անգլիական հետախուզությունը ուսումնասիրում և կարգավորում էր գործընթացները, ըստ էության, ուսումնասիրում էր նաև մշակված քաղաքական ծրագրերը հետագայում իրականացնելու հնարավորությունները: Ի դեպ, նույնը կատարվեց մեր օրերում, երբ 1988-91 թթ., մինչև բուն պատերազմի բռնկումը, եվրո-ամերիկյան զինվորական հետախուզության մասնագետները պատրաստում ու ճշտում էին նախագծված դեպքերի ընթացքը և իրենց ազդեցության ոլորտները: Սակայն, ինչպես կյանքը ցույց տվեց, եվրոպական հաշվարկները իրենց չարդարացրին. ոչ ամիսների (ինչպես պլանավորված էր), ոչ էլ տարիների ընթացքում հնարավոր չեղավ արցախահայությանը դուրս մղել երկրից:

13. Անգամ խորաթափանց Րաֆֆին այդ ժամանակ չէր կռահել, որ անգլիական բուն ծրագրերը կանխորոշված էին, և ոչ թե կազմվում էին անգլիական ագենտների սխալ տեղեկատվության հիման վրա: Անգլիական ծրագրերը արդեն մշակված էին, երբ նրանք սկզբնական քայլերն էին կատարում, մնում էր մշակել իրագործման ծրագրերը, ինչն էլ անգլիական ագենտներն անում էին… Եվ խնդիրը միայն հայերը չէին, այլև բոլոր հին ժողովուրդներն ու քաղաքակրթությունները, որոնք կայսերական Անգլիայի ծրագրմամբ ու հրահանգավորմամբ պետք է ոչնչացվեին: Այդ ծրագրերը ամբողջությամբ բացահայտեց բրիտանական հետախուզության կարևոր ներկայացուցիչներից Լոուրենս Արաբացին՝ 1919-ին (տես՝ 18-րդ տողատակը), իսկ դրան Րաֆֆին չէր կարող ծանոթ լինել, թեև հնագույն քաղաքակրթությունների դեմ Անգլիայի վայրագ ցեղասպան քաղաքականությունը լավ քողարկված ու աներևույթ գործի էր դրվել դեռևս

Առաջին աշխարհամարտից շատ առաջ: Դա ամբողջ թափով իրականացվեց հենց պատերազմի ժամանակ:

14. Անգլիան գիտեր, որ իր քաղաքականությունը հանգեցնելու այն բանին, որ հայերը համակրեն ռուսներին: Դա ևս ընդհանուր ծրագրի ու հաշվարկի մաս էր: Հրահրել հայերի ռուսամետությունը, քանի որ հենց դրա միջոցով հնարավոր կլիներ զոհին մեղավոր ներկայացնել՝ քողարկելու համար սեփական հանցագործությունը. Թուրքիան կոտորում է հայերին նրանց ռուսամետության համար, իսկ Անգլիան (ինչպես նաև եվրոպական այլ երկրներ) իբր ձեռնպահ է այն արդարացումով, թե իրեն շահեկան չէ Հայաստանի միացումը Ռուսաստանին: Որ դա մեծ խարդավանքի ու դավադրության մի մասն է կազմում, պարզ երևաց, երբ նույն Անգլիան… ԱՄՆ-ին զրկեցին Հայկական հարցը (ի դեպ, նաև քրդական հարցը) լուծելու և Հայաստանի մանդատը վերցնելու հնարավորությունից: Բնական հարց է ծագում. Ամերիկայի Միացյալ Նահանգներն էլ հո Ռուսաստա՞նը չէր…

15. Թուրքիայի կառավարությունը չէր կարող փոխվել դեպի լավը, քանի որ 19-րդ դարի կեսերից սկսած թուրքական կառավարությունը չէ, որ իրականացնում էր իր երկրի քաղաքականությունը: Նա միայն կատարում էր հենց արևմտյան, առաջնահերթորեն անգլիական իշխանությունների պատվերը՝ անգամ ընդդեմ Օսմանյան կայսրության շահերի, քանի որ արդեն նախապատրաստվում էր կայսրության փլուզումը և նրա մեջ մտնող արաբական ընդարձակ տարածքների անցումը Անգլիային ու եվրոպական մյուս գերտերություններին: Այսօր իրողություն է. Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականությունը իրականացվում է ԵՄ-ԱՄՆ-Իսրայել եռյակի կողմից, որպես արևմտյան քաղաքականություն՝ ի վնաս հենց Թուրքիայի, քանի որ ծրագրված է, որ նա պետք է մասնատվի՝ ի շահ արևմտյան աշխարհակալական ծրագրերի ու նկրտումների: Ասել է, թե Թուրքիան՝ որպես Եվրոպայի գործիք, առաջիկայում կփորձի իրականացնել իրեն վերապահված վերջին հանցագործությունները, որից հետո այդ դերը կհանձնի քրդերին:

16. Հիմա էլ շատ չի հետաքրքրում ԵՄ-ին, ԱՄՆ-ին և, ընդհանրապես, արևմուտքին՝ համաձայն Հայկական հարցի հետապնդման խնամքով թաքցվող մարդատյաց քաղաքական նպատակների:

17. **Դիզրայելի (Disraeli) Բենջամին, լորդ Բիկոնսֆիլդ (1804-1881)**, անգլիական պետական գործիչ և գրող, պահպանողականների պարագլուխ և գաղափարախոս: Ակնառու դեր է խաղացել տորիների կուսակցությունը պահպանողականի վերափոխելու գործում: 1868-ին և 1874-80-ին եղել է պրեմիեր-մինիստր, վարել է էքսպանսիոնիստական քաղաքականություն: Իր գլխավոր խնդիրներից մեկը համարել է Ռուսաստանի դեմ պայքարը: Բեռլինի կոնգրեսում (1878) Բիսմարկի օգնությամբ Դ. վերանայել տվեց Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը, որի հետևանքով մի շարք սլավոնական և հայաբնակ մարզեր նորից ընկան թուրք. տիրապետության տակ: Նրան է պատկանում **«…Մեզ համար կարևորը հայկական վտանգի դեմ (Թուրքիայում) պաշտպանվելու միջոցներ գտնելն է»** արտահայտությունը, որը պարզում է նրա գլխավորած պահպանողական կառավարության կայսերապաշտ քաղաքականությունը Հայկական հարցում: Օսմանյան կայսրության ամբողջության պահապանի կեցվածքը չխանգարեց Դ-ին զավթելու (1878) Կիպրոս կղզին: Աֆղանստանի դեմ 1878-80-ի գաղութային պատերազմում Անգլիայի պարտությունը և անգլ. տիրապետության դեմ Տրանսվաալի բուրերի 1880-ի ապստամբությունը նպաստեցին Դ-ի կառավարության տապալմանը…: **(Հայկական սովետական հանրագիտարան, Երևան, 1977, հ. 3, էջ 382)**

18. Այստեղից է սկսում Հայկական հարցը հայերի բնաջնջման ճանապարհով լուծելու արևմտյան ներկայիս քաղաքականությունը: Այն, արդեն, 120 տարի է չի փոխել թե՛ իրագործման ձևը և թե՛ բովանդակությունը, քանի որ չի փոխվել հետապնդվող նպատակը, որին խանգարում են հայերը, ինչպես և հնագույն բոլոր քաղաքակրթություններ: Իրականում հաշվարկը հետևյալն էր. մինչև Օսմանյան կայսրության վերջնական փլուզումը պետք է հայերի բնաջնջման ու տեղահանության հանցագործ ծրագրերն իրականացվեր թուրքերի ու քրդերի միջոցով, իսկ կայսրության փլուզումից հետո նախատեսված էր խաղագումարը դնել միայն քրդերի վրա հեռահար նպատակով՝ որպես տարածաշրջանում ռազմական ագրեսիվ գործիք - պետություն՝ տեղադրելով այն Արևելքը Արևմուտքին, Հարավը Հյուսիսին կապող Հայաստանի տարածքում, որպես այդ ամենը ղեկավարելի պահելու ուժային կենտրոն, որպիսին է այսօր Կոսովոն՝ Բալկաններում: Ակնկալվում էր և է, որ քրդական ուժը կծառայի որպես զինվոր և քողածածկույթ արևմտյան քաղաքական հանցագործ, ժամանակակից բառերով ասած՝ «ժողովրդավարացման» գլոբալացման ծրագրերի համար: Սա է Հայկական հարցի լուծման արևմտյան քաղաքականությունը, որ որդեգրված լինելով 19-րդ դարի կեսերին բրիտանական կայսրության կողմից, փուլ առ փուլ իրագործվում է առ այսօր, հիմա էլ որպես եվրո-գերտերությունների որդեգրած Եվրոմիության ընդհանուր քաղաքականություն: Ահա մի հատված բրիտանական հետախույզ **Լոուրենս Արաբացու** հարցազրույցից ամերիկացի լրագրող **Լինկոլն Ստեֆընսին**. «Ինչպես հասկանում եմ,- ասացի,- ամերիկացիներս առևտրական մշակույթ ենք, ինչպես հայերն են, ինչպես բոլոր այս հին ազգերն էլ, որոնց պետք է ոչնչացնել: Նա գլխով արեց»**:** (Մանրամասները տես՝ **«Լոուրենս Արաբացի, «Այդ անտանելի հայերը», 1919, «Ուխտ Արարատի», թիվ 3 / 14, 2007, էջ 8-13)**

19. Սույն քաղաքականությունը ակտիվության բարձրակետին հասավ աշխարհի խաղաղ համակեցության Քենեդի-Խրուշչով ծրագրի տապալումից հետո (1963 և 1964 թթ.), երբ մի կողմից ինքնափլուզման գնացող ԽՍՀՄ-ը, մյուս կողմից՝ Եվրոպական միության երկրները, կազմակերպչական հսկայածավալ աշխատանք տարան քրդերին իրենց նոր դերի մեջ դնելու համար, որին, ի դեպ, նպաստում էր և թուրքերի վարած քաղաքականությունը: Հանգուցալուծման վերջնական պատկերը տրված է ԱՄՆ Զինված ուժերի պաշտոնաթող սպա Ռալֆ Պիտերսի քարտեզում և հոդվածում: **(Տես՝ Ռալֆ Պիտերս, «Միջին Արևելքի նոր քարտեզը՝ ըստ արյունակցական կապերի և հավատի նմանությունների», (թարգմանությունը և նախաբանը «Ազգ» օրաթերթի, 25.08.2006: Տես՝ «Ուխտ Արարատի», թիվ 4 /10, 2006, էջ 1-4)**

Րաֆֆին ճիշտ էր. քրդական հանրությունը շուտ չէր կարող ընտելանալ նստակյացության, սակայն, ժամանակը, նաև շուրջ 80 տարվա աշխատանքը արևմուտքին բերեցին մի որոշակի «հաջողության», քանի որ նա արդեն ուրվագծել է «քաղաքական» այն հենքը, որի հիմքի վրա, որպես «բարեգործ», փորձելու է Հայաստանի, Իրաքի, Իրանի, Սիրիայի տարածքների վրա ստեղծել թուրքական նախկին հանցագործ գործիքին փոխարինող նոր գործիք, այսպես կոչված, ազատ Քուրդիստանը… Սակայն, այդ «հաջողությունը» կասկածելի է, քանի որ մեծ հարց է դեռևս, իսկ քուրդ ժողովուրդը կհամաձայնի՞ ստանձնել նման պատասխանատվություն:

20. Չէր քայքայվի, եթե ժամանակավոր դադարի պահը չգար: Դեռևս ակտիվ գործողությունների ժամանակը չէր եկել: Եվրոպան՝ Անգլիայից զատ մյուս երկրները, չհետապնդելով համաշխարհային կառավարումի մոլագար նպատակներ, այդ ժամանակ լուրջ չընկալեցին «բարձր քաղաքակրթություն» ունեցող քրդերի համար նոր պետություն սարքելու գաղափարը, ուստի, պետք էր նրանց ներկայացնել ընկալելի մեկ այլ՝ վայրի քուրդ իրողությունը, որը վտանգում է քրիստոնյա տարրին: Կարևոր էր նաև առանց շտապելու, քայլ առ քայլ ու աննկատ միջազգային քաղաքականություն ներմուծել, շրջանառության մեջ դնել «Քրդստան», «Քրդական պետություն» հասկացությունները, մինչև գար այն վերստին շահարկելու պահը:

21. Այդպես էր ներկայացնում այն ժամանակների եվրոպական, նաև հայկական մամուլը: Անգլիական քաղաքականությունն էր որոշում, թե Թուրքիան ե՞րբ պետք է բարձրացնի քրդական միության հարցը և ինչպե՞ս:

22. Դա հենց Անգլիայի կայսերական քաղաքականության պատվերն էր. ցույց տալ քրդական խրտվիլակը (**пугалон**), որը պետք է հիմնավորեր քրդական գործոնի ներառումը եվրո-քաղաքական հետագա գործընթացներում:

23. Սուտ և կեղծ տեղեկատվություն տարածելու վառ օրինակ է: Մեր ժամանակներում դա արվում է հետևյալ կերպ. **«Ադրբեջանը համաձայն է լայն ինքնավարություն տրամադրել Ղարաբաղին»**, բայց **«Հայաստանը օկուպացրել է ադրբեջանական տարածքների 20-%-ը»**, կամ՝ **«Եվրոպական հատուկ հանձնաժողովը քննության կառնի Նախիջևանի խաչքարերի ոչնչացման փաստը»**, թեև լավ կլիներ **«հատուկ հանձնախումբ ստեղծել քննելու հուշարձանների վիճակը Ադրբեջանում և Հայաստանում»**: Ավելորդ չէ նշել, 1947 թ. ՄԱԿ-ի հատուկ հռչակագրով արգելված է **«Կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն»** տարածելը, բայց մտահոգիչ է, որ ՀՀ իշխանությունները չեն օգտվում միջազգային իրավական այդ նորմի ընձեռած հնարավորությունից:

24. Եթե այն ժամանակ հայկական ինքնավարության հարցը փորձում էին ջնջել քրդական ինքնավարության գաղափարով, ապա այժմ նույնը կատարվում է Հայաստանի բռնազավթված տարածքների՝ մասնավորապես Արևմտյան Հայաստանի նկատմամբ, որի վերականգնումը, որպես հանցագործությունների հետևանքների վերացման գործընթաց, փորձում են արգելակել Հայաստանի այդ տարածքներում քրդական պետություն ստեղծելու ծրագրով: Այլևս պատահական չի թվում, որ 1985-ից սկսած եվրո-կոմիսարները համառորեն փորձում էին ՀՀ իշխանություններին համոզել ձեռնպահ մնալ **Հայոց ցեղասպանության հարցը, ինչպես նաև Հայաստան-Թուրքիա, Հայաստան-Ադրբեջան, Հայաստան-Վրաստան սահմանագծումների հրատապ խնդիրները** ՄԱԿ-ի միջազգային դատարան ներկայացնելուց՝ ակնկալելով միևչ այդ ստեղծել «Քրդական պետություն» և այդպես, իրենց կարծիքով, կանխել Հայաստանի տարածքային ամբողջականության վերականգնումը՝ համաձայն միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի, միջազգային պայմանագրերի որոշումների ու հոդվածների: **(Տես՝ Արա Պապյան. «Հայ-ադրբեջանական սահմանը» (փորձաքննություն ըստ միջազգային իրավունքի), «Ուխտ Արարատի», թիվ 2 / 16, 2008, էջ 7-11)**

25. Եվրոպական դիվանագիտությունը իր խնդիրը լուծեց, արգելափակեց հայկական ինքնավարության հարցը: Իսկ քուրդ պատգամավորները ոչնչի չհասան, որովհետև դեռ վաղ էր, այդ խնդիրը բարձրացվելու էր Առաջին աշխարհամարտից հետո: Երբ դա էլ հնարավոր չեղավ, Լոզանի կոնֆերանսից հետո կրկին բարձրացվեց քրդական ապստամբության հարցը, ասել է, թե խնդիրը փուլային հետապնդումների ընթացքի մեջ է՝ ըստ ժամանակացույցի, հնարավորությունների և եվրո-քաղաքական ծրագրերի:

26. Նույն հնարքը հետագայում գործածում էին բոլշևիկները՝ 1920-21 թթ., օրինակ՝ 1921-ի մարտի 4-ին Տրոցկին գրում է. **«Ճիշտ է և այն, որ պատերազմի ժամանակ հայկական բնակչությունը էնվերի կառավարության կողմից ենթարկվել է բռնության, աքսորվել է, կոտորվել է, ջնջվել, իսկ մի մասն էլ ցրվել է ամբողջ Փոքր Ասիայում, Կովկասում, սակայն ճիշտ է նաև այն, որ այդ տերիտորիաներում հայկական բնակչության թիվը այժմ կազմում է 5-10%, ըստ 1919թ. Հարբորդի ամերիկյան հանձնաժողովի տվյալների: Հանձնաժողովը ոչ մի հավակնություն չուներ պակասեցնելու հայկական բնակչության թիվը: Բացի դրանից, Վանի և Բիթլիսի իսկական տերերը (ըստ ռեալ ուժի) ոչ թե թուրքերն են, այլ քրդերը, որոնք ոչ մի կերպ չեն համաձայնվի Հայաստանին հանձնելու իրենց հողերը»**: **(Տես՝ Լև Տրոցկի, «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» հոդվածը, հրապարակվել է Ա. Սկաչկո կեղծանվամբ, որը Տրոցկու ղեկավարած Ռազմական նախարարության կադրերից էր, «Ուխտ Արարատի», թիվ 3 / 14, 2007, էջ 18-22)**

27. Կոտորածների սկիզբը դրվեց քրդերի միջոցով հենց թուրքական կառավարության կողմից, սակայն, ծրագիրն անհաջողության մատնվեց, երբ հայերն անցան ինքնապաշտպանության, ուստի, անգլո-թուրքական քաղաքականությունը ստիպված եղավ խնդիրը լուծել Աբդուլ Համիդի անմիջական ղեկավարությամբ, որի բարձրակետը եղավ 1994-96 թթ. կոտորածը: Սակայն, պարզվեց, որ այդ ձեռագիրն էլ «արդյունավետ» չէ, շատ ժամանակ է պահանջում, ուստի, Եվրոպան ծրագրեց նոր՝ ավելի արագընթաց մոտեցում, որի համար էլ պատրաստեց և իշխանության բերեց երիտ-թուրքերին, նրանց միջոցով հայերի տեղահանությունը մեկ հարվածով լուծելու և միաժամանակ իրագործելու նաև Օսմանյան կայսրության փլուզումը, քանզի նախապատրաստվող պատերազմի ժամկետը՝ 1914 թ., ընդհուպ մոտենում էր:

28. Իրականում խոսքը եվրոպական գերտերությունների ջանքերի, քաղաքական պատվերի մասին է:

29. Հենց այդ անհամատեղելիության հենքով է, որ այսօր՝ որպես իրողություն փորձում են իրականացնել Թուրքիան մասնատելու ծրագիրը:

30. Սա էր ոգևորել ժամանակին բրիտանական կայսրությանը, քանի որ նրան ամենևին էլ պետք չէ, որ քուրդը պետություն ունենա. իբր քրդական պետություն՝ դա լինելու Եվրոմիությանը լիովին ենթակա կառույց, իսկ քրդերը օգտագործվելու են որպես ռազմական գործիք՝ իրականացնելու արևմտյան մարդատյաց ծրագրերն ու քաղաքականությունը: Դրա մասին է խոսում Պենտագոնը Ռալֆ Պիտերսի բերանով. **«Բալկանյան լեռների և Հիմալայների արանքում գտնվող ամենամեծ սահմանային անարդարությունը անկախ քրդական պետության բացակայությունն է»** և ապա մեկ այլ տեղում՝ **«Ինչ վերաբերում է Սիրիայի և Իրանի քրդերին, նրանք էլ անկասկած կմիանան իրենց ազգակիցներին, եթե կարողանան, անկախ Քուրդիստանում: Աշխարհի օրինական ժողովրդավարական պետությունների հրաժարվելը կամ դժվարությունը մինչև օրս քրդական անկախությանը հետամուտ լինելու որոշումից պարզապես մարդու իրավունքների անտեսման մեղանչանքն է, որն անհամեմատ վատ է, քան բոլոր այն մեղքերը, որ մենք առօրյա մամուլում հանդիպում ենք: Ի դեպ, Դիարբեքիրից մինչև Թավրիզ երկարող անկախ Քուրդիստանը կլինի նաեւ Բուլղարիայի և Ճապոնիայի միջեւ գտնվող ամենաարևմտամետ պետությունը»**: Ավելորդ չէ նշել, որ Ռալֆ Պիտերսի հոդվածի առավել ընդարձակ թեման հենց քրդերն են: Ահա թե ինչպես է ցեղասպանության քարոզչություն անում մարդու իրավունքներից խոսող այդ նախկին պաշտոնյան. **«Հիշենք նաև 5 հազար տարվա վաղեմության մի փոքրիկ կեղտոտ գաղտնիք: Էթնիկական զտումն իր գործն անում է»**: Հիմա կտեսնենք, թե ինչո՞ւ. **«Իսկ մի սարսափելի չարագործություն, ինչպիսին է հայերի հանդեպ հոգեվարքի մեջ գտնվող Օսմանյան կայսրության ցեղասպանությունը, երբեք չի կարող փոխհատուցվել տարածքային նվիրատվությամբ»**: Ահա և բուն հարցը. Հայաստանի տարածքային ամբողջականության վերականգման խնդիրը, որից փորձում են ամեն կերպ խուսափել ու խուսանավել հայ-թուրքական հաշտեցման ջատագով եվրո-կոմիսարները, իսկ Ռալֆ Պիտերսը ուղիղ ձևով ասում է, թե ո՞վ, ի՞նչ պետություն պիտի ունենա և ո՞ր տարածքում, այն էլ դիտարկելով որպես նվիրատվություն: Պիտերսյան այս ձևակերպումն է, որ տեսանք Սերբիայում՝ Կոսովոյում, կրկնօրինակը ակնկալում են իրականացնել Կովկասում, Միջին Արևելքում… **(Տես՝ Ռալֆ Պիտերս, «Միջին Արևելքի նոր քարտեզը՝ ըստ արյունակցական կապերի և հավատի նմանությունների», (թարգմանությունը և նախաբանը «Ազգ» օրաթերթի, 25.08.2006: Տես՝ «Ուխտ Արարատի», թիվ 4 / 10, 2006, էջ 1-4)**

31. Կ. Պոլսի փոխարեն հիմա դա անում են եվրո-կոմի-

սարներն ու ՆԱՏՕ-ի ղեկավարները ոչ միայն Բալկաններում, այլև Կովկասում:

32. Րաֆֆին իրավացի էր, դեպքերը սպասել չտվեցին, և դա պատահեց. Աբդուլ Համիդ - համիդիե ջոկատներ, երիտթուրքեր, հետո Քեմալ - Արևելյան Հայաստան, ընդհուպ մինչև մեր օրերը՝ Բաղիրով - Սումգայիթ, Բաքու, Կիրովաբադ, Արցախ, և ոչ մի երաշխիք չկա, որ նմանատիպ գործողություններ չեն կրկնվի Հայաստանում ու ողջ Կովկասում… Այսօր, թեև 1909-ը չէ, բայց և կարիք չկա հանգստանալու ու ժամանակից շուտ ինքնապաշտպանության գաղափարից հրաժարվելու, միայն բանակցություններին ապավինելու…

33. Ժամանակակից հայերը՝ առաջնահերթորեն հայ քաղաքական գործիչները, պետք է կարդան Րաֆֆու այս հոդվածը…

34. Եվրոպան, հասկանալի է թե ինչո՞ւ, հիմա էլ հանձն է առել 1990 թվականից անկախություն հռչակած Հայաստանի «բարեկարգությունների» վրա հսկողություն սահմանել, որը ոչ մի լավ բան չի խոստանում՝ համաձայն 120 տարի առաջ որդեգրված այս քաղաքականության, ուստի, ինչպես ասում էր մեծ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենը հայ ժողովրդի համար **«..Ավելի լավ կլիներ, եթե իր անունը երբևէ հնչած չլիներ եվրոպացի որևէ քաղաքագետի բերանից»**: **(Տես՝ Ֆրիտյոֆ Նանսեն, «Խաբված ժողովուրդ», ԵՊՀ հրտ., Երևան, 2000, էջ 272-273: Տես՝ «Ուխտ Արարատի», թիվ 3 / 14, 2007, էջ 49-50)**

35. 1988-ից սկսած Րաֆֆու դասերը սերտած նվիրյալ հայորդիները միացյալ ուժերով դիմադրեցին նույն քաղաքականությունը իրականացնող Ադրբեջանի վայրագ հարձակումներին, և դա իրեն լիովին արդարացրեց: Այլ է, որ ժամանակին խնդիր չդրվեց նույնական ինքնակազմակերպումով պաշտպանվել նաև երկրի ներսում, միամտորեն կարծելով, թե ազատության և անկախության հաստատումը բավարար հիմք է ինքնիշխան և պաշտպանված լինելու:

36. Ցավալի իրողություն էր, թեև հասկանալի, որ եթե Խորհրդային Հայաստանում, իրոք անհնար էր ստեղծել պատմագիտական հարուստ գրականություն հայոց զինյալ պայքարի և ինքնապաշտպանության մասին, ապա անկախությունից հետո, առ այսօր, կարելի էր այդ բացը լրացնել ներառելով նաև Արցախյան ազատամարտի հարուստ փորձը և հերոսական դրվագները: Էլ չասենք, որ ազատությունը և անկախությունը պաշտպանող ազատամարտիկները արժանի վերաբերմունք չեն գտնում մեր իսկ իշխանությունների կողմից: Պատճառը հասկանալի է, արևմտյան քաղաքականությանը տուրք տալը և նրան տհաճություն չպատճառելու ցանկությունը: Դա կարող է ապագայում լուրջ սպառնալիք ստեղծել ԼՂՀ-ի և ՀՀ-ի ազգային անվտանգությանը:

37. Ասորիներն էլ որպես հին քաղաքակրթության կրողներ վտանգված են:

38. Արհեստական սովի եվրո-ուղղորդման թուրքական քաղաքանություն էր սա, որ իրականացվեց նաև բոլշևիկների կողմից՝ 1919-21 թթ., երբ խնդիր էր դրվել Արևելյան Հայաստանը մասնատել: Նույնը փորձեցին 1988-95 թթ.:

39. Ուշագրավ է, որ արևմուտքը այսօր էլ դեռ չի կարողանում հաշվել Հին Արևելքի ազգային քաղաքակրթական մտածողությունը, երբ 1880-ականներին ակնկալում էր սովի միջոցով հայերին խուճապի մատնել, հուսալքել և բնաջնջել: Նույնը տեղի ունեցավ 1988-ից երկրաշարժի, սովի, մթի, ցրտի, պատերազմի տարիներին, երբ ոչ միայն համայն հայության, այլև այլ ազգերի շոշափելի օգնությունը փրկեց օրհասական վիճակի մեջ դրված հայությանը:

40. Ժողովրդի տարհանման նույն քաղաքականությունը իրականացվեց 1988-90 թթ., երբ մի կողմից երկրաշարժի, մյուս կողմից՝ Սումգայիթի, Բաքվի կոտորածների հետևանքով հայությանը տեղահանեցին ու տարան Ռուսաստան և այլ հեռավոր ափեր, սակայն, ինչպես և այն ժամանակ, վտանգի սպառնալից իրողությունը տեսնելով, պատերազմի հենց սկզբից ոչ միայն Ռուսաստանի և այլ վայրերի հայերը, այլև սփյուռքահայերը վերադարձան Հայաստան՝ հայրենիքը պաշտպանելու:

41. Միջազգային իրավական դաշտում, Սան Ստեֆանո - Բեռլինի կոնգրեսից սկսած և, առ այսօր, միշտ էլ առկա է եղել լուծումը, սակայն, մշտապես խոչընդոտվել է: Նույնը՝ 1918-23 թթ: Լուծումները տրվել են, սակայն, չեն իրագործվել, ինչպես օրինակ՝ Հայաստանին վերաբերող ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը, Սևրի դաշնագրի Հայաստանին վերաբերող կետերը, որոնք կարգավորում էին և՛ Հայաստանի ու հայության, և՛ Քրդստանի ու քրդերի խնդիրները: Ներկա իրողության մեջ դրականն այն է, որ միայն իրավականի վրա չէ հայության հուսը: 1915-23 թթ. դառը փորձից ծավալվել ու թափ է առել հայոց ինքնապաշտպանությունը, դա է, որ դիմագրավում, կասեցնում է հայերի ամբողջական բնաջնջման եվրո-թուրքական հանցագործ ծրագիրը:

42. Հայոց ֆիդայական շարժումը կասեցվեց 1908-ին երիտ-թուրքական սահմանադրական եվրո-պատվերով և հայկական ավանդական կուսակցությունների անհեռատես ու աններելի միջամտությամբ, որը ճանապարհ հարթեց 20-րդ դարի սկզբի մարդկության դեմ սանձազերծված առաջին մեծ ցեղասպանության: 1909-ին, երբ Զորավար Անդրանիկը Կ. Պոլսում էր, ՀՅԴ գործիչներից Ակնունին և ուրիշները փորձում էին նրան համոզել, որ թուրքերը այլևս թույլ չեն տա ոչ մի կոտորած, սակայն՝ «**Անդրանիկ չհամոզվեցավ: Ան անդրդվելիորեն հավատացած էր, որ կեղծ են երիտթուրքերու շեփորած քաղաքական լոզունգները, որովհետև, եթե թուրքերը անկեղծ են, ինչո՞ւ զինաթափ չեն ըներ Տիգրանակերտեն մինչև Պարսից սահմանագլուխը գտնվող 160.000 քյուրտերը: Անոնք զինաթափ չեն ըներ զանոնք, հարմար առիթին մեզ կոտորել տալու համար»:** (Անդրանիկ Չելեպյան, «Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը», «Արևիկ» հրտ., Երևան, 1990, 720 էջ, էջ 254)

Հայ քաղաքական միտքը այն ժամանակ չանսաց Զորավարի սթափեցնող կոչին: Իսկ հիմա՞: Գուցե թուրքերը կարո՞ղ են փոխվել, եթե փոխվեն նրանց քաղաքական նպատակները: Իսկ դրանք փոխվա՞ծ են: Ամեն հայ մարդ ինքը թող տա դրա **անկեղծ պատասխանը՝** իշխանավորից մինչև լրագրող, մտավորականից մինչև աշխատավոր, որպեսզի պատմությունը չկրկնվի մեր միամտության կամ անգիտության պատճառով:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ, ՆԱԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Րաֆֆին «Հայդուկներ» հոդվածը ճիշտ ժամանակին է գրել՝ որպես պատասխան եվրոպական և թուրքական մամուլի հերյուրանքներին ու աղավաղումներին, որոնք ուղղված էին հայ ժողովրդի ձեռնարկած ինքնապաշտպանության ու ազատագրական պայքարի փորձերին: Պարզվում է, որ 1880-ականներից ի վեր հայերի ինքնապաշտպանությունն է արգելված եղել, և դեռ այն տարիներից հայ ժողովրդին տրված միակ իրավունքը՝ անպաշտպան լինելու, հնազանդորեն մորթվելու և կամ համաշխարհային պրոլետարական հեղափոխությանը զոհ մատուցվելու իրավունքն է եղել: Հայոց ինքնապաշտպանության և հայ ազատագրական պայքարի դեմ Ավստրալիայում բնակվող Արմեն Կաքավյանի, ինչպես նաև այլ տարիներին այլոց՝ հայ, թե օտար, արշավներ ձեռնարկելու փորձերը հենց նույն, եվրո-թուրքական մամուլի, հեռահար նպատակներն են հետապնդում: **(«Ուխտ Արարատի» կազմակերպության հայտարարությունը տես՝ «Գոլոս Արմենիի», 19.02.2009, էջ 2, «Հանուն Հայրենիքի», թիվ 1/69, 2009, էջ 3: Տես՝ այս համարում՝ էջ 33)**

Քննենք Կաքավյանի ձևակերպումները. **«Ես երբեք չեմ ասել, թե հայերը պետք է ներողություն խնդրեն թուրքերից, և երբեք չեմ պնդել, որ դրա համար պետք է ստորագրություն հավաքել** (Իր ասելիքի առաջին մասն է -խմբ.): **Ես պարզապես քննարկման ընթացքում** (Համացանցային քննարկումը նկատի ունի, որին մասնակցել են նաև օտարները… - խմբ.) **հայտնեցի իմ տեսակետն այն հարցի շուրջ, որ ԱՍԱԼԱ-ի կողմից իրականացված ահաբեկչությունները** (Իր ասելիքի երկրորդ մասն է -խմբ.) **բարոյապես արդարացված չէին միջազգային իրավունքի տեսակետից»**[1] (Իր ասելիքի երրորդ մասն է -խմբ.): Կա նաև իր ասելիքի չորրորդ՝ չարտաբերված մասը, որին նույնպես կանդրադառնանք: Միանգամից նշենք, որ խնդիրը Կաքավյանը չէ՛ և ԱՍԱԼԱ-ն չէ՛: Այն շատ ավելի խորն է ու վերաբերում է հայ ժողովրդի ինքնապաշտպանության իրավունքին, որը դեռ Րաֆֆու ժամանակներում կասկածի տակ էր առնում եվրոպական ու թուրքական մամուլը:

Իր ասելիքի առաջին մասում Կաքավյանը անմեղի կերպարանք է ընդունում. իրոք, ինչո՞ւ հանիրավի մեղադրել մարդուն, ով երբեք չի ասել, թե թուրքերից, իբր, պետք է ներողություն խնդրել: Բայց հնչում է ներողություն խնդրելու, մինչ այդ միանգամայն անիրական թվացող, թեման, այնպե՞ս չէ:

Երկրորդ մասում՝ ԱՍԱԼԱ-ի գործունեությունը «ձեռքի հետ» որակվում է որպես **ահաբեկչություն**: Այս հարցադրմանը շատերն են պատասխանել, այս անգամ մեջբերենք 1981-ին Փարիզի «Վան» գործողության մարտիկների փաստաբան պարոն Լեկլերկի խոսքից մի հատված՝ 1984-ին արտասանված դատարանի դահլիճում. **«Ինձ կարող են հակաճառել, թե այս տղաները զինվորներ չեն և Հայաստանն ու Թուրքիան էլ չեն պատերազմում, միայն զինվորները զենք կրելու, ամեն պահի սպանելու իրավունք ունեն: Նրանք կարող են փլատակների վերածել Դրեզդեն քաղաքը, Հիրոսիմայի վրա ռումբ նետելով՝ միլիոնավոր մարդկանց, այդ թվում և կանանց ու երեխաների, սպանել: Իսկ Հայաստանը, քանի որ այլևս գոյություն չունի, հետևաբար «կանոնավոր» բանակ չի կարող ստեղծել: Հիրավի, տարօրինակ տրամաբանություն է: Չէ՞ որ Թուրքիան առանց պատերազմ հայտարարելու գնդակահարեց հայ տղամարդկանց, կոտորեց ծերունիներին, կանանց ու երեխաներին, հատուկենտ վերապրող որբերին նավերը լցրեց, օտար երկրներ արտաքսեց: Դուք՝ թուրքերդ, կարծում եք, որ այդքանը բավական է, պատերազմն ավարտված է: Բայց արդյո՞ք այն ավարտված է հայերի համար, որոնցից խլել են բնօրրանը, որոնք ուզում են հարատևել»**[2]:

Պաշտպանի խոսքին ծանո՞թ չէր Կաքավյանը, ծանո՞թ չէին մյուսները, թե՞ իրենց համար խնդիրը այլ կերպ էր դրված…

Երրորդ մասում Նորագույն զինյալ ազատագրական պայքարը որակվում է որպես **բարոյապես չարդարացված, միջազգային իրավունքի տեսակետից...** Իրականում, սակայն, ի՞նչ է արձանագրում միջազգային իրավունքը: Ի՞նչ է ասում, օրինակ, մարդու իրավունքների գլխավոր փաստաթուղթը՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը՝ ընդունված 1948-ի դեկտեմբեր 10-ին, որի նախաբանում կարդում ենք. «Ուշադրություն հրավիրելով առ այն, որ **մարդու իրավունքները անհրաժեշտ է որ պաշտպանվեն օրենքի իշխանությամբ, որպեսզի մարդը, որպես վերջին միջոց, հարկադրված չլինի ապստամբելու բռնակալության ու ճնշման դեմ»:**

Կաքավյանը չգիտի՞, իսկ մյուսնե՞րը… Թե՞ ձևացնում են, իբր չեն հիշում, որ միջազգային իրավունքով պաշտպանվելու խնդիրը մեզանում «Նեմեսիս»-ից սկսած ունեցել է և ունի հստակ լուծում: Միգուցե շարունակենք հիշատակել միջազգային իրավունքի այն հռչակագրերը, որոնցով հայոց բոլոր իրավունքներն անխտիր, վաղո՜ւց, պետք է ճանաչված լինեին, և որն արդարացի կլիներ, ի դեպ, **մարդկային բարոյականության** տեսանկյունից նույնպես: Օրինակ՝ **«Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» (1948թ.)**, **«Պատերազմի հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» (1968թ.), «Միջոցներ, որոնք պետք է ընդունվեն ընդդեմ նոր պատերազմի քարոզչության և հրահրողների» (1947թ.), «Կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն» (1947թ.)** նաև միջազգային մի շարք այլ իրավական փաստաթղթեր, որոնք բոլորն ամրագրում են հենց մեր ժողովրդի իրավունքները, հաստատում բռնության և ճնշման դեմ ելնելու և ապստամբելու հենց մե՛ր ժողովրդի մարդկային բնական և անօտարելի իրավունքը:

Անդրադառնանք նաև չասվածին՝ **չորրորդ մասին.** ինչո՞ւ, հանկարծ, ԱՍԱԼԱ-ն հիշեցին: Բացատրությունը մեկն է. հայոց ազատագրական պայքարի պատմության դրվագներում ԱՍԱԼԱ-ն միակն է, որ պայքարի ելավ ոչ միայն մեր ժողովրդի դեմ իրականացված հանցագործությունների հետևանքները վերացնելու, հանցագործներին պատժելու, այլև հայության դեմ ծրագրվող նոր հանցագործությունները կանխարգելելու նպատակով: Վկայություններից մեկը ԱՍԱԼԱ-ի ծննդյան (1975) և Բեյրութի հայկական թաղամասերի վրա հարձակման (1979) թվականների իրողություններն են:

Ահա թե ինչու, սկզբունքային նշանակություն են ստանում՝ ավազա՞կ, թե՞ **հայդուկ**, ելուզա՞կ, թե՞ **ֆիդայի**, վտարանդի՞, թե՞ **ազատամարտիկ**, ահաբեկի՞չ, թե՞ **ազատագրական պայքարի զինվոր** հասկացությունների տարբերակումը, որն արել է ժամանակին Րաֆֆին հենց նույն նպատակով և որին մենք՝ հայոց ներկա և ապագա սերունդներս, պիտի հետևենք՝ պահպանելու համար ինքնապաշտպանության դիմելու, ազատագրական պայքարի ելնելու, մեր ժողովրդի իրավունքները պաշտպանելու սրբազան և անօտարելի իրավունքը: **(Խմբ.)**

<u>Ծանոթագրություն</u>

1. Տես՝ PanArmenian.net, 05.02.2009:

2. Տես՝ Հայերի դատը Փարիզի երդվյալների ատյանում, 1984 թ., հունվարի 24-31-ը, նյութերի թարգմանությունը և նախաբանը՝ Գրիգոր Ջանիկյանի: Առաջին անգամ հրատարակվել է «Նորք» պարբերականում՝ կրճատումներով, Հայաստանի գրողների միության օրգան, 2001, N - 1, 2, 3, 4:

ՐԱՖՖԻ ՀԱՅԴՈՒԿՆԵՐ (1) (1892 թ.)

Հայդուկ բառը չէ նշանակում գող, ավազակ, կամ վտարանդի[1] ելուզակներ, դա նույն նշանակությունն ունի, ինչ որ էին հունաց կլիֆտները **(2)** նրանց ապստամբության ժամանակ, կամ ..., սուլիոտները **(3)**: Հայդուգը բնական արտահայտություն է բռնակալության լծի տակ ճնշված, հարստահարությունից տանջված և յուր մարդկային բոլոր իրավունքները կորցրած ժողովրդի կյանքի[2]: Հայդուգը ստրուկի բողոքն է իշխողի բարբարոսության դեմ: Նա թողնում է ընտանեկան օջախը, որ իր համար պղծված էր, նա թողնում է յուր հասարակությունը, առանձնանում է մթին անտառների խորքում, սարերի անմատչելի փապարներում, և այնտեղ՝ որպես մի փոքրիկ թագավոր, լեռների ազատ որդին սկսում է տիրել ամայության վրա: Բնությունը միանում է հաջող ձեռքի հետ, և հայդուգը իր որջից մահ և սարսափ է սպառնում իր շրջակայքի վրա: Իրավ, նա մորթում է, կողոպտում է, այրում է մարդկանց բնակարանները, բայց այդ բոլորը գործում է՝ որպես նեղված ժողովրդի բարկության ոգին, որ վրեժխնդրության մեջ բավականություն է գտնում:

Հայդուգը հասարակ ավազակից որոշվում է գլխավորապես նրանով, որ նա ոչ թե հափշտակության ագահությունից դրդված, կամ հանգամանքներից ստիպված է գործադրում իր արյունահեղ արհեստը, այլ նրա սրտի հետ կապված է խորին ազգային զգացմունք և ազատության բաղձանք: Հայդուգի գործունեությունը հեղափոխական բնավորություն է ստանում այս կողմից, որովհետև նա իր սրով պաշտպան է հանդիսանում նեղյալին և ուխտում է անգթաբար պատժել անիրավությունը[3]: Իր սիրելի հայրենիքը ազատված տեսնել տիրանի ճնշումից, իր արյունակից եղբայրներին փրկել բարբարոս ձեռքից, ահա դրանք են նրա ցանկությունները[4]. սրանց հասնելու համար նա չէ խնայում ամեն սարսափելի միջոցներ:

Մեզանում դեռ գրականությունն ուշադրություն չէ դարձրել այս տեսակ երևույթների վրա, հայդուգները, ավազակները մեզ մոտ դեռ չեն մտել վեպերի կամ բեմական գրվածքների մեջ[5], թեև նրանք խիստ հաճախ հայտնվել են և անհետացել ժամանակի հոսանքի հետ: Հայդուգը և ավազակը չեն ճանաչվել մեզանում որպես պատմական անձնավորություններ, որպես հանկարծ ցայտող կայծեր ժողովրդի հանգած քաջազնական կյանքից:

Մի գրող միայն, հանգուցյալ Աբովյանը[6], իր գրքի մեջ դուրս բերեց այդ կենդանի ժողովրդական տարրը, նրա Աղասին իր խմբով ուրիշ ոչինչ չէ, եթե ոչ հայդուգների մի հրոսակ:

Դեռևս մոտ ժամանակներում հայտնվեցան եթե ոչ հայդուգներ, բայց նշանավոր ավազակներ, որպես էին՝ Ղարաբաղցի Քեշիշօղլին, երևելի Ադիկյուպել պարսկի ընկերը, Եզիկը, Եզնակը, Քոչոն, Ասատբեկի ընկերը: Դրանց գործերի մեջ, որքան լսել եմ, կա շատ ինչ բանաստեղծական և վիպական: Բայց նրանց մոտ ծանոթները գոնյա չգրեցին իրանց կենսագրությունը: Հայ ավազակապետները ռուսաց և պարսից պատերազմի ժամանակ, ռուսաց և տաճկաց պատերազմների ժամանակ **(4)**, միշտ մեծ դեր են խաղացել հայ գեներալների ձեռքի տակ, որպես էին Մադաթովը, Բեբութովը, և այս վերջին պատերազմում **(5)**՝ Լորիս Մելիքովը ու Տեր-Ղուկասովը:

Տեսնելով, թե ինչ տպավորություն գործեց իմ «Ջալալեդդին» փոքրիկ վեպիկը ընթերցողների վրա, ես քաջալերվեցա իմ վաղվա գրած մի աշխատությունը լույս ընծայել, որ կրում է անունս «Հայդուգներ»: Դա որպես կտեսնի ընթերցողը, հայդուգների մի խումբի հիշատակարան է, որ գոյություն է ունեցել մոտ 70 տարի առաջ, որի մասին դեռ երեխայությունից ես շատ ավանդություններ էի լսել իմ հայրենիքում, և որի մասին տեղական լեգենդական զրույցները դեռ չեն կորել Վասպուրականի հայ ժողովրդի բերանից:

Ես նպատակ չունեի այսպես շուտ հրատարակելու այս աշխատությունը, ի նկատի ունենալով մի քանի թերություններ, որ պետք էր լրացնել, կրկին ճանապարհորդելով Վանի, Մուշի և առհասարակ Վասպուրականի կողմերը, ուր հանդիսանում են մեր հայդուգները. ինձ պետք էին մի քանի վիպագրական ճիշտ տեղեկություններ, որոնք թռել էին իմ հիշողությունից, դեռ 15 տարի առաջ ճանապարհորդած լինելով այն կողմերում: Իսկ այսքանն էլ բավական է ցույց տալու համար, թե մեզանում պակաս չեն եղել տղամարդիկ, որ չզգային թուրքերի լծի դառնությունը և չաշխատեին ազատ լինել:

Ես իմ աշխատությանը հիշատակարանի ձև տվի, որովհետև նրանք քաղել եմ մի իննսունամյա ծերունու պատմությունից, որ պահված էր նրա հիշողության մեջ, և որ ինքն իմ նկարագրած խմբի նշանավոր անդամներից մեկն է եղել:

(Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 11, Հրապարակախոսական և գրական-քննադատական հոդվածներ, Նաիրի հրտ., Երևան, 1991, էջ 96)

Ծանոթագրությունը՝ Րաֆֆու հատորը կազմողների

Հոդվածը նախապես գրվել է իբրև «Կայծեր» վեպի առաջաբան: Հեղինակի կենդանության օրոք այն չի տպագրվել: Առաջին անգամ հրապարակել է Աննա Րաֆֆին 1892 թ. «Արաքս» հանդեսում՝ կից հղելով հետևյալ ծանոթագրությունը. «Այս գրականական բեկորը, որը մեծ սիրով զիջեց մեզ տպագրելու հանգուցյալ Րաֆֆու մեծարգո այրին, երևի հանգուցյալից նշանակված է եղել իբրև առաջաբան մի ընդարձակ վեպի, որ լույս չէ տեսել, գուցե այդ վեպը լինի հռչակավոր «Կայծերը»[7]:

1. Հայդուգներ - հայդուկներ (հունգարերեն՝ հետևակային) են կոչվել XV-XIX դարերում թուրքերի դեմ մարտնչող կամավորական ջոկատները, հարավային սլավոնական ազգերի, ինչպես և հայերի միջավայրում հայդուկներ են անվանվել թուրքական վայրագություններից լեռներում ապաստանած վրիժառուները (էջ 96):

2. Կլիֆտները հույն ալբանական ցեղախմբեր են, որոնք մարտնչում էին թուրք տիրապետողների դեմ: 1821-28 թթ. հունական ժողովրդական ապստամբության տարիներին կլիֆտները ունեին իրենց առանձին զորքը (էջ 96):

5. Սուլիոտ - ինչպես և կլիֆտները հռչակվել են թուրքական բռնակալության դեմ հունական ազատագրական պայքարի օրերին: Իրենց անունը սուլիոտները ստացել են Սուլի լեռան անվանումից, ուր նրանք բնակություն էին հաստատել՝ խուսափելով թուրքերի հալածանքներից: Տես՝ Մ. Հակոբյան, «Մետեորա» հանդեսը: Երևան, 1977, էջ 167-225::

4. ...ռուսաց և պարսից..., ռուսաց և տաճկաց պատերազմների... -նկատի ունի 1826-27 թթ. ռուս-պարսկական և 1828-29 թթ. ռուս-թուրքական պատերազմները (էջ 97):

5. ...և այս վերջին պատերազմում... -նկատի ունի 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմը (էջ 97):

Հոդվածը արտատպվում է «Արաքս» հանդեսից, Պետերբուրգ, 1892 թ., գիրք Ա, էջ 91-93:

Հայդուկ (հունգարերեն՝ հետևակ), թուրքական բռնապետության (XV – XIX դդ.) դեմ պայքարող մարտիկ (նաև ապստամբ - պարտիզան) Հունգարիայում, Բուլղարիայում, Հարավսլավիայում (Սերբիա, Խորվաթիա, Մակեդոնիա ևն), Մոլդովայում, Վալախիայում, Արևմտյան Հայաստանում (տես՝ ֆիդայի): Իր դասակարգային էությամբ պայքարը հակաֆեոդալական էր, նպատակը՝ ազգային անկախությունն ու ազատությունը:

(Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Երևան, 1980, էջ 157)

Ֆիդայիներ (արաբերեն՝ զոհեր), XIX դարի վերջին և XX դարի սկզբին Արևմտյան Հայաստանում թուրք. բռնապետության դեմ պայքարող մարտիկներ: Ֆ-ի ազգային-ազատագրական, հակաֆեոդալական, դեմոկրատական շարժումն իր բնույթով համապատասխանում է XV – XIX դդ. թուրք. նվաճողների դեմ բալկանյան ժողովուրդների հայդուկային (տես՝ Հայդուկ) պայքարին: Սկզբնապես դրսևորվելով որպես ընդվզում առանձին հարստահարիչների դեմ՝ Ֆ-ի շարժումը ծավալվել է սուլթան. կառավարության ազգային հալածանքների և սոցիալ. ճնշումների դեմ, վերաճել ազգային-ազատագրական պայքարի: ՌՍՖԲԿ II համագումարին Բաքվի կոմիտեի ներկայացրած զեկուցագրում, որ կազմել էր Բ. Կնունյանցը, Արևմտյան Հայաստանի Ֆ-ի (հայդուկային) խմբերը գնահատվել են որպես հեղափոխ. ուժեր:

Ֆ. ունեցել են գործունեության հատուկ սկզբունքներ, որոնք հետագայում իր «Մարտական հրահանգներում» ամփոփել և ամբողջացրել է Անդրանիկ Օզանյանը: Անդամագրվելով խմբին՝ Ֆ. երդվել են կյանքը զոհել հայրենիքի և ժողովրդի համար, անվրեպ կրակել, մաքուր պահել զենքը, լինել գաղտնապահ, ճշտախոս, բարոյապես բարձր, չհայհոյել, չօգտագործել ոգելից խմիչքներ, բավարարվել համեստ սննդով, չվիրավորել միմյանց, հարգանքով վերաբերվել աշխատավոր ժողովրդին՝ անկախ ազգությունից, մարտում ցուցաբերել խիզախություն, հնարամտություն, հաղթել թվական գերակշռություն ունեցող թշնամուն: Որպես ժողովրդի ազատագրության գործին ամեն պահի զոհաբերվելու պատրաստակամության խորհրդանշան՝ Ֆ. իրենց հետ ունեցել են պատանքներ (դիասավաններ): Ֆ. անընդհատ գտնվել են շարժման մեջ, պայքարել բռնակալության դեմ, պաշտպանել աշխատավորների շահերը:

1880-ական թթ. Ֆ-ի առաջին խմբերը Մուշ և Սասուն գավառներում գլխավորել են Արաբոն և Մխո Շահենը (Մխիթար Սեֆերյան), Վասպուրականում՝ Կաճեթ գյուղի բնակիչներ Չաթոն և Շերոն: Արաբոյի խմբում կռվել են ալիզռնանցի Լևոնը, մըկթենքցի Գևորգ Չաուշը, գոմերցի Հովիկը, բերդակցի Ներսոն և ուրիշներ: 1880-ական թթ. 2-րդ կեսին Նուսում և Կարինում հայ Ֆ-ի շարժումը ղեկավարել է Հակոբ Սարկավագը: Առաջին հայ Ֆ-ից էր Հունոն (սալմաստեցի Հարություն աղա): 1880-ական թթ. վերջին և 1890-ական թթ. սկզբին Երզնկայում և Սեբաստիայում գործել է Հովհաննես Մինասյանի (Մինաս օղլու) խումբը: Ֆ. են դարձել նաև Արևելյան Հայաստանից, Ռուսաստանից և ուրիշ հայկ. գաղթավայրերից Արևմտյան Հայաստան անցած բազմաթիվ հայ երիտասարդներ: 1889-ի մայիսի 15-ին, Սալմաստից Վան անցնելու ճանապարհին, թուրք. ուժերի դեմ անհավասար մարտում զոհվել են Մոսկվայի Լազարյան ճեմարանի նախկին ուսանող Վարդան (Ալեքսանդր) Գոլոշյանը և Հովհաննես Ագրիպասյանը: 1890-ական թթ. ձևավորվել են բիթլիսցի Մուշեղի (Ղպեյան), Աղբյուր Սերոբի, Անդրանիկի, սպաղանցի Մակարի խմբերը, որոնք ժողովրդին կոչել են զինված պայքարի՝ ընդդեմ թուրք. բռնապետության: Ֆիդայի Հրայրը (Արմենակ Ղազարյան) 1890-ական թթ. ջանացել է խմբակային կռիվների մարտավարությունից անցնել ժողովրդ. լայն շարժման, թուրք. լծի դեմ հայ և քուրդ ժողովուրդների համատեղ պայքարի կազմակերպմանը: Աղբյուր Սերոբի զոհվելուց (1899) հետո Ֆ-ի շարժումը ղեկավարել է Անդրանիկը: 1901-ին 80 Ֆ., Անդրանիկի և Գևորգ Չավուշի գլխավորությամբ Մշո Առաքելոց վանքում 21 օր մարտնչել են թուրք. բազմաքանակ զորքի դեմ, ապա ճեղքելով պաշարման օղակը՝ ապաստանել են Սասունում:

Ֆ. խիզախորեն մասնակցել են նաև թուրք. ջարդարարների դեմ հայ ժողովրդի մղած ինքնապաշտպանական մարտերին (1894-96-ի հայկ. կոտորածների ժամանակ, 1902-04-ին ևն): 1908-ի երիտթուրք. հեղաշրջումից հետո, երբ Ֆ-ին ներում է շնորհվել, նրանցից շատերը իջել են լեռներից և զբաղվել խաղաղ աշխատանքով: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ֆ. կռվել են կամավորական ջոկատներում (տես՝ Կամավորական շարժում 1914-18), 1915-ին՝ Մեծ եղեռնի ժամանակ, մասնակցել հայ ժողովրդի գոյամարտերին: Ժողովուրդը փառաբանել է Ֆ-ի հերոսությունը, նրանց մասին ստեղծել բազմաթիվ երգեր: Խ. Դաշտենցն իր «Ռանչպարների կանչը» վեպում էպիկական շնչով կերտել է մի շարք նշանավոր Ֆ-ի կերպարներ: **(Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, Երևան, 1986, էջ 641)**

Ծանոթագրությունը «Ուխտ Արարատի»

1. «Հայդուգ բառը չէ նշանակում գող, ավազակ, կամ վտարանդի»,- գրում է Րաֆֆին: Մենք կարող ենք ավելացնել, չի նշանակում նաև «**ահաբեկիչ**» (տեռորիստ), որը գերտերությունների կողմից անվան նենգափոխումն է՝ արդարացնելու համար իրենց ագրեսիվ ու ծավալապաշտական արտաքին քաղաքականությունը և զրկելու իրավազրկված ժողովուրդներին պաշտպանության դիմելու իրավունքից: Ներկայիս «միջազգային ահաբեկչություն» (տեռորիզմ) կոչվածը գերտերությունների հատուկ ծառայությունների կողմից ստեղծված հանցագործ խմբերն են, որոնք ահաբեկում են թիրախ ընտրված երկրների անզեն, խաղաղ, անպաշտպան բնակչությանը:

2. Ժողովրդի ազատագրական պայքարի և ինքնապաշտպանության դիմելու իրավունքի մասին է խոսում Րաֆֆին, որը հետագայում ամրագրվեց Ազգերի Լիգայի, Միավորված Ազգերի Կազմակերպության միջազգային տարբեր փաստաթղթերում:

3. Ազատամարտիկի բարոյական կերպարի մասին է խոսքը, որը շատ լավ է պատկերացրել ու նկարագրել Րաֆֆին, բայց, որը նույնպես ցանկանում են նենգափոխել բոլոր նրանք, ովքեր ուզում են կասկածի տակ առնել հայ ժողովրդի **ինքնապաշտպանության** իրավունքը:

4. Ուրիշ ի՞նչ նպատակներ է հետապնդում ազատագրական պայքարը, եթե ոչ Րաֆֆու նշածները… **«Իր սիրելի հայրենիքը ազատված տեսնել տիրանի ճնշումից, իր արյունակից եղբայրներին փրկել բարբարոս ձեռքից»**:

5. Սակայն, ժողովուրդն աննկատ չի թողել իր հերոսներին: Գուսանները հյուսել են երգեր, որոնք մեզ են հասել անգամ արգելքի պայմաններում, զորօրինակ՝ Հայրիկ Մուրադյանի ազգանվեր աշխատանքով 1970-ականներին բազմաթիվ ուսանողներ սովորեցին դրանք: Քաջարի հայդուկ-ֆիդայիների մասին հյուսվել են լեգենդներ, պատմություններ, որոնք ապրում ու դաստիարակում են նոր սերունդներ:

6. Մեր ժամանակներում էլ, ցավոք, մի գրող է՝ Խաչիկ Դաշտենցը՝ «Ռանչպարների կանչը» վեպով:

7. ԽՍՀՄ-ում Րաֆֆին արգելված էր մինչև 1950-ականների կեսերը, սակայն, մինչև Րաֆֆու գրքերի առաջին հրատարակությունը, Սովետական Հայաստանի երիտասարդները մեծ ոգևորությամբ, առաջին հերթին հենց «Կայծերը» գաղտագողի կարդալով են մեծացել: Մտահոգիչ է, որ մեր օրերում՝ վերջին քսան տարիներին՝ անկախության հռչակումից ի վեր, մեր երկրի հեռուստատեսությունը, ըստ էության, ամեն բան անում է մոռացության մատնելու ոչ միայն Րաֆֆուն և Թումանյանին, այլև մեր մյուս ազգային գործիչներին, մեծերին…

ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ 2-ՐԴ, ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԵԾ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

(Երկրի հանցագործ ղեկավարի տիպական դիմանկար, անցյալի և ներկայի համեմատականով)

Աբդուլ Համիդ 2-րդ (1842-1918). թուրք սուլթան 1876-1909-ին: Կառավարման սկզբնական շրջանում ներկայացել է իբրև բարեռորոգումների և սահմանադրական կարգի կողմնակից, 1876-ին հռչակել է օսմանյան սահմանադրությունը, որի մշակմանը մասնակցել է նաև Գ. Օտյանը. Սակայն, 1878-ին Ա.Հ. 2-րդը արձակել է խորհրդարանը, հաստատել դաժան վարչակարգ (հայտնի է «զուլումի քաղաքականություն» անունով), մտցրել խիստ գրաքննություն, արգելել «Ազատություն», «Հայաստան» բառերը: Դաժանորեն ճնշել է բուլղարների, մակեդոնացիների, արաբների, հայերի ազգային ազատագրական շարժումները: Ա.Հ. 2-րդի օրոք Անգլիան Թուրքիայից գրավել է Կիպրոսը, Եգիպտոսը, Ֆրանսիան՝ Թունիսը, թուրքական լծից ազատագրվել են եվրոպական մի շարք ժողովուրդներ, Ռուսաստանին են անցել Արևմտյան Հայաստանի որոշ տարածքներ, այդ թվում՝ Կարսը և Արդահանը: Սան Ստեֆանոյի պայմանագրով (1878) և Բեռլինի դաշնագրով (1878) Ա.Հ. 2-րդը պարտավորվել է բարեռորոգումներ անցկացնել Արևմտյան Հայաստանում: Սակայն, դրան հետևել են 1894-96 թթ. հայկական կոտորածները, որոնց համար նա ստացել է «Կարմիր սուլթան» մականունը: Երիտ-թուրքական հեղաշրջումից հետո (1908) հարկադրված վերականգնել է 1876-ի սահմանադրությունը, սակայն, 1909-ի մարտի 31-ի հեղաշրջման անհաջող փորձից հետո գահընկեց է արվել և աքսորվել: **(Ռ. Սահակյան, Հայկական հարց հանրագիտարան, ՀՀԳ, Երևան, 1996, էջ)**

Պատմաբան Ջոն Կիրակոսյանը մի քանի էջ է հատկացրել Աբդուլ Համիդի դիմանկարը ամբողջացնող ականատեսների վկայություններին: Այսպես.

Համիդը փողասեր էր: Երիտասարդ տարիներին նա ոսկու առևտրով էր զբաղվել Գալաթիայում, կապված էր միջնորդների, վաշխառուների հետ և սուլթան հռչակվելուց հետո հաճախ իր այդ գործընկերներին ճաշի էր հրավիրում Յըլդըզ Քեոշք:

Անգլիացի Պիրսը վկայում է, որ Համիդը կատարելապես չէր տիրապետում թուրքերենին, իսկ նրա ֆրանսերենի ուսուցիչները դժգոհում էին իրենց աշակերտից:

Յըլդըզի մենավորը պատկանում էր այն այլասերվածների խմբին, որոնք իրենց չար գործերի համար մշտապես ապրում էին մշտնջենական սարսափի ճիրաններում: Նա սպանում էր, որովհետև վախենում էր սպանվելուց, որովհետև մահի ուրվականը մշտապես սավառնում էր նրա գլխին: Ամրացած Յըլդըզի պարիսպների ետևում, նա հազիվ կարողանում էր իր ամենօրյա զբոսանքների միջոցին մի քանի քայլ շեղվել իր բնակավայրից, իր գաղտնի խուցերից: Սարսահափահար ոճրագործը կատարյալ հոգեկան հիվանդ էր և արյան ծարավի:

Իտալացի հեղինակ Լուիջի Օլիվերոն, Աբդուլ Համիդին համեմատելով այլ բռնակալների հետ, ոչ մի արդարացում չի գտնում արյունոտ սուլթանին: Անհնարին է որևէ հոգեբանական բացատրություն գտնել նրա հրեշավոր դաժանությանը: Համիդն ամբողջությամբ գիտակցում էր, թե ինչ էր անում: Նրա կողմից ամեն ինչ վաղորոք մտածված էր, հանգամանորեն հաշվարկված և իրագործվում էր մեծագույն վարպետությամբ: Դեռևս պատանի Համիդը, ապագա սուլթանը, արդեն կազմել էր իր զոհերի ցուցակը: Սուլթանն իրեն շրջապատել էր անշնորհք մինիստրներով և խորհրդականներով, Ղուրանի ուսմունքի կույր հետևորդներով:

Թամաշևի կարծիքով ամբողջ կայսրության մեջ չգտնվեց գոնե մեկ մահմեդական ֆինանսիստ, որը պետությանն իրական ծառայություն մատուցեր: Կառավարական մարմիններում հազվագյուտ էին բարձրագույն կրթությամբ մարդիկ, նրանք հիմնականում տգետ և խավարամիտ մարդիկ էին: Իսկ քիչ թե շատ կիրթ մտավորական մարդիկ անբարեհույս էին համարվում: Ընդհանրապես «զուլումի տարիներին պետական պաշտոնյայի կրթվածությունը նրա քաղաքական անբարեհուսության նշան էր համարվում»:

Ամեն պաշտոնյա, կառավարիչներ իրենց պաշտոնները կենտրոնական կառավարությունից ստանում էին «խոշոր կաշառքներով միայն»: «Ասոնք պարտականություն չեն նկատեր երկրը բարգավաճ և բարեկարգ վիճակի մեջ դնել, այլ թույլ կուտան իրենց կողոպտելու և աղքատացնելու ժողովուրդը, և անոնց աշխատության արդյունքով լեցնելու իրենց քսակները»: «Չրպարտիչները կվարձատրվին պատիվներով ու պաշտոններով»: Մարդկանց ձերբակալում էին, պահում տարիներով առանց դատավարության: Վարչական կամայականությունը, կոռուպցիան, անօրինականությունները կյանքի ու ունեցվածքի ապահովության բացակայությունը բնորոշում էին «զուլումի ժամանակաշրջանի» իրականությունը:

Անգլիացի Ֆրիմանը այսպես է բնութագրել թուրքական կառավարությունը. «Դա կառավարություն չէ, դա կազմակերպված ավազակություն է, սիստեմատիկ ճնշում, բռնություն, սիստեմատիկ կոտորում ու ավերում, մարդ ասված արարածի ամենատարրական իրավունքների կատարյալ բացակայություն ու բացասում»:

Համիդի կառավարումը տևել է 33 տարի: Այդ ընթացքում նա Թուրքիայում ստեղծել էր քաղաքական ճնշման, հետապնդումների, բարբարոսական հաշվեհարդարների, անտանելի լրտեսության, համատարած կաշառակերության, բախշիշի, ծախվածության թունավոր մի մթնոլորտ:

(Ջոն Կիրակոսյան, «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» (XIX դարի 80-ական թթ.), Հայաստան հրտ., Երևան, 1980, էջ 23-28)

«Թուրքական հետախուզությունը նշանառության տակ է վերցրել Ռուսաստանը»

Լրատվությունը ներկայացնում ենք որոշ կրճատումներով: **«Թուրքական հետախուզական կազմակերպությունը (ՄԻԹ) որոշել է իր գործունեության տասը առաջնահերթությունները, այդ թվում՝ հսկողությունը Կենտրոնական Ասիայում և Կովկասում Ռուսաստանի վարած դիվանագիտական քաղաքականության, ինչպես նաև ՌԴ-ի էներգետիկ քաղաքականությանը: Ըստ թուրքական զլմ-ների տվյալների՝ Ռուսաստանի անունը ամենաշատն է հոլովվում թուրքական հետախուզության նոր ռազմավարության մեջ: Կենտրոնական Ասիայի և Կասպիական ավազանի տարածաշրջաններում թուրքական հատուկ ծառայություններին հետաքրքրում է ռուս-չինական համագործակցությունը էներգետիկայի ոլորտում... ՄԻԹ-ի հետաքրքրությունների ոլորտում ընկած են նաև Աֆրիկա մայրցամաքը, Կարմիր ծովի և Ադենի ծովածոցի շրջանները: Վերջինիս նկատմամբ հետաքրքրությունը ակնհայտ է՝ հաշվի առնելով Սոմալիի ծովահենների ակտիվության աճը տարածաշրջանում»: («Պրավդա.ռու», 20.03.2009):**

Այս վերջին նախադասությամբ հեղինակը փորձում է ծածկել բուն խնդիրը, քանի որ արհեստականորեն ստեղծված այս նոր ծովահենությունը քողածածկույթ է ընդամենը, որպեսզի հիմնավորվի տարածաշրջանում ՆԱՏՕ-ական ուժեր տեղակայելու անհրաժեշտությունը: Փաստորեն, սրանից հետևում է, որ Իսրայելի անվտանգության խնդիրը ամբողջությամբ անցնում է թուրքական բանակին: Թուրքական բանակին է անցնում նաև Աֆրիկա մայրցամաքի՝ ժամանակին ԱՄՆ-ի տրված հսկողության դերակատարությունը: Մյուս թվարկված ուղղություններն էլ խոսում են այն մասին, որ ամեն ինչ պայմանավորված է ԱՄՆ-ի բեռի թեթևացման խնդրով, որպեսզի վերջինս կարողանա Բուշի վարչակարգի ստեղծած ճգնաժամից դուրս գալ, ինչպես նաև ԱՄՆ զինուժի ողջ բացասական գործը նոր ժամանակներում շարունակելու խնդիրը դնի թուրքական զինուժի վրա: (Խմբ.)

ԱԼԲԱՆԱԿԱՆ ԼԻԳԱ

Բեռլինի կոնգրեսի նախորդող ժամանակահատվածում 1878թ., թուրքական կառավարությունը որոշեց իր նպատակների համար օգտագործել ալբանական շարժումները, պահպանելու համար ալբաններով բնակեցված շրջանների ամբողջությունը: 1878թ. հունիսի 10-ին թուրքական կառավարության աջակցությամբ հանդիսավոր հայտարարվեց, այսպես կոչված, Ալբանական լիգայի ստեղծման մասին[1]: Օգտվելով առաջին նիստերում մահմեդական բեյերի գերակշռությունից, թուրքական կառավարությունը հասավ նրան, որ Ալբանական լիգայի կողմից ընդունվեց հայտարարություն ընդդեմ բալկանյան պետությունների հողային պահանջների Թուրքիայի նկատմամբ: Սակայն, լիգան շուտով կապերը խզեց թուրքական կառավարության հետ և առաջադրեց Ալբանիայի ինքնավարության պահանջը[2]: Լիգան իրեն հռչակեց ինքնավար Ալբանիայի ժամանակավոր կառավարություն, սակայն, ջախջախվեց 1881թ. թուրքական իշխանությունների կողմից: XX դարի սկզբին ալբանական, ինչպես և օսմանական Թուրքիայի մի շարք այլ պրովինցիաներ դարձան եվրոպական գերտերությունների մրցակցության օբյեկտներ: Ալբանական հողերի մասնատման մրցակցությանը, Ավստրո-Հունգարիային և Իտալիային զուգահեռ ձգտեցին մասնակցել նաև Բուլղարիայի, Հունաստանի, Սերբիայի և Չեռնոգորիայի իշխող շրջանակները: 1908թ. երիտթուրքական հեղափոխության հետ կապված ալբանացիների ազգային ազատագրական շարժումը ավելի մեծ թափ ստացավ: Ալբանիայի մի շարք քաղաքներում ի հայտ եկան գաղտնի կոմիտեներ, սկսվեց զինյալ ջոկատների ձևավորումը[3]: 1908թ. հուլիսից ալբանական ապստամբները սկսեցին գործել երիտթուրքերի հետ համատեղ, որոնք խոստացել էին դեմոկրատական վերափոխումներ և Ալբանիային տրվելիք ինքնավարություն[4]: Երիտթուրքերի իշխանության գալը սկզբնական շրջանում նպաստեց ալբանական ազգային ազատագրական շարժման հզորացմանը: Սակայն, երիտթուրքերը ոչ միայն Ալբանիային ինքնավարություն չտվեցին, այլև սկսեցին բացահայտ հարձակում ալբանացիների ազգային իրավունքների դեմ (1909թ. մայիսին Կոսովոյում իրականացվեց «պատժիչ» գործողություններ, իբր համաձայն, այսպես կոչված, «Բանդաների մասին» 1909թ. ընդունված օրենքի[5]): **(ВСЭ, том 1, Москва, 1969, стр. 385)**

<u>Ծանոթագրություն</u>

1. Գաղափարը հենց անգլիացիներն էին տվել:

2. Դա հովանավորել և դրդել էին եվրոպական հեղինակավոր, այսպես կոչված, սոցիալիստական (ինտերնացիոնալ) ուժերը, վստահ, որ դա ավարտվելու է կոտորածով, ինչն էլ իրենց վերջնական նպատակն էր՝ Օսմանյան կայսրությունը փլուզելու ծրագրին համապատասխան:

3. Ինքնապաշտպանության զինյալ ջոկատ իրենց մոտ չկար, սարքում էին, մեզ մոտ կար՝ զինաթափեցին, մեր իսկ կուսակցությունների ձեռքով:

4. Ինչին հավատացին նաև հայ քաղաքական կուսակցությունները, թե Օսմանյան կայսրության պառլամենտի միջոցով կարող են հասնել Հայաստանի ինքնավարության:

5. Նույն թվականի գարնանը տեղի ունեցավ Ադանայի կոտորածը, կար 1994-96 թթ. համիդյան կոտորածների փորձը, այդուհանդերձ, հայ քաղաքական միտքը չսթափվեց:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՐՑ

Օսմանյան կայսրության բաժանման համար մեծ տերությունների միջև ծավալված պայքարի և օսմանահպատակ ժողովուրդների, այդ թվում՝ հայ ժողովրդի, ազատագրական շարժման հետ կապված միջազգային հակասությունների անվանումը դիվանագիտության մեջ: Ա. հ. տերմինը առաջին անգամ գործածվել է Սրբազան դաշինքի (Ռուսաստան, Ավստրիա, Պրուսիա, Ֆրանսիա ևն) երկրների Վերոնայի կոնգրեսում (1822)՝ Թուրքիայի դեմ Հունաստանի մղած անկախության պատերազմի կապակցությամբ: Լոզանի կոնֆերանսում (1922-23) ստորագրված հաշտության պայմանագրով Ա. հ. հասկացությունը վերացել է:

Ա. հ.-ի պատմությունը պայմանականորեն բաժանվում է երեք փուլի: Առաջինն ընդգրկում է XVIII դ. 2-րդ կեսից մինչև 1853-56-ի Ղրիմի պատերազմն ընկած շրջանը, երբ Արևելքում ուժեղացել է Ռուսաստանի ազդեցությունը, հաղթական պատերազմների հետևանքով Ռուսաստանին են անցել Ղրիմը, Բեսարաբիան, Կովկասի մի մասը: Ռուսաստանի այդ հաջողությունները հանդիպել են Ֆրանսիայի, Ավստրիայի և Անգլիայի դիմադրությանը:

Երկրորդ փուլն ընդգրկում է XIX դ. 2-րդ կեսը, երբ Օսմ. կայսրության ամբողջականության պահպանման պատրվակով Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան ձգտել են թուլացնել Ռուսաստանի դիրքերը Բալկաններում, Մերձ. Արլ-ում և ընդլայնել իրենց ազդեցության ոլորտը Թուրքիայում: Դրան նպաստել է Ռուսաստանի պարտությունը Ղրիմի պատերազմում: Չնայած 1877-78-ի ռուս-թուրք. պատերազմում Ռուսաստանի հաղթանակին, եվրոպ. տերությունները խոչընդոտել են նրան օգտվել այդ հաջողությունից: Պատերազմից հետո կնքված Սան Ստեֆանոյի պայմանագրի (1878), ապա Բեռլինի կոնգրեսի (1878) փաստաթղթերում, միջազգային դիվանագիտության մեջ առաջին անգամ, շոշափվել է Հայկական հարցը, որը Ա. հ.-ի բաղկացուցիչ մասն էր: Ա. հ.-ի երկրորդ փուլում վերելք է ապրել Օսմ. կայսրության լծի տակ գտնվող ժողովուրդների՝ հայերի, հույների, բուլղարների, սերբերի և այլոց ազգային ազատագրական շարժումը: Բեռլինի կոնգրեսից (որը չարդարացրեց հայ ժողովրդի հույսերը) հետո հայ հասարակական քաղաքական շրջանակներում հասունացել է Արմ. Հայաստանը թուրք. լծից զենքով ազատագրելու գաղափարը:

Ա. հ.-ի երրորդ փուլն ընդգրկում է XIX դ. վերջից մինչև 1923-ը ընկած ժամանակաշրջանը: Ուժեղացել է Գերմանիայի ազդեցությունը Օսմ. կայսրությունում, կնքվել է երկու երկրների դաշինք: Ընդլայնվել է հայերի, արաբների և այլոց ազգ-ազատագր. շարժումը, որը իբրև հարմար առիթ օգտագործել են մեծ տերությունները Օսմ. կայսրության ներքին գործերին միջամտելու համար: Նրանք առաջ են քաշել Արմ. Հայաստանում բարեփոխումներ անցկացնելու ծրագրեր (տես՝ Մայիսյան բարեռորոգումներ 1895, Հայկական բարեռորոգումներ 1912-14): Օգտվելով եվրոպ. տերությունների միջև եղած հակասություններից՝ թուրք, կառավարող շրջանակները ոչ միայն չեն իրագործել նախատեսված բարեփոխումները, այլև ձեռնամուխ են եղել հայ ժողովրդի ոչնչացման ծրագրի իրականացմանը (տես՝ Հայկական կոտորածներ 1894-96, Ադանայի կոտորած 1909, Մեծ եղեռն):

Առաջին աշխարհամարտում (1914–1918) Թուրքիայի պարտության հետևանքով Օսմ. կայսրությունից անջատվել են ազգային շատ տարածքներ: 1920-ի Սևրի հաշտության պայմանագրով ճանաչվել է նաև անկախ և միացյալ Հայաստանի գոյությունը: Սակայն, Թուրքիայում ծավալված ազգայնամոլ, շարժումը (տես՝ Քեմալական շարժում), քեմալ. Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի մերձեցումը խոչընդոտեցին Սևրի պայմանագրի իրականացմանը. Արմ. Հայաստանը և Կիլիկիան մնացին թուրք. տիրապետության տակ:

Լոզանի կոնֆերանսում ճանաչվեցին Թուրքիայի նոր սահմանները. Օսմ. կայսրությունը դադարեց գոյություն ունենալ: Ա. հ. ստացավ իր լուծումը, սակայն Հայկ. հարցը դեռևս մնում է չլուծված: **(Ռ. Սահակյան, Կ. Խուդավերդյան, Հայկական հարց հանրագիտարան, ՀՀԳ , Երևան, 1996, էջ 57)**

Քրդերի բնակեցում Ադրբեջանում. ո՞վ է անում, ի՞նչ նպատակով...

Բակուր Կարապետյան. արձակագիր, հրապարակախոս

2000-ին մի խումբ շահումյանցիների հետ գնացել էի Մռավի լեռնաշղթայի Շահումյանի մերձակա տարածք, մեզ հետ գյուլիստանցիներ էլ կային, որոնք ամեն տարի ուխտի են գնում Սուրբ Աստվածածին Անապատ՝ Գյուլիստանը հեռվից տեսնելու: Այնտեղ մեր ուղղությամբ կրակոցներ եղան.. Վերադառնալով՝ սկսեցի հետաքրքրվել, թե ովքեր կարող էին լինել: Փնտրտուքիս ընթացում միջազգային մամուլում ադրբեջանական ընդդիմության թերթերը ուշադրությունս գրավեցին. ադրբեջանցի քաղաքական մեկնաբաններն անդրադառնում են քրդական հարցին, բողոքում այն ծրագրի դեմ, որ ձեռնարկել ու իրագործում են թուրքական և ադրբեջանական իշխանությունները… Երկար ուսումնասիրությունից հետո եկա այն համոզման, որ ադրբեջանցիները Դիարբեքիրից ու Մուշից քուրդ գրոհայիններին՝ իրենց ընտանիքներով բնակեցրել են Շահումյանի և ԼՂՀ-ի հարակից բռնազավթած շրջաններում: Մամուլում մանրամասնորեն նկարագրվում է, թե ինչպես են քրդերը ավտոբուսներով գալիս իրենց դրոշներով, զուռնա դհոլով, երգ ու պարով… Նրանց շարքերում՝ նաև ավտոմատավոր զինյալներ:

Ադրբեջանի ընդդիմադիր թերթերը շատ են գրում քրդերի տեղափոխման մասին. 60.000 քուրդ բնակեցվել են ԼՂՀ-ի մերձակա շրջաններում, 20.000՝ Բաքվի շրջակայքում: Քրդերին մշտական չեն գրանցում. մեկ տարվա համար անձնագիր են տալիս, որն ամեն տարի նորոգվում է: Քրդերի կեցության հարցը հոգում է Ադրբեջանի իշխանությունը. նրանց մեծ հնարավորություն է տրված գործարարությամբ զբաղվելու: Հայտնի քրդերի անուններ են շեշտվում, ովքեր այսօր տեղ են գրավել ադրբեջանաբնակ օլիգարխների ցուցակում:

Ադրբեջանի Միլլի մեջլիսում քրդերի վերաբնակեցման հարցը քննարկելու առաջարկ է եղել, սակայն կառավարության ղեկավարի միջամտությամբ հարցի քննարկումը արգելափակվել է: Ադրբեջանցի ընդդիմադիրները վախ ունեն, որ քրդերն, իրենց երկրում հաստատվելով, կուժեղանան և որոշ ժամանակ անց իրենք կունենան քրդերի խնդիր՝ լեզգիների, թալիշների, ալավիների, ցախուռների խնդիրներին զուգահեռ: Իշխանություններն ամեն կերպ քողարկում են այս փաստը: Իշխանամետ մամուլն արդեն կեղծ լուրեր է տարածել, իբր թե Հայաստանը 60.000 զինյալ քուրդ է բնակեցրել ազատագրված տարածքներում և պատրաստվում է նրանց միջոցով Ադրբեջանի դեմ պատերազմել:

Հանդես եկա հայտարարությամբ, որ բռնազավթած Շահումյանի և ԼՂՀ-ի հարակից շրջաններում Ադրբեջանի իշխանությունները քրդեր են բնակեցնում:

Գիրք եմ գրել Հեյդար Ալիևի մասին. «Հեյդար Ալիև. Ո՞վ եմ ես»: Տեղյակ էի, որ Նախիջևանի և Սիսիանի շրջանի միջև քրդաբնակ գյուղեր են եղել և Հ. Ալիևը ծնվել է այդ գյուղերից մեկում՝ Ջամրդլուում: Նա երեք թե չորս տարեկան է եղել, երբ տեղափոխվել են Նախիջևան: Նրա արմատների քրդական ծագման մասին էլի տեղեկություններ կային: Նախիջևանում լույս էր տեսել մի հոդված «Քուրդ առաջին գիտնականը» վերնագրով: Ալիևի ավագ եղբայրը գիտական թեզ էր պաշտպանել բուսաբանության վերաբերյալ: Հետո դարձել դոկտոր, ակադեմիկոս: Վերջինս քուրդ առաջին գիտնականն է համարվում (1931-32թթ.): Գրքիս նյութը քաղել եմ Ալիևի մամլո ասուլիսներից, ռուսական, եվրոպական ու թուրքական մամուլից, լավատեղյակ մարդկանց զրույցներից: Նա ասում էր, որ ծնվել է այս թվականին, Նախիջևանում: Բերելով իմ ունեցած ողջ արխիվային տվյալները՝ մանրամասներեն ներկայացրել և ապացուցել եմ, թե իրականում երբ և որտեղ է նա ծնվել: Նա կեղծում էր իր ողջ անցյալը: Ինքն ասում էր, որ թուրք է: Ես ապացուցեցի, որ քուրդ է:

Մի անգամ Իրանից վերադառնալիս տեղի ադրբեջանցի մտավորականները հանդիպում խնդրեցին. գիրք էի գրել Իրանի Ատրպատականի մասին, անդրադարձել էի նաև նրանց: Հանդիպման ժամանակ դիմեցին ինձ, թե որպես երրորդ կողմ՝ ի՞նչ եմ կարծում, ո՞վքեր են իրենք: Անկարայից ասում են՝ թուրք են, Թեհրանից ասում են՝ իրանցի: Ես տվյալներ բերեցի, որ 1250-ականներին Չինգիզ խանի թոռը՝ Գուլակ խանը, Միջին Ասիայից ժողովուրդ բերեց Ատրպատականի (Կրակի երկիր) տարածք, որը Մարական պետության մի մասն էր: Նրանք փոքրաթիվ էին և ռազմատենչ: Եվ կարճ ժամանակում իշխող դարձան: Տեղի ժողովրդի հետ խառնվելով ծնվեց մի լեզու, որն այսօր ադրբեջաներեն է կոչվում: Նրանք էթնիկապես իրանցի են, թուրք չեն: Իսկ Ադրբեջանի «ադրբեջանցիները» Հյուսիսային Կովկասից Ղրիմից եկած թաթարական ցեղերի և Միջին Ասիայից եկած ցեղերի (թարաքաման) մի խառնուրդ են, որ ուզում են ադրբեջանցի կոչվել: Հյուսիսային (Ադրբեջանի Հանրապետություն) և Հարավային (Հյուսիսային Իրանի հատված) ադրբեջանները միացնելու արհեստական խնդիր են ստեղծել թուրք ու ադրբեջանցի քաղաքագետներն ու դիվանագետները՝ Իրանի հյուսիսային հատվածն անջատելու համար: Իսկ Քուռ-Արաքսի հովիտը Մեծ Հայքի կազմում Հայաստանի մի մասն է եղել, որը կոչվել է Առան: Ըստ թուրքական, արաբական, պարսկական աղբյուրների դա Հայաստանն է:

Մի երկու խոսք էլ իմ կատարած այլ աշխատանքների մասին. «Արևմտյան Հայաստանը մինչև 1915թ.» խորագրով ցուցահանդես եմ բացել: Ստեղծել՝ «Շուշի» մշակութային հիմնադրամը, որի աշխատանքների շրջանակում Շուշի քաղաքի մշակութային ժառանգության ուսումնասիրության ծրագիրն է: Հաշվառել, քարտեզագրել, չափագրել ենք Շուշիի և նրա շրջակայքի հուշարձանները: Ճարտարապետների 30 հոգանոց խմբի հետ երեք ամիս հսկայական աշխատանք ենք կատարել. 7.000 լուսանկար ենք արել, ամբողջը թվայնացված է, որից 3500-ը տեղադրված է avetis.org կայքեջում: Ստեղծել եմ մատենաշար, որը կոչվում է «Արցախյան գոյամարտի համահավաք»: Այդ համահավաքից երկու գիրք արդեն հրատարակվել է: Հույս ունեմ, որ այս հատորները տարիներ անց կդառնան ժողովրդական էպոս:

ՋԵՄՄԱ ԲԱՂԴԱՂԱՅԱՆ

«Օբաման՝ քրդերի բարեկամ»: DTP կուսակցության առաջնորդ Ահմեդ Թյուրքը PKK-ROJ TV հեռուստաալիքին մեկնաբանություններ է արել Թուրքիայի Միլլի մեջլիսում ԱՄՆ նախագահի հետ իր հանդիպման մասին: Ինչպես գրում է «Ջաման» թերթը, ըստ Թյուրքի, Օբաման ասել է, որ ինքը քրդերի բարեկամ է և կողմնակից դեմոկրատական քաղաքական հենքով քրդերի պայքարին: Թյուրքն ասել է, որ Միլլի մեջլիսի խոսնակի առանձնասենյակում իր հետ ծանոթանալիս Օբաման ուրախություն է արտահայտել ծանոթանալու ընդդիմության մեջ գտնվող և քաղաքական դաշտում գործող քրդական առաջնորդի հետ: «Ես տեսա, որ Օբաման տիրապետում է քրդական հարցին վերաբերող տեղեկատվությանը»,- ասաց Թյուրքը: Օբամայի այն դիտողությանը, թե խնդիրը չպետք է ուժով լուծվի, Թյուրքը պատասխանել է. «Մենք նույնպես դեմ ենք ուժային լուծման, սակայն արդեն տեսել ենք 17 հազար մահ»: Ամերիկայի ձայնի քրդերեն հաղորդման ժամանակ Թյուրքը հաղորդել է. «Մեր թղթածրարում, որը հանձնեցինք Օբամային, մենք ընդգծեցինք, որ ուզում ենք լուծել այդ խնդիրը Թուրքիայի շրջանակում, բայց կարիք ունենք մեր ինքնության ճանաչման»: Բանակցությունները ընթացան շատ ջերմ մթնոլորտում: Օբաման ասել է, որ ինքը քրդերի բարեկամն է և կողմնակից է քրդերի ազգային շահերի ազատ արտահայտմանը: Օբաման ընդգծել է, որ ինքը կողմնակից է քրդերի քաղաքական պայքարին: **(«Գոլոս Արմենիի», 09.04.2009թ., էջ 4)**

ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՆ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՅՑԵՑՈՒՄՍԸ ԵՎՐՈՄԻՈՒԹՅՈՒՆ

Լրատվությունը ներկայացնում ենք ամբողջությամբ, տողատակը մերն է - խմբ.:

«Հարավային Կովկասի վեց երկրներ՝ ինչպես ճանաչված, այնպես էլ չճանաչված (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ղարաբաղ, Աբխազիա և Հարավային Օսիա), պետք է Եվրոմիության տանիքի ներքո միավորվեն՝ կազմելով Հարավկովկասյան կոնֆեդերացիա, որն առաջին հերթին կնպաստի տնտեսական թռիչքին: Բացի դրանից, նվազագույնը 5 տարի հետո այդ երկրները կդառնան Եվրոմիության ասոցացված անդամներ, հետո՝ անդամության թեկնածուներ Եվրոմիության անդամագրության և վերջապես՝ Եվրոմիության անդամներ: Այսօր կայացած մամլո ասուլիսի ընթացքում այս նախաձեռնության մասին տեղեկացրեց «Եվրոպայի հայկական միությունների ֆորումի» նախագահ Աշոտ Գրիգորյանը[1]:

Նշենք, որ այդ մասին նա առաջին անգամ հիշատակեց անցած տարի սեպտեմբերին կայացած եվրոպական տնտեսական ֆորումի ժամանակ: Նրա խոսքերով՝ ծրագրի իրականացման դեպքում Եվրոմիության և Հարավկովկասյան կոնֆեդերացիայի համար՝ որպես հենակետ, Բրատիսլավայում պետք է ստեղծվի ռազմավարական կենտրոն[2]: Ա. Գրիգորյանը նշեց, որ այդ մասին ինքը խոսել է Հարավային Կովկասի հարցերով ԵՄ-ի հատուկ կոմիսար Պիտեր Սեմնեբիի հետ, ով դրական է վերաբերվել այդ ծրագրին[3]:

Ինչ վերաբերում է հարավկովկասյան երկրներին, ինչպես նշեց Ա. Գրիգորյանը, չնայած դրան, որ Օսիայի և Աբխազիայի հետ դեռ չեն խորհրդակցել, այնուհանդերձ կասկած չկա, որ նրանց վերաբերմունքը դրական կլինի: Վրաստանի ներկայացուցիչը հայտնեց, որ «ե՛թե դուք ընդհանուր լեզու գտնեք Ռուսաստանի հետ, ապա վրաց ժողովուրդը պարտական կլինի», իսկ Ադրբեջանի ներկայացուցչի հետ պահպանվում են ինտենսիվ կապեր:

Ռուսաստանի կապակցությամբ Ա. Գրիգորյանը նշեց, որ այդ երկիրը պետք է ողջունի նախաձեռնությունը, քանի որ միայն ՌԴ-ի կողմից ճանաչված երկրները՝ Հարավային Օսիան և Աբխազիան, միանգամից կարճ ժամանակում ճանաչում կստանան: Բացի դրանից, ծրագիրն ամբողջությամբ համապատասխանում է ՌԴ-ի շահերին, այդպիսով Հարավային Օսիան կարող է դառնալ կապող օղակ ՌԴ-ի և ԵՄ-ի միջև, ինչը ներկայումս անհրաժեշտ է իրենց՝ ԱՄՆ-ի[4] շահերին դիմակայելու համար»: (Panorama.am, 06.03.2009)

Անդրկովկասյան ֆեդերացիայի երրորդ փորձը: Կովկասյան ինտեգրման ծրագրեր: Կովկասյան պլատֆորմ:

Կովկասյան ինտեգրման թեման, աշխարհի գլոբալացման և եվրոպական երկրների միության ընդհանուր թեմաներին զուգահեռ, ավելի ու ավելի հաճախակի է հնչում: Պատմական այդպիսի փորձեր արվել են ժամանակին և բոլորն էլ ձախողվել, ինչո՞ւ: Ովքե՞ր են իրականում համառորեն կանգնած այդ հին ու նոր ծրագրերի հետևում:

Ցարական Ռուսաստանի փլուզումից հետո, 1917-ի մարտի 9-ին Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը վերացրեց Կովկասի փոխարքայությունը և ստեղծեց Անդկովկասյան հատուկ կոմիտե (Օզակոմ): 1917-ի նոյեմբերի 15-ին Թիֆլիսում կազմվեց Անդկովկասյան կոմիսարիատ: 1918-ի փետրվարի 10-ին Թիֆլիսում բացվեց Անդրկովկասյան սեյմը: Ապրիլի 22-ին Անդկովկասյան սեյմը Անդկովկասը հայտարարեց անկախ: Մայիսի 26-28-ը Անդկովկասյան սեյմը ցրվեց. Վրաստանը, Ադրբեջանը, Հայաստանը հռչակվեցին անկախ հանրապետություններ: 1922-ի մարտի 12-ին Թիֆլիսում ստեղծվեց Անդրկովկասի սովետական սոցիալիստական ֆեդերատիվ հանրապետությունների միությունը՝ ԱՍՍՖՀՄ-ը (Անդրֆեդերացիան): 1922-ի դեկտեմբերի 10-ին ԱՍՍՖՀՄ-ը վերակազմավորվեց Անդկովկասի սովետական սոցիալիստական հանրապետության՝ ԱՍՍՀ-ն: Դեկտեմբերի 30-ին ստեղծվեց ԽՍՀՄ-ը, որի մեջ մտավ մինչ այդ անկախ պետություն հանդիսացող ԱՍՍՀ-ն:

Սա է Անդրկովկասյան ֆեդերացիա կոչված ծրագրի համառոտ նախապատմությունն ու բնույթը, որը հենց այս հենքով էլ ունեցավ և ունի տրամաբանական իր զարգացումները թե նախկինում, թե ներկայում, անկախ նրանից, թե ի՞նչ եղանակ է դրսում՝ սոցիալիստակա՞ն, կապիտալիստակա՞ն, գլոբալացմա՞ն, թե՞ եվրոինտեգրման…

Պատմաբան Աղասի Եսայանը գրում է. **«Ինչպես երևում է Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչի զեկույցից Հասկելի (ԱՄՆ-ի և դաշնակից տերությունների կոմիսարը Հայաստանում և Անդրկովկասում) օգնական Ռեյնը, որը Բաքու էր ժամանել 1919 թ. հոկտեմբերի 18-ին, Ադրբեջանի պրեմիեր-մինիստր Ուսուբեկովին հայտնել է, որ Ամերիկան[5] որոշել է մանդատ վերցնել ամբողջ Անդրկովկասի համար պայմանով, որ «Անդկովկասյան հանրապետությունները ֆեդերացվում կամ կոնֆեդերացվում են և, իհարկե, Ամերիկային համապատասխան փոխհատուցում տալու պայմանով: Վրացիներն այդ առաջարկությանը դեռևս պատասխան չեն տվել: Ուսուբեկովը Ադրբեջանի անունից համաձայնություն է տվել, և այսօր Ռեյնը պետք է լինի Երևանում, որպեսզի նույն առաջարկությունն անի Հայաստանին»**: (Աղասի Եսայան, «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը», «Միտք» հրտ., Երևան, 1965 թ., էջ 177-179)

Ուրեմն, Անդկովկասյան կամ Կովկասյան ֆեդերացիա ստեղծելու խնդիրը միայն ռուս-բոլշևիկյան կողմից չէ որ դրված էր, այլև ամերիկյան, եվրոպական, որը կտեսնենք հետագայում…

Լև Տրոցկին «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» հայտնի հոդվածում մի մեջբերում ունի հրապարակախոս Մ. Պավլովիչ Որոնտյովի «Ազգային և գաղութային» գրքից. **«Հայաստանում սովետական կարգերի հաստատումը մի քայլ է Կովկասի, Վրաստանի, Հայաստանի և Անատոլիական Թուրքիայի ֆեդերացիայի ստեղծման համար, ֆեդերացիա, որի կորիզը կլինի և որի շուրջը կհամախմբվեն արևելքի մյուս պետությունները»**, և ապա Տրոցկին իր անունից շարունակում է. **«Անկարայի կառավարությունը պիտի հասկանա, որ Հայաստանի սովետականացումով արդեն հնարավորություն է ստեղծվում ոչ թե նրա դեմ պայքարելու, այլ նրա հետ համախմբվելու՝ իմպերիալիզմի դեմ ընդհանուր պայքարի համար: Եթե մի կողմից Անկարայի կառավարությունը հասկանա դա և կարողանա բարձր կանգնել կույր և տարերային ազգային ատելությունից, իսկ մյուս կողմից Հայաստանը հետևի Լենինի՝ ազգային զոհաբերության մասին պատգամին, ապա այդ ժամանակ կարելի կլինի համոզվածությամբ պնդել, որ առաջիկա կոնֆերանսը վերջ կտա բոլոր թյուրիմացություններին, անվստահություններին ու մասնակից պետություններին կմիավորի անխախտելի բարեկամության ամուր շղթայով: Ահա այդ ժամանակ արևելքում հեղափոխության համար կբացվի իմպերիալիզմի դեմ հաղթանակի փայլուն դարաշրջան»**: (Տես՝ Լև Տրոցկի, «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» հոդվածը, հրապարակվել է Ա. Սկաչկո կեղծանվամբ, որը Տրոցկու ղեկավարած Ռազմական նախարարության կադրերից էր, «Ուխտ Արարատի», թիվ 3 / 14, 2007, էջ 20)

1995-2000թթ. շարունակվեց Կովկասյան ընդհանուր տուն եվրոպական մոդելի հորդորներն ու քարոզչությունը, որին, որպես հետևանք, դրվեց ՀՀ Սահմանադրական փո-

փոխությունների հարցը:

Այդ է պատճառը, որ 2005-ի ՀՀ Սահմանադրական փոփոխություններն ընկալվում են որպես հիմք և հեռանկար՝ տարածաշրջանային ինտեգրման նոր գործընթացների: 2007-ին «Ռեգնում» ինտերնետ կայքում զետեղված Մամեդ Առաքելով ադրբեջանցու անունով և հայի ազգանունով մտացածին կամ արդեն «ինտեգրված» հեղինակի՝ «Անդրկովկասյան ֆեդերացիայի երրորդ փորձը» վերնագրով հոդվածում բառացիորեն ասված է՝ **«Այդուհանդերձ, Անդրկովկասյան կամ ինչպես հիմա ընդունված է ասել, Հարավկովկասյան ֆեդերացիայի կամ կոնֆեդերացիայի ձևավորումը շարունակում է սավառնել օդում և նույնիսկ ընդունել որոշակի տեսանելի ուրվագծեր, անկախ՝ շատ դանդաղ, բայց թափ հավաքող Հարավկովկասյան պառլամենտական նախաձեռնություններից: 2005-ի վերջին տեղի ունեցան իրադարձություններ, որոնք դիտորդներից ոմանք հակված են շաղկապել հենց այդպիսի պետական կազմավորման հեռանկարի հետ: Խոսքը 2005-ի հոկտեմբերի 29-ին Հայաստանում կայացած Սահմանադրական փոփոխությունների մասին է, որոնք շատ ակտիվորեն հովանավորվում էին եվրոպական կառույցների կողմից»**[6]: (Նույն տեղում, էջ 22)

Ուշադրություն դարձրեք գործածված արտահատություններին. «սավառնում է օդում», «որոշակի տեսանելի ուրվագծեր է ստանում», «թափ է հավաքում», «հովանավորվում է եվրոպական կառույցների կողմից» և այլն…

Մինչ այդ էլ խնդիրը նույնն է եղել, ինչ՝ 1917-ին, 1918-ին, 1919-ին, 1920-ին… ընկերներն անգամ չեն էլ փորձում մի նոր բան հնարել կամ նոր ծրագրի վրա մի քիչ աշխատել: Նպատակը նույնն է՝ Հայաստան աշխարհի լուծարումը (Անդկովկասյան կոչված, թե՝ Կովկասյան) Հայաստանի դեմ ռազմավարական դաշինք կազմած Հայաստանի տարածքները բռնազավթած երեք երկրների՝ Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի առանցքում:

Ի դեպ, «ինտեգրում» նշանակում է «միաձուլում», իսկ թե հանուն ինչի՞ ենք միաձուլվելու թուրքերի, ադրբեջանցիների, անգամ վրացիների հետ, ընկեր կոմիսարները չեն բացատրում: Ընկեր կոմիսար Տրոցկին գոնե ասում էր՝ հանուն համաշխարհային հեղափոխության: Ընկեր կոմիսար Սեմնեբին, Ա. Գրիգորյանի և ուրիշների միջոցով, երևի եվրոպական հին - նոր ծրագրերը կբացատրի, հանուն՝ եվրոինտեգրման, հանուն աշխարհի գլոբալացման: Բառարանում անպայման պետք է այս վերջին տերմինի բացատրությունը նայել, հանուն «ընդհանրացման», երևի…

2008-ին օգոստոսին թուրքական իշխանությունները հանդես եկան Կովկասյան պլատֆորմի եվրո-թուրքական առաջարկով: Ռուսաստանը կողմ արտահայտվեց ծրագրին: Հայաստանը, մեր կարծիքով, նախ՝ պետք է լավ ուսումնասիրի խնդիրը՝ հաշվի առնելով իր պատմական «հարուստ» փորձը այս հարցում:

Ծանոթագրություն

1. Պատվերը Եվրոմիությանն է, պատասխանատուն՝ Պիտեր Սեմնեբին: Հնարավոր է՝ Ա. Գրիգորյանը տեղյակ էլ չէ, որ Հարավային Կովկասի ինտեգրման քաղաքական քարտեզը իր հեղինակային իրավունքը չէ, և որ դրա նախկին մի քանի փորձերը անհաջողության են մատնվել 20-րդ դարի սկզբին:

2. Ուրեմն, ռազմավարական կենտրոնը բացվում է Բրատիսլավայում, իսկ տեղեկատվականը՝ Բաքվում, քանի որ «Միրը» իր հերթին տեղեկացնում է, որ Ադրբեջանում նոր հեռուստաալիք է բացվում թուրքերեն, պարսկերեն, ռուսերեն, եբրայերեն, հայերեն լեզուներով… («Միր» հ/ը, 14.03.2009թ.): Իսկ դա նշանակում է, որ այդ կենտրոնը կարող է ղեկավար դեր ստանձնել բոլոր հանրապետությունների տեղեկատվական հոսքերը հսկելու և ուղղորդված տեղեկատվություն տարածելու համար: Չի բացառվում, որ այս ծրագիրը հեռահար նպատակ ունի ընդարձակվելու մինչև Հյուսիսային Կովկաս, ասել է, թե՝ 2008-ի օգոստոսյան տապալված օպերացիան հաջողության բերելու խնդրում: Դրա մասին է խոսում և այն, որ, չգիտես՝ ինչո՞ւ, հենց այս պահին, երբ առաջիկայում դրված է Կովկասը ռազմա-քաղաքական թատարաբեմ սարքելու խնդիրը, Ռուսաստանը որոշել է Չեչնիայում արտակարգ դրությունը վերացնել և Հյուսիսային Կովկասի պաշտպանական համակարգը թուլացնել:

3. Ճիշտ կլիներ Պիտեր Սեմնեբիին նախ խորհրդակցեր Աբխազիայի, Օսիայի, Լեռնային Ղարաբաղի բնակիչների հետ՝ ցույց տալով, որ հարգում է այդ ժողովուրդների ինքնորոշման և անկախության իրավունքը:

4. Այստեղ իրականում Պիտեր Սեմնեբիի անմիջական խոսքն է, որով նա փորձում է Ռուսաստանին ընկերակից դարձնել Եվրոպային, իբր ԱՄՆ-ին դիմակայելու խնդրում: Սեմնեբին ընդհանուր եվրոպական քաղաքականությունը փորձում է ներկայացնել, որպես ԱՄՆ-ից պաշտպանվելու հակամարտություն, որը, եթե իրողություն լիներ, ապա ավելի ցնցող կլիներ, քան 2001-ի սեպտեմբերի 11-ը: Իսկ թե ինչո՞ւ է ԵՄ-ն այդ գոյություն չունեցող հակամարտությանը մասնակցելու կանչում Ռուսաստանին, կարծում ենք պարզ է, քանզի այն հիշեցնում է ելցինյան Ռուսաստանին խաբելու փորձված տարբերակը:

5. Ամերիկան - ՀԱՄՆ՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներ, այն ժամանակ ԱՄՆ-ը պաշտոնապես այդպես էր կոչվում: (Աղասի Եսայան, «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը», «Միտք» հրտ., Երևան, 1965 թ., էջ 179)

6. “Регнум”, Мамед Аракелов. “Между тем формарования Закавказской или, как принято сейчас говорить, Южнокавказской федерации или конфедерации продолжает литать в воздухе и даже обретать некие зримые очертания: кроме очень медленно, но все же набирающей обороты Южнокавказской парламентской инициативы. В конце 2005 года произошли события, которые некоторые наблюдатели склонны увязывать именно с перспективой создания такого гособразования. Речь идет о состоявшемся 29 ноября 2005 г. в Армении референдуме по конституционным поправкам, который очень активно лоббировался европейскими структурами”.

«Քարեկամություն երկու ճակատով»: Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի Մոսկվա կատարած չորսօրյա այցելության առիթով հետաքրքիր բացահայտում է անում Բիլկենտյան համալսարանի քաղաքագիտության պրոֆեսոր **Էրսել Այդընլին**. «Կովկասում և Սևծովյան ավազանում կայունությունը Թուրքիային պետք է նաև այն պատճառով, որ ամերիկացիների՝ Իրաքից հեռանալուն կհետևի իրաքյան Քուրդիստանի անջատումը: Թուրքական բանակը արդեն մեկ տարի է՝ ինչ լրիվ մարտական պատրաստությամբ կանգնած է Թուրքական Քուրդիստանում (պետք է հասկանալ Արևմտյան Հայաստանում -խմբ.): Կովկասի ապակայունացումը կստիպի Թուրքիային պատերազմ մղել երկու ճակատով, ինչը Անկարան իրեն թույլ տալ չի կարող» (**«Գոլոս Արմենիի», 19.02.2009, էջ 4, «Քարեկամություն երկու ճակատով»):** Երկրորդ ճակատ ասելով՝ Այդընլին նկատի ունի ՀՀ - ԼՂՀ ճակատը, որի մասին է խոսում նաև ԱՄՆ ռազմական քոլեջի դասախոս **Ստեֆան Բլանկը**՝ «Քրդական հարցը և Լեռնային Ղարաբաղը» հոդվածում **(Տես՝ այս համարում, էջ 30-31):**

ՀԱՆՑԱԳՈՐԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

1988-ից բացահայտվեց, որ գլոբալացման առանցքում Հայկական հարցը նույն վիճակում է, ինչ՝ 1828-1923 թթ., այն տարբերությամբ, որ եթե նախկինում հարցը բարձրացվում էր՝ լուծումներ չտալու համար, այդպիսով հայությանն ու Հայաստանին այլոց ձեռքերով վնասելու, ապա 1965-ից գործընթացը նպատակ ուներ պատրաստել ՀՀ-ի և ԼՂՀ-ի լուծարումը: 1965-ից մինչև 1985-ը քաղաքականությունը ուղղորդված էր մեր երկիրը՝ Արևելյան Հայաստանը, տակավին անկախության չհասած, փլուզման տանելու, իսկ Արևմտյան Հայաստանի համար զուգահեռ՝ որպես գործընթացի շարունակություն, արևմուտքը նախատեսել էր հրահրել քրդական շարժումը, որի բուն նպատակը իրապես երևաց Ռալֆ Պիտերսի հոդվածում և քարտեզում:

ԱՄՆ բանակի ռազմական քոլեջի դասախոս **Ստեֆան Բլանկի** «Քրդական հարցը և Լեռնային Ղարաբաղը» հոդվածը, ըստ էության շարունակությունը Պենտագոնի այս նոր քայլն է և ԱՄՆ Զինված ուժերի պաշտոնաթող սպա **Ռալֆ Պիտերսի** «Մերձավոր Արևելքի նոր քարտեզը՝ ըստ հավատի նմանությունների և արյունակցական կապերի» հոդվածի: Պիտերսի հոդվածում դրված է բուն ծրագիրը՝ Մերձավոր Արևելքի երկրների, Կովկասի, Արևմտյան Հայաստանի և Արևելյան Հայաստանի սահմանների փոփոխությունը ու նոր արհեստածին երկրի ստեղծումը: Բլանկի հոդվածում տրվում է միջազգային հանցագործ այդ ծրագիրն իրականացնելու՝ պատերազմական գործողությունների սանձազերծման կերպն ու հրահանգը, կոնկրետ՝ ՀՀ-ի և ԼՂՀ-ի նկատմամբ:

Քննարկման առարկա չէ, որ երկու հոդվածների թե՛ հեղինակները, թե՛ պատվիրատուները կատարում են ազգամիջյան ատելության հրահրման, պատերազմի և ցեղասպանության քարոզչություն, գործողություններ, որոնք ենթակա են պատասխանատվության**: (Խմբ.)**

ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ

Աղբյուրը՝ ԱՄՆ բանակի ռազմական քոլեջի դասախոս **Ստեֆան Բլանկ**: Eurasianet
http://www.warandpeace.ru/ru/analysis/view/23757/

Կովկաս. անկայունության գոտի[1]. - Քրդական հարցը, հատկապես քրդերի հայրենիքի ստեղծման առումով, լրացուցիչ բարդություններ է մտցնում Իրաքում կայունություն հաստատելու գործընթացում: **Այսօր միջազգային փորձագետները մտահոգություն ունեն, թե քրդական հարցը կարող է դառնալ լարվածության և հնարավոր է՝ նոր հակամարտության աղբյուրներից մեկն Անդրկովկասում[2]:**

Ինչպես հաղորդում են թուրքական և ադրբեջանական լրատվամիջոցները, քուրդ զինյալները, մասնավորապես Քրդստանի բանվորական կուսակցության[3] (ՔԲԿ) գրոհայինները, ստանալով Երևանում հայկական կառավարության գաղտնի աջակցությունը[4], սկսել են բնակություն հաստատել Լեռնային Ղարաբաղում և Ադրբեջանի՝ Հայաստանի կողմից գրավյալ առանձին շրջաններում: Ըստ առկա տվյալների, քրդերից շատերը վերաբնակեցվում են ռազմավարական նշանակություն ունեցող, ներկայումս Հայաստանի կողմից գրավված, իսկ նախկինում Ադրբեջանի կազմի մեջ մտնող Լաչինի միջանցքում: Լաչինի շրջանի վերահսկողությունը դարձել է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հիմնական «փորձաքարերից» մեկը:

Մինչև Ղարաբաղյան հակամարտության բռնկվելը, Լաչինում բնակվում էին մեծ թվով քրդեր[5], իսկ 1920 թ. այն մտնում էր Քրդական Ինքնավար Մարզի կազմի մեջ: Քուրդ բնակչության մեծ մասը Ղարաբաղյան պատերազմի տարիներին լքեց այս շրջանը: Բայց փաստը մնում է փաստ, որ Լաչինում առկա է քրդերի բնակության պատմական նախադեպը[6]: Սակայն նույնիսկ սրանով հանդերձ, նրանց վերադարձը, հատկապես եթե ճիշտ են նորաբնակների շրջանում ՔԲԿ զինյալների առկայության վերաբերյալ տեղեկությունները, հղի է տարածաշրջանային անվտանգությանն սպառնացող լուրջ խնդիրներով:

Վերջին շրջանում **թուրքական և ադրբեջանական մի շարք լրատվամիջոցներ[7]** ահազանգում են քրդական սպառնալիքի և քրդերի վերադարձի գործընթացում Հայաստանի ենթադրվող դերակատարության մասին՝ իրենց հրապարակումներում ակնհայտորեն թեմայի շուրջ չափազանցությանը տուրք տալով: Հոդվածագիրները պնդում են, որ քուրդ զինյալները կազմակերպում են զորավարժանքների ճամբարներ, ինչպես Ղարաբաղում, այնպես էլ նրա հարակից շրջաններում, և որ հայկական իշխանությունները քրդերին հեռահաղորդակցման պետական մարմիններից օգտվելու «մուտքի իրավունք» են ընձեռում: Նշվում է նաև, որ Հայաստանի քաղաքական կազմակերպությունները, ինչպիսին, օրինակ, Հայ Հեղափոխական Դաշնակցությունն է՝ ամեն կերպ աջակցում են քրդերին, նրանց դիտարկելով որպես միջոց՝ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Հայաստանի վերահսկողությունն ամրապնդելու գործում: Մինչդեռ, թուրքական և ադրբեջանական Զլմ-ներն ընդգծում են, որ Անկարայում և Բաքվում ՔԲԿ-ն համարվում է ահաբեկչական կազմակերպություն[8]:

«Հնարավոր է, որ ՔԲԿ ղեկավարությունն այնքան էլ ապահով չի զգում իրեն Հյուսիսային Իրաքում և մտադիր է տեղափոխվել Լեռնային Ղարաբաղ»,- մայիսի 14-ի համարում գրում է Ստամբուլի «Ենի Շաֆաք» թերթը՝ Թուրքիայի կառավարող Արդարություն և զարգացում կուսակցության մոլի ջատագովը: Հոդվածում բերված տվյալներն անկախ կարգով ստուգվելու ենթակա չեն[9]:

Հայաստանի իշխանությունները վճռականապես հերքում են ՔԲԿ ներկայությունն ինչպես Հայաստանում, այնպես էլ Ղարաբաղի տարածքում՝ «Քրդստանի բանվորական կուսակցության՝ Լեռնային Ղարաբաղ և նրա ենթայակության տակ գտնվող տարածքներ տեղափոխվելու մասին չհիմնավորված լուրերը, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ հերթական սադրանք»,- հայտարարել է ՀՀ արտաքին գործերի նախարարության մամլո նախկին քարտուղար Վլադիմիր Կարապետյանը[10]:

Գուցե մամուլում հայտնված հաղորդագրությունների նշանակությունը նվազեցնելը գայթակղիչ թվա՝ դրանք վաղեմի հակառակորդի՝ Հայաստանի դեմ ուղղված թուրքական և ադրբեջանական քարոզչությանը վերագրելով: Սակայն, ընդհանրապես անտեսել նրանց հայտարարությունները և չմտահոգվելը կարող են վտանգավոր լինել: Դրանք հետագա ուսումնասիրման կարիք ունեն:

Վտանգ կա[11], որ Թուրքիան և Ադրբեջանը կարող են գործը վերցնել իրենց ձեռքը՝ քրդական սպառնալիքը պատրվակ օգտագործելով Ղարաբաղում ռազմական գործողությունները վերսկսելու համար: Ինչպես նշում է քաղաքական վերլուծաբան Մուհաբիզ Ահմեդօղլուն Բաքվի «էխո» օրաթերթում փետրվարին հրապարակած հոդվածում, իր երկրի քաղաքական ղեկավարությունը կարող է իրեն պարտավորված զգալ ուժ կիրառել քրդական հարցը լուծելու գործում՝ «Եթե Հայաստանը շարունակի շարժվել այդ ուղղությամբ, ապա Ադրբեջանը կուժեղացնի դիմադրությունը, ընդ որում, ոչ միայն դիվանագիտական մակարդակում: Ես չեմ բացառում, որ Ադրբեջանը կարող է անցնել իրական ռազմական գործողությունների: Ես գիտեմ պաշ-

տոնյաների, որոնք վերջերս արել են նման հայտարարություններ, և ես այդպիսի տպավորություն եմ ունեցել»,- գրել է Ահմեդօղլուն: Այսպես, Ադրբեջանի արտաքին գործերի փոխնախարար Արազ Ազիմովը հրապարակայնորեն հայտարարել է, որ Բաքուն կվերանայի ռազմական գործողությունների անցկացման հնարավորությունները՝ քուրդ զինյալներին ոչնչացնելու նպատակով:

Բացի այդ, Թուրքիայի զինվորական ղեկավարները վերջին ամիսներին հրաման են արձակել Հյուսիսային Իրաքի տարածքում տեղակայված ՔԲԿ կայանների դեմ ռազմական գործողություններ սկսելու վերաբերյալ և ակնարկել են, որ կմտածեն քուրդ զինյալների դեմ պայքար մղելու մասին՝ **անկախ նրանց գտնվելու վայրից**: Դա տեղիք է տալիս ենթադրելու, որ Թուրքիան կարող է դիտարկել նաև **Ղարաբաղի կամ նույնիսկ Հայաստանի դեմ ռազմական արշավանքի հարցը[12]:**

Այն փաստը, որ թուրքական և ադրբեջանական Զլմ-ն դժգոհում են Ղարաբաղի տարածքում քրդական ռազմական ներկայությունից, ուղղակի պարտավորեցնում է միջազգային հանրությանը և, հատկապես, Մինսկի խմբի համանախագահող երկրներին՝ ԱՄՆ-ին, Ռուսաստանին ու Ֆրանսիային, գործողություններ ձեռնարկել: Անհրաժեշտ է կրկնապատկել Ղարաբաղյան խնդրի շուրջ բանակցությունները «վերակենդանացնելուն» ուղղված ջանքերը՝ չեզոքացնելու, կամ, առնվազն հնարավորինս սահմանափակելու իրադարձությունների անցանկալի ընթացքի հավանականությունը:

<u>Ծանոթագրություն</u>

1. **Կովկաս. անկայունության գոտի** - Արևմուտքի կողմից Կովկասին վերաբերող քաղաքական գործընթացներում ու բառապաշարում նոր տերմին է դրվում շրջանառության մեջ, ինչը բավարար է հասկանալու, թե շուտով ռազմա-քաղաքական նոր աղետ է ծրագրվում գործարկել Կովկասում:

2. **...քրդական հարցը կարող է դառնալ լարվածության և հնարավոր է՝ նոր հակամարտության աղբյուրներից մեկն Անդրկովկասում** - 2006-ին Ռալֆ Պիտերսի ներկայացրած ծրագրի՝ Կովկասյան տրամաբանության զարգացումն է. անմիջական կապ է ստեղծում Իրաքի, Միջին Արևելքի հակամարտությունների և Անդրկովկասում ստեղծվելիք ընդհանուր լարվածության միջև:

3. **Քրդստանի** բանվորական կուսակցության (ՔԲԿ) – Ուշադրություն դարձնենք, որ Բլանկը **Քրդական** բանվորական կուսակցություն կապակցության մեջ **Քրդական** բառը փոխարինել է **Քրդստանով**, միգուցե միտումով, որ հետագայում հիմնավորի Թուրքիայի կողմից բռնազավթած Արևմտյան Հայաստանի տարածքում քրդական պետություն ստեղծելու տրամաբանությունը: Եվրոպական հայտնի հնարք է, գալիս է դեռ 1880-ականներից:

4. **Քրդական բանվորական կուսակցության (ՔԲԿ) գրոհայինները, ստանալով Երևանում հայկական կառավարության գաղտնի աջակցությունը...** - Իրոք, վերջին տարիներին, Թուրքիայից և Ադրբեջանից հնչել են այսպիսի հայտարարություններ: Խնդիրը կեղծ ու ստահոդ հայտարարությունները չեն, այլ այն, որ ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը, լուրջ չընդունելով դրանք, հրաժարվել է իսկապես հակադարձել, երբ պարտավոր էր հասկանալ իրերի բնույթը և համապատասխան նոտայով բացել բուն խնդիրը, կասեցնել դրա ծավալումը, որը ենթադրում է ՀՀ-ի ու ԼՂՀ-ի նկատմամբ ագրեսիայի հիմքեր ստեղծել: Պատահական չէ, որ Բլանկը պարբերության վերջում խնդիրը ներկայացնում է որպես փորձաքար, այսինքն՝ հաստատում է, որ այս գործընթացը ծավալվելու է, դրան ընթացք է տրվելու, և որի համար անում է, իբր հիմնավորումներ և նախազգուշացումներ, առաջիկա պատերազմի ելքերի վերաբերյալ:

5. ...Լաչինում բնակվում էին մեծ թվով քրդեր... - Կեղծիք է: Քարվաճառում (Լաչին) մեծ թվով քրդեր չկային, նրանց հատուկ բերեցին 1924-25 թթ. ներկայացնելով, որ ստեղծում են Կարմիր Քրդստան, բայց իրականում չստեղծեցին: Իսկ 1920 թ. դեռ ԽՍՀՄ-ը չկար, այն ստեղծվել է 1922 թ. դեկտեմբերին և միտումնավոր խոսել ԽՍՀՄ կազմում քրդական ինքնավար մարզի մասին առնվազն անգրագիտություն է. 1988-ին այնտեղ բազմաքանակ քրդեր չէին կարող լինել: 1925թ. Թուրքիայի կողմից բռնազավթված Արևմտյան Հայաստանի տարածքում քրդական ապստամբությունը ջախջախվեց, այսինքն՝ իմաստազկվեց Կարմիր Քրդստանի ստեղծման ծրագիրը:

6. **Բայց փաստը մնում է փաստ, որ Լաչինում առկա է քրդերի բնակության պատմական նախադեպը:** - Առկա է, ընդամենը, Բլանկի կողմից (նույնը՝ Պենտագոնի) պատմական իրողությունների միտումնավոր ենթագիտակցական փոխման փաստը. 1925 թ. Քրդստան ստեղծելու տապալված փորձը դիտարկում է որպես պատմական նախադեպ...

7. **...թուրքական և ադրբեջանական մի շարք լրատվամիջոցներ...** - Պետք է հասկանալ՝ Եվրոմիության ու ԱՄՆ-ի հատուկ ծառայությունների պատվերով և ուղղորդմամբ:

8. **...Անկարայում և Բաքվում ՔԲԿ-ն համարվում է ահաբեկչական կազմակերպություն...** - Հատուկ մեկնաբանության կարիք չկա: Հասկանալի է, որ Իրաքում «զանգվածային ոչնչացման» զենք էին փնտրում, դա էր ագրեսիայի պատրվակը, իսկ ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ առաջիկայում ծրագրվող ագրեսիային տրվելու է իբր ՔԲԿ-ի՝ «ահաբեկչության դեմ պայքարի» պիտակը: Քանի որ առաջիկայում ո՛չ ԱՄՆ-ը, ո՛չ ԵՄ-ը, ո՛չ Թուրքիան լուրջ քայլեր դեռևս չեն կարող ձեռնարկել Իրաքում, ապա լարվածության օջախը տեղափոխում են Կովկասյան տարածաշրջան՝ ՆԱՏՕ-ի հենակետեր տեղակայելու ակնկալիքով: Եվ միայն որոշակի պատճառ չունենալով է, որ ՀՀ-ում ՔԲԿ-ի դեմ պայքարելու պատրվակ են սարքում:

9. Ինչպե՞ս ստուգել, երբ տվյալները սարքված են:

10. Լավ կլիներ, որ Վլադիմիր Կարապետյանը նաև նշեր սադրանքը թելադրողի հասցեն ու նրա հետապնդած նպատակը. հստակ ասեր, որ արևմուտքը Ստեֆան Բլանկի բերանով Թուրքիայի ու Ադրբեջանի առաջ սույնով խնդիր է դնում՝ նոր հակամարտություն սկսել, այս անգամ, քրդական (ՔԲԿ-ի որս) ենթատեքստով: Ծանոթ ձեռագիր է: Այդպես Քեմալը ագրեսիա սկսեց ՀՀ-ի դեմ, իբր թե Հայաստանի ժողովրդին արևմտամետ ազգայնականներից փրկելու: Նույն ձեռագիրն է Իրաքում, որպես ժողովրդավարացման օգնություն իրաքցիներին, սակայն, ինչո՞ւ, ոչ Կամբոջիայում, երբ պետք էր իսկապես Պոլ Պոտից փրկել ցեղասպանության ենթարկվող ժողովրդին:

11. **...Վտանգ կա, որ Թուրքիան և Ադրբեջանը կարող են գործը վերցնել իրենց ձեռքը...** - Խոսքը վտանգի մասին չէ: Ստեֆան Բլանկը սրանով նշում է, որ պատվերը տրված է, իսկ Թուրքիան և Ադրբեջանն էլ հանձնառու են, ուստի, առաջիկայում կարող են ռազմական գործողություններ սկսել:

12. ...**Թուրքիան կարող է դիտարկել նաև Ղարաբաղի կամ նույնիսկ Հայաստանի դեմ ռազմական արշավանքի հարցը...** - Այս նախադասությունը գրված է հենց թուրքերի և ադրբեջանցիների համար, որը նշանակում է, թե արևմտյան քաղաքականությունը ոչ միայն թույլ է տալիս, այլև կարդարացնի ռազմական գործողությունները: Երկակի խաղ է, անշուշտ, չէ որ սկսելուց հետո արևմուտքը ձեռքերը կլվա ու կհրաժարվի թե՛ օգնելուց, թե՛ արդարացնելուց: Ավելին, կսկսվի թուրքական իշխանությունների դատապարտման, ապա Թուրքիայի, Իրանի, Իրաքի մասնատման ծրագիրը: ՀՀ և ԼՂՀ իշխանություններին էլ հուշում է, թե իբր այս գործընթացը միայն արևմուտքը կարող է կանգնեցնել:

Ազատագրական պայքարի էջերից՝ Ֆիդայիներ, Նեմեսիս, ԱՍԱԼԱ...



Շահան Նաթալի (1884-1983)

Զորավար Անդրանիկ (1865-1927)

Գուրգեն Յանիկյան (1895-1984)

Ա՜խ, ի՛մ ժողովուրդ,
Ես դեռ չկայի՞,
Բայց կտրիճ որդիք մի՞թե քիչ կային,
Որ - հողի՞ տակից - զենք էին պեղում
Եվ քո արյան դեմ սև արյուն հեղում:
Սասո՞ւնը...
Արդեն ո՞րերորդ անգամ -
Նորից տեր դարձավ նոր Դավիթ մանկան,
Որ - ինչո՞ւ սակայն -
Կոչվեց Անդրանիկ:
Ահեղ ջարդերի ճարակող բոցում
Ամեն սասունցի դարձավ Սասնա ծուռ,
Սասնա տուն դարձավ ամեն ընտանիք,
Սասնա դյուցազուն՝ թե՛ մեծ, թե՛ պուճուր,
Որ - բավակա՞ն է -
Քառսունծամ կույսեր, հարսեր արմաղան
Օսմանցու համար էլ երկանք չաղա՛ն,
Որ բավակա՞ն է...

Պարույր Սևակ
Երկերի ժողովածու 6 հատորով, հ 4, «Հայաստան» հրտ., 1973, էջ 87-88

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մարդկության դեմ ուղղված հանցագործությունները կանխարգելելու, Հայոց Մեծ եղեռնի զոհերի ոգեկոչման 94-րդ և Ադանայի կոտորածի 100-րդ տարելիցների կապակցությամբ:

Հայոց ցեղասպանությունը ծրագրվեց դեռ 1880թ.՝ Հայկական Հարցը միջազգային դիվանագիտական ասպարեզից հանելու մեկ հիմնական նպատակով: Այդ խնդրին են ծառայել՝ 1894-1896թթ. Աբդուլ Համիդի կազմակերպած հայության, 1909թ.՝ երիտթուրքերի կազմակերպած Ադանայի հայության, 1915-1918թթ.՝ երիտթուրքերի կազմակերպած Հայոց ցեղասպանության, 1918-1923թթ.՝ քեմալականների կազմակերպած հայերի կոտորածները, ինչպես նաև 1918թ.՝ Բաքվի, 1920թ.՝ Շուշիի, 1988-1990թթ.՝ Սումգայիթի և Ադրբեջանի հայության ջարդերն ու կոտորածները: Մարդկության ու հայության դեմ ուղղված այս շարունակական հանցագործությունները՝ մի օր, մի տեղ կարող էին կասեցվել, եթե դատապարտվեր դրանցից գեթ որևէ մեկը...

Ե՛վ Հայոց ցեղասպանության, և՛ մարդկության դեմ իրականացված այլ հանցագործություններ շարունակում են մնալ անթաքույց սպառնալիք, քանի դեռ չեն դատապարտվել: Հայաստանի Հանրապետությունը, որպես ցեղասպանություն ապրած ժողովուրդ ներկայացնող ՄԱԿ-ի անդամ երկիր, ավելի քան, վճռական պետք է լինի մարդկության դեմ ծրագրվող յուրաքանչյուր ոտնձգություն կանխարգելելու, մարդկությանը ու հայությանը, արդ և այսուհետ, ցեղասպանություն կոչվող հանցագործությունից ձերբազատելու խնդրում: Ուստի, Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է այլևս չհապաղել և համաձայն՝ «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915թ. ցեղասպանության դատապարտման մասին ՀԽՍՀ Օրենքի» (22 նոյեմբերի 1988թ.) և 1990թ. օգոստոսի 23-ի Հայաստանի Անկախության Հռչակագրի պահանջի՝ դիմել ՄԱԿ-ի միջազգային դատարան Հայոց ցեղասպանությունը դատապարտելու, հետևանքները վերացնելու, պատմական արդարությունը վերականգնելու, տարածաշրջանում խաղաղության իրական երաշխիքներ ստեղծելու համար:

Հայ-թուրքական հարաբերություններ չկան և չեն էլ կարող լինել: Եղածը մարդկության դեմ կատարված հանցագործություն է, որը հնարավոր չէ լուծել բանակցությունների միջոցով, առավել ևս եթե այդ բանակցություններին մասնակցում են եվրոպական և այլ գերտերություններ: Պատմությունից մենք լավ ծանոթ ենք Հայկական հարցի բոլոր տեսակի շահարկումներին, դրանց աղետալի հետևանքներին՝ նույնպես: Ուստի, և իրավունք ունենք չհավատալու բանակցությունների միջոցով խնդիրները կարգավորելու հայ-թուրքական հարաբերություններով մտահոգ երկրների նոր կոչերին: Առավել ևս, երբ նրանք՝ որպես ՄԱԿ-ի անդամ և 1948թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիա»-ն վավերացրած երկրներ, խուսափում են մարդկությանը սպառնացող խնդիրը միջազգային իրավական հենքով լուծելու, մարդկության դեմ կատարված հանցագործությունը ՄԱԿ-ի միջազգային դատարանի ձեռքով դատապարտելու, հանցագործին պատասխանատվության ենթարկելու միակ օրինական - իրավական ճանապարհից:

«Վերածնունդի համախմբում» Հայրենասիրական կազմակերպություն

«Ուխտ Արարատի», ՀԱՀԳԲ-ի (ԱՍԱԼԱ) ազատամարտիկների և նախկին քաղբանտարկյալների կազմակերպություն

Երևան, 24-ը Ապրիլի, 2009 թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
(ԹԻՎ 7)

Ավստրալիայի Սիդնեյ քաղաքի Մակքուարի համալսարանի դասախոս, այսպես կոչված, հայ-թուրքական երկխոսության խմբի համանախագահ Արմեն Կաքավյանի և նրա ստանձնած գործունեության՝ «Նեմեսիս»-ի և ԱՍԱԼԱ-ի գործողությունների համար թուրքերից ներողություն խնդրելու կապակցությամբ:

Քարոզչական կեղտոտ հնարքների ձեռագրով քաղաքական որոշակի հարցեր լուծելու արատավոր ու դատապարտելի հանցագործություն է սա:

Հայտնի է, որ «Նեմեսիսը» իրականացրեց մարդկության և հայության դեմ հանցագործություն ծրագրած ու իրականացրած երիտթուրքական կառավարության ղեկավար կազմի մահապատիժը: ԱՍԱԼԱ-ն՝ փորձեց հնարավորին կանխարգելել ու պատրաստվել դիմակայության գերտերությունների որդեգրած այն քաղաքականության, որը նպատակ ուներ մարդկության և հայության դեմ իրականացված 20-րդ դարի առաջին հանցագործությունը՝ ցեղասպանությունը, ԽՍՀՄ-ի ու Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականության միջոցով մոռացության մատնելու, անպատժելիության միջազգային մտայնություն ստեղծելու, ըստ այդմ՝ հանցագործներին հովանավորելու ու նոր ցեղասպանություններ հրահրելու:

Մեր նպատակը չէ հիմա պատասխանել հակահայկական ստի ու կեղծիքի նոր քարոզարշավին: Վստահ ենք, որ դա լավագույն ձևով կանեն մեր մտավորականներն ու լրագրողները: Մեր նպատակն է ուշադրություն հրավիրել ուրվագծվող նոր սադրանքի մյուս հիմնական հատկանիշներին:

Այս պատվերը կեղծարարություն է: Հանցագործին արդարացնելու, հանցագործին իբր անմեղ զոհ, իսկ արդարադատություն իրագործողին հանցագործ ներկայացնելու լկտի փորձ: Զուգահեռ թե՛ պատվիրատուն, թե՛ Կաքավյանը, կատարում են ոչ պակաս ծանր հանցագործություն՝ քարոզչություն հօգուտ ցեղասպանության և դա անում են մի յուրօրինակ ինքնավստահությամբ, որը թերևս պայմանավորված է պատվիրատուի չբացահայտվելու և արևմտյան արդարադատությունից պաշտպանված լինելու մտայնությամբ:

Մարդկության դեմ կատարված հանցագործությունը, սակայն, վաղեմության ժամկետ չունի. պատասխանատվության ենթակա են բոլորը՝ ծրագրողը, իրականացնողը, քարոզչություն կատարողը, նաև նրանք, որոնք առ այսօր, սերունդ առ սերունդ, օգտվում են իրենց նախորդների իրականացրած ոճրագործության արյունալի ավարից ու թալանից: Խորհելու և անելու շատ բան ունի արևմտյան ժողովրդավարությունը, մասնավորապես, մարդկության դեմ ծրագրվող նոր հանցագործությունները կանխարգելելու, արդեն իրականացվածն էլ պատժելու և հետևանքները վերացնելու միջոցով՝ աշխարհը խաղաղ համակեցության ու քաղաքակրթական՝ ստեղծագործ զարգացման տանելու անբեկանելի ճանապարհին:

Հայոց արդարադատությունը կարող է Կաքավյանի կյանքը երաշխավորել, եթե ինքը հրապարակավ հրաժարվի պատվերից, ներողություն խնդրի 1915-23թթ. ցեղասպանության զոհերից ու առ այսօր աշխարհով մեկ սփռված նրանց հայրենազուրկ սերունդներից, եթե դիմի իրավապահ մարմիններին հայտնելու իրեն հանցագործության դրդող պատվիրատուի անունը:

«Ուխտ Արարատի», ՀԱՀԳԲ-ի (ԱՍԱԼԱ) ազատամարտիկների և նախկին քաղբանտարկյալների կազմակերպություն

Երևան, 9-ը Փետրվարի, 2009 թ.



ՀԱՐՈՒԹ ԳՅՈՒԼՈՒՋՅԱՆ

1975-1991: Նահատակվել է Պաղեստինում: Երիտասարդ հասակից, զգալով անհայրենիք և գաղթական լինելու դառը ճշմարտությունը, միացավ նորագույն զինյալ ազատագրական պայքարի շարքերին՝ հանուն պատմական արդարության և հայրենիքի վերատիրացման:



ՍՈՒՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1960-1984: Նահատակվել է Իրանում, մարտի 27-ին: ՀԱՀԳԲ-ի զինվորական խմբակները մի քանի ժամվա ընթացքում Թեհրանում իրագործեցին չորս գործողություն, որի ընթացքում սպանվեցին Թուրքիայի դեսպանատան զինվորական կցորդը, առաջին քարտուղարն ու նրա թիկնապահը: Ռումբի վաղաժամ պայթյունի հետևանքով նահատակվեց Սուրիկ Գրիգորյանը: Նրա անունը նորագույն զինյալ ազատագրական պայքարի էջերում կմնա իբրև նվիրումի և զոհողության խորհրդանիշ գալիք սերունդների համար:



ՎԱՐԴԱՆ ՇԻՐՎԱՆՅԱՆ

1957-1985: Նահատակվել է Իրանում: Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում ՀԱՀԳԲ-ի զինվորական պատասխանատուն էր: Կազմակերպել և իրագործել է տասնյակ զինվորական գործողություններ: Ձերբակալվել է 1984թ. մայիսին: Զոհվել է Թեհրանի «Էվին» բանտում:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԱԳՈՒՇՅԱՆ

1951-1988: Նահատակվել է Հունաստանում, ապրիլի 28-ին: ՀԱՀԳԲ-ի հիմնադիրներից և պատասխանատուներից էր: Նրա կազմակերպած գործողությունների շնորհիվ Թուրքիան տարիներ ի վեր դարձել էր հայ մարտիկների հարձակումների թիրախ:

Նա այն հազվադեպ անհատներից էր, որ կարողացավ հայ ժողովրդի համար ամենադժվար պահին պատասխանատվություն ստանձնել և աշխարհին ապացուցել, որ հայ երիտասարդությունն ի զորու է պաշտպանել իր ժողովրդի իրավունքները:

ԱՄԵԼԷ ԹԱՊՈՒՐԷՆ ՄԻՆՉԵՎ ՆԸՃՄԷ–ԱՍՏՂ ՄԱԿՆԻՇԸ ՔԵՌԻՍ 74–ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

Ես յոգնել եմ մանրաքանդակ պաղ խոսքերից,
Լավ է լինել, հմուտ դարբին քան ոսկերիչ:
Պարույր Սևակ

Ֆորտիըմ Համալսարանի մէջ Հայկական ցեղասպանութեան առթիւ կազմակերպուած դասախօսական ձեռնարկին ելոյթ ունեցան Տենիս Փափազեանը, Ռաճըր Սմիթը եւ Էնն Սօրթզմընը համադրութեամբ՝ հոգեբան Անի Գալայճեանի, բոլորն ալ ճանչցուած անձնաւորութիւններ իրենց մասնագիտութեանց մէջ: Միաժամանակ, մրցանակ ու նիւթական պարգեւ ստացան Հայկական ցեղասպանութեան նիւթին շուրջ պրպտումներ կատարած եւ շարադրութիւն գրած, Նիւ Եորքի պետական վարժարաններէն երկրորդական բաժնի երեք աշակերտներ, ձեռամբ՝ հոգեբաններ Սիրուն Շահինեանի:

Աչքարու էր բացակայութիւնը հայ երիտասարդութեան-ուսանողութեան, որուն փոխարէն աթոռները լեցնելու եկած էին թուրք եւ ազերի ուսանողներու պատրաստուած խումբ մը նիւ եորքեան համալսարաններէն, որոնք տարբեր շարքերու աթոռներու վրայ ցիրուցան տեղեր գրաւած էին: Այդքան սպարիչ ելոյթէ ետք, մանաւանդ Փրոֆ.Փափազեանին բացատրութիւններէն ու պատմական տուեալներէ ետք, ուսանողները տակաւին թութակօրէն կը կրկնէին թէ համոզուելու համար փաստեր կ'ուզեն լսել: Անշուշտ, դասախօսները իրենց պարտականութիւնը կատարեցին պատշաճ աղբիւրներու, հեղինակներու անուններ թուելով:

Աւարտին՝ բարեկամաբար մօտեցայ հարց տուող ուսանողներէն մէկուն, որ ըսած էր թէ Քոլումպիա համալսարան կը յաճախէ, և ըսի.

- Կ'արտօնէ՞ք որ հարց մըն ալ ես տամ ձեզի:
- Ինչո՞ւ չէ,- ըսաւ:
- Ձեր մեծ հայրիկը ո՞ւր է հիմա, ըսի:
- Իսթանպուլ կ'ապրի,- ըսաւ:

Իսկ անոր հայրը գիտե՞ս ուր է, եթէ ողջ է: Հապա անո՛ր հայ՞րը: Երիտասարդը բոլորին պատասխանները մէկիկ-մէկիկ տուաւ, քիչ մը անհանգիստ՝ թէ այս հարցադրումները ո՞ւր պիտի հասնէին: Ի վերջոյ աւելցուցի.

Գիտե՞ս իմ սիրտս ինչէն կ'այրի մինչև հիմա: Մեծ հօրմէս անդին չեմ գիտեր: Մեծ հայրս իրենց քաղաքի տեղահանուող կիներէն, երեխաներէն, ծերերէն զատուած այն երիտասարդներէն էր, որոնց թուրք կառավարութիւնը զինաթափ ըրած էր եւ երկաթուղի կառուցելու պատրուակին տակ գերիի պէս կ'աշխատցնէր Ամելէ Թապուր-woring Batallion անուան տակ: Անօթի, ծարաւ, ոջլոտած կմախքի մը պէս, հազիւ, կերպով մը Հալէպ հասած է ու վերապրած: Ամուսնոյս հայրը՝ Նիյտէ Գոնիայի շրջանէն է: Բոլոր հարազատները կորսնցուցած, որբացած, 7-8 տարեկանին ձևով մը ինքզինք Հալէպ գտած է: Իսկ մօրեղբայրս՝ մեծ մայրը Հալէպի մէջ մեռաւ՝ Այնթապի մէջ ունեցած իրենց սեփական կալուածներուն Օսմանեան տառերով գրուած փաստաթուղթերը ձեռքին: Մենք անկէ անդին մեր ընտանեկան ծառին մասին գաղափար չունենք: Ո՞ւր գացին, ո՞ւր կորսուեցան, ո՞ւր են այդ կալուածները: Ինչո՞ւ կորսուեցան: Մենք ալ ա՛յդ պատասխաններուն կը սպասենք:

* * *

Այս մտմտուքներուն մէջ, այս օրերուն Սուրիա տպուած արաբերէն հսկայական աշխատասիրութեան մը վերնագիրը գամուած կը մնայ աչքերուս առաջ - «Հալէպի Հարիւր Առաջինները-Մի'էթ Աուա'էլ Մին Հալապ» - Հեղինակութեամբ՝ պատմագետ Ամէր Ռաշէտ Մուպայատի - (Տար էլ Ղալամ - Հրատ.): Երեք հաստափոր, նկարազարդ հատորներու մէջ նկարագրուած, 1900-2000 թթ. տեղ գրաւած հարիւր անուններու ընդմէջէն երկու հարազատ անուններ իւրայատուկ քնքշութեամբ ինծի կը նային:

Մին մօրենական մեծ հայրս է, քիլիսցի Ուստա Ճիրճին է: Միւսը՝ մօրեղբայրս՝ մեծ հօրս միևուճար որդին, որ մեծ ուրախութիւն պատճառած է գաղթականութենէն անհամար հարազատներ կորսնցուցած մեծ հօրս եւ մեծ մօրս, որոնք իրենց ուսերուն կը զգային կորուստները փոխարինելու եւ Մարտիկեան գերդաստանին անունը շարունակուած տեսնելու անտեսանելի, եւ սակայն շատ լուրջ ու անյետաձգելի պատասխանատուութիւնը:

Մեր մէկ հատիկ քեռին է Յովհաննէս Ճորճ- Ճիրճի Մարտիկեանը: Ուրիշ քեռի չենք ունեցած: Հալէպի գաղթական կեանքէն, թիթեղածածկ խրճիթներէն Նոր Գիւղէն մեծ բակով տունի մը տէր եղած Ճիրճի Տէտէն և Ճէմիլէ Անան, 6 թէ 7 աղջիկէ ետք ունէր-չունէր մէկ հատիկ այս տղան ունէր: Տան երեց աղջիկներէն երկուքը շատ փոքր տարիքէն ամուսնացած ըլլալուն, ան քեռի տիտղոսը ստացած էր իրմէ հազիւ երեք չորս տարի փոքր քրոջ զաւակներէն: Ընտանեկան յուշերու ու զուարճախօսութիւններուն ընդմէջէն անպայմանօրէն տեղ կը գտնեն երէց զարմիկներուս պատմած դրուագները Ճէմիլէ Անային քեռիին վերապահուած հեղինակութեան շուրջ: Մանկական խաղերու ընթացքին երբ հարցը «խօսք քալեցնելու կամ մտիկ ընելու» գար, Ճէմիլէ Անային տիրական, սաստող ձայնը կը լուծէր հարցը, «Քեռիիդ պատասխան մի՛ տար, ըրէ ինչ որ ան կ'ըսէ»: Ո՞վ կրնար համարձակիլ, հակառակիլ այդ վճիռին: Միևուճար էր: Երկնային պարգև ժառանգ մը, շնորհուած, եօթը-ութը տանջալից երկունքէ ետք: Այս տղուն շնորհիւ մարդասպան Թալէաթին պիտի կարենային ըսել թէ Մարտիկեան գերդաստանը թանգարան չէ հասած, միս ու ոսկորով կ'ապրի:

Եւ.... ապրեցան բազմանալով: Անոնց անունը նոյնիսկ պատմութեան անցաւ.... Սուրիոյ դարաշրջանի պատմութիւնը պատմող գիրքին մէջ արձանագրուելով:

Ցնցոտիներով, ոջլոտած, թրքական «Ամելէ Թապուրէն» միմիայն բաբախող սրտով շնչող խլեակ Ճիրճին՝ 1918-ին կը հասնի Հալէպ: Տասնամեակ մը ետք, 1928-ին արդէն նաճճար-ատաղձագործ Ճիրճին է: Մի քանի տարի ետք ալ, «քարիւսորճի» ուստան է, որ յղացած էր - «փոսքան»-ներու կմախքը պատրաստել, ինքնաշարժը բեռնատար ու մարդատար փոքր - մինի պասերու վերածելով: Նոր ճամբորդատարները ձեռնտու էին աւելի մեծ թիւով ճամբորդներ փոխադրելու քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ: Մինչև 50-ական թուականները մեծ հօրս գաղափարը զարգանալով, այլ հայ վարպետներու ալ ներդրումներով մեծ արտադրութեան կը վերածուի, նպաստելով սուրիական ճարտարարուեստին, ինչպէս նաև գնորդներուն, որոնք փոխանակ արտասահմանէն բարձր գիներով ներածելու, իրենց աչքի առաջ պատրաստուած տոկուն ու աժան տեղականը գնել:

Մեծ հայրս 1964-ին մահացաւ: Արդէն քանի մը տարիներէ ի վեր «Ալզայմըր»-ը իր աւերը սկսած էր գործել: Ամէն բան շուտ կը մոռնար, սակայն շատ լաւ կը յիշէր ու կ'երգէր բանակի քայլերգներէն: Անկէ անդին չեմ յիշեր: Կը ցաւիմ, որ մեր ընտանեկան արխիւներուն մէջ ոչ մէկ ձևով արձանագրուած են անոնք: Այդ տարիներու մանրամասնութիւններուն ծանօթ չէի, ու անտեղեակ՝ մեծ հօրս կատարած գործին լրջութենէն: Գիտէի, որ յարգուած վարպետ ատաղձագործ մըն էր: Աղօտ պատկերացումով աչքիս առաջ կու գան «աշակերտ»-ներուն կամ «խալֆէ»-ներուն յարգալից վերաբերմունքը, երբ անոնք ամէն օր Հալէպի Պուսթան Քուլէպ թաղամասէն մինչև Նոր Գիւղ կու գային, փոխն ի փոխ՝ ուստային՝ վարպետին ճաշ տանելու: Ճաշն ալ մի քանի յարկանի պղնձեայ ճաշամանի

մէջ կը դրուէր (մաթպախիէ կ'ըսէինք): Ամէն օր, կէսօրին, երբ դուռը կը զարնուէր, գիտէինք, որ ուստա Ճիրճիին ճաշը տանողն էր: Իսկ մեծ մայրս բծախնդիր ու ճշդապահ արդէն պատրաստած պէտք է ըլլար ճաշամանը, ինծի կամ զարմիկիս երկարելով կ'ըսէր. «Շուտ-շուտ, վազէ՛, տար ճաշը, չպաղած թող հասցնէ.... Աս ալ իրեն տուր...»: Այսինքն՝ բաժին մըն ալ անպայման աշակերտին համար պատրաստուած կ'ըլլար:

Մեծ հօրս հիւանդութեան ու «տունը նստելուն» հետ եկած հասած էր քեռիիս մեծնալու ու ծլարձակելու ժամանակը: Այդ օրերուն ընդունուած էր, որ հազիւ նախակրթարան աւարտած տղաքը շուտ մը արհեստի նետուէին ու աղջիկները հարս ըլլային: Քեռիս ճեզուիթներու (Յիսուսականներու) Նախակրթարանը հազիւ աւարտած «թոռնոճի»-խառատագործութիւն կը սկսի սորվիլ, մէկ կողմ ծրարելով ուսուցիչներուն նախատեսութիւնը, թէ ան փայլուն ուսանող էր ու բարձրագոյն ուսման պէտք էր հետեւեր: Ընտանիքին հոգերը առաջ կու գային: Անհանդարտ, անդուլ պրպտող, անյագ ընթերցող երիտասարդ մը դարձած Յովհաննէսը իրեն երկրորդ դպրոց դարձուցած էր Ծառուկեանի «Նայիրի» շաբաթաթերթը հաւատարմօրէն, բառ առ բառ, կը կարդար ու մեզի ալ կուտար որ որոշ պարբերութիւներ բարձրաձայն կարդանք իրեն համար ու թուրքերէնի թարգմանելով մասնակից կը դարձնէր մեծ հօրս կամ մեծ մօրս: «Բախ հէլէ նէ կուզէ եազըմը՞ղ. - Դես, ինչ լաւ գրած է...»: Յովհաննէս քեռին վարպետ խառատագործ մը ըլլալով մէկտեղ արհեստին սեւ ու մուրէն դուրս, սկսաւ տեսնել ազգային կեանքի նուիրման յստակ ուղին, հոգին «Նայիրի»-ով կռփելով մշակութապէս եւ հայրենասէր գաղափարով:

Իր հինգ քոյրերուն 20 զաւակներէն իւրաքանչիւրը իւրայատուկ յիշատակներ ունի իրմէ: Յովհաննէս քեռին մօրմէն ժառանգ մնացած հովանաւորի հեղինակաւոր դերը լրջօրէն ընդունելով, նոյնիսկ մեր զաւակներուն ալ քեռիութիւն ըրած է, որոնց մասին առանձին էջեր կարելի է լեցնել:

Այսօր, թերթատելով դարաշրջանի հարիւր առաջիններուն ցանկը չեմ կրնար հիացումս ու յուզումս զսպել մեծ հօրմէս ետք քեռիիս անունը կարդալով: 70-ականներուն Յովհաննէս Մարտիկեան գաղափարը կը յղանայ Հալէպի մէջ կառուցելու և արտադրելու շինարարութեան համար սիմէնթ և աւազ խառնող մեքենաներ: Առանց բարձրագոյն վկայականներու, իր նախածեռնութեամբ ու ճակտին քրտինքով, Սուրիոյ ճարտարարուեստի ճակատը բարձրացուցին իր «ՃԷՊԷՆԷԹ ՆԸՆՄԷ-Աստղ» մակնիշը կրող սիմէնթ խառնող վերամբարձ եւ այլ շինարական մեքենաները: Սուրիական պետութեան մակարդակով, երկրագործական թէ արհեստագործակցական Նախարարութիւններէն բազում գնահատագրերու ու մրցանակներու արժանացած է իր արտադրութիւնը: Հունգարական պետական դասընթացքներու հետեւելով ստացած է նաեւ իր ճիւղին վերաբերեալ վկայագիր մը բարձր գնահատանքներով: Այս բոլորին հետ, իր բարեկեցիկ պայմաններուն մէջ ամէնէն ուշագրաւը իր առատաձեռնութիւնն է եղած: Հայրենիքէն, Արցախ, կամ թէ տեղական որեւէ ազգային, բարեսիրական թէ մշակոյթային հաստատութեան ակնկալութիւնը միշ՛տ ալ գոհացուցած է իր ուժերուն չափով, երբեմն ալ նոյնիսկ աւելիով: Միշտ իր կողքին նեցուկ ունեցած է մեր բոլորին սիրելի «Հարս Քոյրիկը»՝ Հալէպի Ալէփփօ քոլէճէն շրջանաւարտ, Ալիս Պէրպերեան-Մարտիկեանը, նախակրթարանի իմ թուաբանութեան ու անգլերէնի լեզուի ուսուցչուհիս:

Ինչ՞ւ այս բոլորը կը տողանցեն այսօր: Հատկապէս Ապրիլի՛ն: Այսօր, որպէս գիւտարարներ սուրիական դարաշրջանի պատմութեան մէջ կը փայլին 94 տարի առաջ հրաշքով Հալէպ հասած, ցորենի հին տոպրակ մը հագած Եղեռնէն վերապրած մեծ հայրս ու անոր յաջորդը՝ իր միևուճար որդն, վարպետ Օհաննէսը:

Մեծ հօրս ծննդեան ամիսն ու տարին չեմ գիտեր, Հալէպա հասած է 1918-ին, ու մահացած՝ 1964-ի Ապրիլին, երբ Լազար Նաճարեանի աշակերտ էի ու կը պատրաստուէինք դպրոցով Ապրիլ 24 յիշատակել: Քեռիս ծնած է Ապրիլ ամսուն 17-ին 1935-ին: Այս օրերուն երբ ամենուրէք 94-ամեայ տարելիցին կը պատրաստուէինք ու կը թուարկենք մեր կորուստները, փաստերով ողողուած արխիւները անբաւարար կը գտնեն թուրք երիտասարդներն ու իրենց ետին կեցող պատկան իշխանութիւնները, աւելին՝ մե՛զ ոճրագործ դարձնել կ'ուզեն: Մեր սրտերը կը մղկտան, հազար ու մէկ ափսոսանքով մեզմէ խլուած անվերադարձ ժառանգութիւններուն, մշակոյթի հարստութիւններուն ի հաշիւ, որոնք մեր շինարար ձեռքերով ու նորարար ուղեղներով կրնային ծաղկիլ և ուռճանալ իրենց ծննդավայրերուն մէջ եւ այլուր միաժամանակ՝ մեր կորուստներուն հետ չենք կրնար չանդրադառնալ նաեւ ապրելու ու գոյատեւելու մղձաւանջով երկրագունդին վրայ ցիրուցան մեր հայրենակիցներէն հոս- հոն փայլատակող աստղերը մեր ազգին: Տարբեր երկիրներու երկինքներու տակ, զանազան ազգերու յիշատակարաններուն մէջ իրենց ներդրումներուն համար երախտագիտութեամբ յիշուողները:

Վստահ եմ, որ այս Ապրիլին եւ գալիք Ապրիլներուն Հալէպի հողը մեծ հօրս վրայ քիչ մը աւելի թեթեւ պիտիի ճնշէ, որովհետեւ Մարտիկեան անունը կ'ապրի Սուրիական դարաշրջանի մը պատմութեան գրքին ընդմէջէն: Իսկ իր ընտանեկան ծառը կանաչազարդուած կը շարունակուի - 26 թոռնիկներով, 51 թոռնորդիներով և 7 ծոռներով: Գիտեմ նաեւ որ Ճիրճի Տէտէն և Ճէմիլէ Անան ալ մեզի տետ այսօր խաղաղ կը ժպտին, ու մեզի ձայնակցելով բարի տարեդարձ կը մաղթեն իրենց միևուճարին, մեր բոլորին քերի Յովհաննէս Ճօրճ Մարտիկեանին: Նաեւ պատմական իրականութիւնը այն է, որ քեռի Մարտիկը արհեստի ստեղծագործութիւններով, նահատակուած Հայերու վրէժը լուծած եղաւ անգութ եւ հրէշատիպ թալէաքներէն:

* * *

Դառնալով թուրք երիտասարդին՝ դարձեա՛լ հարց կուտամ.

- Ըսէ՝ հիմա, ի՞նչ գործ ունէիք մենք հոս, Քիլիսի, Այնթապի, Գոնիայի, Նիյտէյի, Ալէքսանդրէթ-Սանճաքի պապենական մեր տուները թողած: Ի՞նչ գործ ունին ցիրուցան իմ հարազատները, քիչ մը հոս, քիչ մը հոն, նոր տուներ պատած, Միջին Արեւելքէն, Ֆրանսա, մինչեւ Միացեալ Նահանգներ կամ Հարաւային Ամերիկաները ցրուած՝ արաբախօս, ֆրանսախօս, անգլիախօս, սպանախօս զարմիկներս իմ:

ԶԱՐՄԻՆԷ ՊՕՂՈՍԵԱՆ

Նիւ Եորք - Հալէպ, 17 Մարտ, 2009թ.

«Ուխտ Արարատի» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է Յովհաննես Մարտիկյանի տարեդարձը, մաղթում նրան քաջառողջություն և երկար տարիների կյանք:

Թուրքիան պետք է առավել ակտիվ դեր կատարի Մերձավոր Արևելքում ու Բալկաններում

«Թուրքիան պետք է առավել ակտիվ դեր կատարի Մերձավոր Արևելքում ու Բալկաններում, սակայն նրա հարաբերությունները Արևմուտքի հետ նախկինի պես առաջնային են լինելու»,- այս մասին հայտարարել է Թուրքիայի նոր արտգործնախարար **Ահմեդ Դավուդօղլուն**: Նրա խոսքերով, Թուրքիան պետք է ստանձնի այնպիսի երկրի դեր, որն ազդում է **Մերձավոր Արևելքի, Բալկանների եւ Կովկասի** քաղաքականության վրա: «Թուրքիան այն երկիրը չէ, որը լոկ արձագանքում է ճգնաժամերին, այն պետք է արդյունավետ կերպով կանխի դրանք: Դա վերաբերում է նաև Թուրքիային դերին ՆԱՏՕ-ում, միջնորդական ջանքերին Իսրայելի ու արաբական երկրների միջև, Կովկասի հակամարտությունների հանգուցալուծմանը»,-ասել է Դավուդօղլուն՝ հավելելով, որ ԵՄ-ն ու ՆԱՏՕ-ն անվտանգության և կայունության միջև հավասարակշռության հաստատման քաղաքականության առավել կարևոր օղակներն են, գրում է «Հյուրիեթ դեյլի նյուսը»: **/PanARMENIAN.Net/ 02.05.2009թ.**

Ա Դ Ա Ն Ա

Դաշտային Կիլիկիայում՝ Սարոս (Սիհուն) գետի աջ ափին է գտնվում Ադանայի նահանգի վարչական կենտրոնը՝ Ադանա քաղաքը: Այն պատմագրության մեջ հիշատակվում է մ.թ.ա. 5-րդ դարից և այդ ժամանակներից սկսած համարվել է քաջածանոթ, անվանի ու վաճառաշահ քաղաք:

Ադանայի անվան ծագման մասին շատ առասպելներ ու պատումներ են ստեղծվել. ոմանք այն բխեցնում են Ադամի անունից, ոմանք գտնում են, որ «Ադանա» պուներեն (փյունիկերեն) նշանակում է «ուռենի»՝ հաշվի առնելով Սարոս գետի ստորին հոսանքում ուռենիների լայն տարածումը: Ադանայի մասին բազմաթիվ հիշատակություններ ունեն հույն, հայ, արաբ ու թուրք գիտնականներն ու եվրոպացի ճանապարհորդները: Առաջին անգամ այն հիշատակվել է Քսենոֆոնի «Նահանջ բյուրաց»-ում, ապա՝ հռոմեական աղբյուրներում՝ կապված Հռոմի դեմ Միհրդատ Եվպատորի մղած պատերազմի հետ: Մ.թ.ա. 3-2-րդ դարերում Ադանան եղել է հելլենիստական մշակույթի կենտրոն: Հռոմեական տիրապետության ժամանակ՝ մ. թ. 1-4-րդ դարերում, վերածվել է զորակայանի: Այս ժամանակաշրջանում մշակութային կյանքն այստեղ զգալիորեն անկում է ապրել: Քաղաքը որոշ չափով կառուցապատվել և բարեկործվել է Բյուզանդիայի Հուստինիանոս 1-ին կայսեր օրոք (527-565): Տակավին կանգուն է 4-րդ դարում Սարոս գետի վրա կառուցված քարաշեն կամուրջը:

Բյուզանդա-արաբական պատերազմների ժամանակ Ադանան ենթարկվել է ասպատակության և ավերածության: 10-դ դարի կեսերին Ադանան հայտնի վաճառաշահ քաղաք է եղել, որն իր նշանակությունը պահպանել է նաև Կիլիկիայի հայկական թագավորության շրջանում: 11-րդ դարում Ադանայում գերակշռել է հայ բնակչությունը: Նույն դարավերջին Ադանայի տերն է եղել Հեթումյանների տան հիմնադիր, գանձակեցի իշխան Օշինը (խաչակիրների պատմիչներն իրենց հիշատակություններում նաև խոսում են ամուր պարսպապատ, աշտարակներով զորեղ, բազմամարդ ու հարուստ Ադանայի մասին): 12-14-րդ դարերում Ադանան մտել է Կիլիկիայի հայկական թագավորության կազմի մեջ: 14-րդ երկրորդ կեսից փոխառփոխ ընկել է թուրքական զանազան ցեղերի և եգիպտացիների իշխանության տակ: 1575թ. գրավվել է օսմանյան թուրքերի կողմից:

20-րդ դարի սկզբին Ադանան ուներ շուրջ 45.000 բնակիչ, որից 12.600-ը՝ հայեր: Հայերն օսմանյան տիրապետության 300 տարիների ընացքում դարձել էին թրքախոս: Բազմաթիվ հայկական դպրոցների բացումով այստեղ սկսել է վերակենդանանալ հայոց լեզուն: Ադանայի հայերը զբաղվել են արհեստներով, առևտրով և գյուղատնտեսությամբ: Նրանք ունեին թատրոն, հիվանդանոցներ, վարժարաններ (Աբգարյան, Աշխենյան, Արամյան), եկեղեցիներ՝ (Սբ. Աստվածածին, Սբ. Ստեփանոս, Սբ. Մինաս), միջնաբերդում՝ Համբերդ կամ Անհամբեր, Սբ. Մորոթու (հավանաբար ասորական), որոնց կից գործել են դպրոցներ և տպարաններ:

19-րդ դարի վերջին՝ հայկական կոտորածների ժամանակ, Կիլիկիայի հայերի ինքնապաշտպանության մարտերի շնորհիվ, նրանց վիճակը 20-րդ դարի սկզբին համեմատաբար բարվոք էր: Աբդուլ Համիդ 2-րդի տապալումից և Սահմանադրության հռչակումից (1908) դժգոհ թուրքական հետադիմական ուժերը սկսել էին Կիլիկիայի հայերին ամբաստանել՝ որպես «հուրիեթը» (սահմանադրական կարգերը) բերողների, որոնք իբր ձգտում էին թուրքերից խլել իշխանությունը և վերականգնել «Հայկական թագավորությունը»:

1909-ի մարտի 31-ին Ադանայի նահանգային խորհրդի նիստը՝ վալիի նախագահությամբ ընդունել է հայերին ոչնչացնելու որոշում: Գավառներ են ուղարկվել հայերի ջարդը սկսելու գաղտնի հրահանգներ: Կոտորածի նախօրեին տեղի կառավարությունը զինել է մահմեդականներին, բանտերից ազատ է արձակել 500 ոճրագործի: Թուրք մոլեռանդ խուժանը, ապրիլի 1-4-ը լցվելով Ադանա, կոտորել է հազարավոր հայերի: Օրեր անց Ադանայում կարգուկանոնը «վերականգնելու» պատրվակով Արևելյան Թրակիայից բերված երիթուրքական զորքերը մասնակից են եղել երկրորդ առավել բարբարոսական և արյունահեղ ջարդերին՝ ապրիլի 12-14-ը նոր ուժով բորբոքել են կոտորածները, որոնք իրենց ընդգրկումով և դաժանությամբ գերազանցել են նախորդին:

Ջարդերին գործուն մասնակցություն են ունեցել կանոնավոր զորքերը: Կոտորածներ են տեղի ունեցել Ադանայի նահանգի բոլոր գավառներում և Հալեպի նահանգի հայաբնակ վայրերում: Կոտորվել է մոտ 30.000 անզեն հայ, որոնցից ավելի քան 20.000՝ Ադանայի նահանգում: Ավերվել ու հրկիզվել են տասնյակ հայաբնակ քաղաքներ ու գյուղեր: Իսկ Հաճընում, Սսում, Զեյթունում, Շեյխ-Մուրատում, Դյորթ Յոլում հայերը կազմակերպել են ինքնապաշտպանություն, հետ մղել ջարդարարների հարձակումները և փրկվել կոտորածներից:

Երիտթուրքերը, պատասխանատվությունից խուսափելու և միջազգային հասարակության կարծիքը մոլորեցնելու նպատակով, ձևական հետաքննություն են սկսել. սակայն ջարդերի կազմակերպիչներն ու պատասխանատուները մնացել են անպատիժ:

1915-ի Մեծ եղեռնի ժամանակ Ադանայի նահանգում կոտորվել ու տեղահանվել է 37 հազար հայ (ըստ Լեփսիուսի): Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ Կիլիկիան ֆրանսիացիներին հանձնեցին, հայերի մի մասը վերադարձավ տուն:

1920-ի օգոստոսի 4-ին Մ. Տատամյանի գլխավորությամբ հռչակվել է Հայկական Կիլիկիայի անկախությունը, որը, սակայն, ձևական բնույթ ունեցել: Շուտով ֆրանսիական զինվորական իշխանությունները Ադանան և ամբողջ Հայկական Կիլիկիան հանձնեցին քեմալական Թուրքիային, և Ադանայի հայերի մեծ մասը հարկադրված գաղթել է Սիրիա, Լիբանան, Հունաստան և այլ երկրներ:

ՋԵՄՄԱ ԲԱՂԴԱԴՅԱՆ

Գրականություն

1. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ա-Դ:
2. Հ. Միքայէլ Վ. Յովհաննէսեան, Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները, Վենետիկ, 1970:

Կարսի պայմանագրի հետևանքների ճանաչումը Հայաստանի Սահմանադրության խախտում կլինի

Վերջին շրջանում թուրքական լրատվամիջոցները հետևողականորեն լուրեր են տարածում Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից Կարսի պայմանագրի ճանաչման կամ նախկին խորհրդա-թուրքական սահմանի հայաստանյան հատվածը որպես հայ-թուրքական սահման ճանաչելու վերաբերյալ: Ներկայումս Ախուրյան և Արաքս գետերով անցնող բաժանարար գիծը չունի հայ-թուրքական պետական սահմանի կարգավիճակ, քանի որ չկա դրա վերաբերյալ որևէ օրինականորեն ուժի մեջ մտած և գործող միջազգային պայմանագիր: Այդ մասին հաղորդել է «Մոդուս Վիվենդի» հասարակագիտական կենտրոնի ղեկավար, պատմաբան **Արա Պապյանը**:

«Ենթադրենք, ՀՀ իշխանությունները այս կամ այն ձևակերպմամբ ներկայումս de facto բաժանարար գծին տալիս են de jure միջպետական սահմանի կարգավիճակ: Ինչքանո՞վ այն կլինի օրինական՝ միջազգային իրավունքի և սահմանադրական իրավունքի տեսանկյուններից»,- նշում է հայ պատմաբանը: Նրա խոսքով, հայ-թուրքական սահմանը, բնականաբար նկատի ունեմ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև գոյություն ունեցող միակ de jure սահմանը՝ այսինքն վիլսոնյան սահմանը, չի հաստատվել երկկողմ պայմանագրով, որպեսզի հնարավոր լիներ այն բեկանել կամ փոփոխության ենթարկել միայն երկու կողմերի համաձայնությամբ: **/PanARMENIAN.Net/** 04.05.2009թ.



ԱՅԳԱԲԱՑ

Զարթնել եմ կանուխ, կանգնել մեր բակում,
Նոր բացվող օրն եմ ես դիմավորում,
Պահն այս չքնաղ է ու շատ հիասքանչ
Ու լսում եմ ես զիլ աքլորականչ:

Ահա, հորիզոնն իր գույնը փոխեց,
Ծագող արևից նա շառագունեց,
Չորս կողմը դաձավ պարզ ու լուսավոր,
Նայում եմ, հրճվում, զգում թևավոր:

Ուզում եմ ճախրել երկնքում լազուր,
Բոլորին հայտնել որպես բարի լուր.
Հայոց երկնքում նոր լույս է բացվել,
Հայոց ոգին է նորից արթնացել:

Ով բարձր այրեր, նստած վերևում,
Մի՞թե չեք տեսնում ինչ է կատարվում,
Ազգը գնում է դեպի կործանում,
Մի նոր եղեռն է ազգին սպառնում:

Մարդիկ դիմում են դեսպանատներ,
Ծախում են իրենց նախկին շեն տներ,
Թողնում են երկիրն, անդարձ հեռանում,
Օտարության մեջ կարոտից մեռնում:

Այժմ հայրենին կիսով դատարկվել,
Մեր ունեցվածքը օտարին ծախվել,
Դարձել ենք գերի օտար տերերին,
Վախով ենք նայում մեր ապագային:

Մեզանից էլ հին ազգեր շատ քիչ կան,
Մեզանից խելոք, համարյա չկան,
Ի՞նչն է պատճառը, որ մենք տարաժամ,
Ապրում ենք այսպես խորը ճգնաժամ:

Ժամանակն է, որ քնից արթնանանք,
Ամբողջ աշխարհին նորից մենք ցույց տանք,
Որ ազգ ենք մենք հին ու շատ խելացի,
Մեզ պետք չի ոչ մի «օտար» երկրացի:

Աշխարհասփյուռ հայեր միացե՛ք,
Փլուզված երկրին նորից տեր դարձե՛ք,
Որ ապրի հայը ճոխ ու բախտավո,
Միայն դրան է նա արժանավոր:

ԼԵՌԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Արարատ լեռան հայացքի ներքո,
Կանգնել, խորհում եմ՝ սիրտս լի վերքով.
Ամեն անգամ նրան նայելիս
Խոր վիշտ եմ ապրում ու ներքուստ լալիս:

Մեկ-մեկ էլ հանկարծ ինձ հարց եմ տալիս՝
Ախր, Աստված ինչպես թույլ տվեց,
Որ այդ անիծված վայրենի թուրքը
Մնա, վայելի մեր մալն ու մուլքը:

Հարամ է նրան մեր հողը սրբածին,
Վկա է Աստծո որդին միածին,
Գալու է օրը մեծ դատաստանի,
Տեսնենք, թե թուրքը ինչ պիտի անի:

Արարատ լեռը հին բիբլիական,
Դարձել էր անխոս եղեռնի վկան,
Այժմ իր տեսքով մեզ ոգեկոչում,
Ջոհերի արյան գինն է պահանջում:

«Իմ մեջ ամփոփված տապանը վկա,
Հավատում եմ, որ հայը պետք է գա,
Ու կանգնի տիրոջ իր իրավունքով,
Համայն հայության միաբան կամքով:

Պետք է նա բռնի թուրքի կոկորդից,
Ազատի հողը գարշ անարգանքից:
Հազար ողորմի անմեղ զոհերին,
Ամոթ, նախատինք անարգ թուրքերին

Իմ այս պատգամը եթե որ չանեք,
Դուք ինձ նայելու իրավունք չունեք»:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչն է անցողիկ, ի՞նչն է մնայուն,
Միտք եմ անում, միտք ու չեմ հասկանում,
Սարեր ու ձորեր, չքնաղ բնություն,
Միշտ էլ կմնա հանց հավերժություն:

Երկնային մարմին, Արև ու Լուսին,
Նրանք չեն լինի երբեք միասին,
Բայց միշտ եղել են, կան ու կմնան,
Տիեզերքում այս մեծ ու անսահման:

Մարդը ի ծնե՝ առաջին օրից,
Չի կարող փախչել ճակատագրից,
Շատերն են եկել, գնացել անդարձ,
Ու մենք լավ գիտենք՝ չկա վերադարձ:

Ու՞ր եք դուք հիմա, ո՛վ մեծ քերթողներ,
Ու զարմանալի գյուտ հնարողներ,
Անցել եք, չկաք, մնացել եք հուշ,
Օրերն են հիշվում՝ դառը, թե անուշ:

Թողել եք գործեր մեծ ու հանճարեղ,
Ապրել եք կյանքով լի ու փառահեղ,
Սիրել եք, ատել, եղել փառասեր,
Բայց անգութ մահը ձեզ էլ է հասել:

Լինես դու աղքատ կամ թե թագավոր,
Մի կյանք ունես դու ժամանակավոր,
Բարիքներ արա՝ դու հազար ու մի,
Որ քեզ հիշելիս միշտ տան ողորմի:

Ադանա 1909թ.

Ադանայի հարուստ հայ սեփականատերերի
խանութների և տների ավերակները

Ադանայի հայկական դպրոցի
ավերակները



Ադանայի հայկական եկեղեցու
ավերակները



Ադանայի հայկական կաթոլիկ եկեղեցու և
վարժարանի ավերակներից մի հատված

Լուսանկարները՝ Հայոց ցեղասպանության
թանգարան-ինստիտուտի կայքէջից
www. genocide-museum.am